



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2605

84
\$-71

Մուկըն
1863

ՎԻՃԵԼՄ-ԹԵԼ

ԿԱՐ

ՀԵԼՈՒԵՏԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

ԲԻՆԱՏԵՂԹԱԿԱՆ ՅՈՐԴԱԿԱՆ ՓԼՈՐԻԱՆԻ.

ԵԶԻՑԵՍԻԲԱԾ ԹԵՐԴՄԵՆԱԽԹԵԱՐԲ

ԳԱՂՎԱԿԱՆ ԼԵԶՈՒՔԻՑ:

W. 2744a / dec 19

2003

ՄՈՍԿՎԱ.

—
1863.

9-71

84-3 " /
8-71

ՎԻԼԵԼՄ-ԹԵԼ

ԿԱՄ

ՀԵԼՈՒԵՏԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

ԲԱԴԱՍԵՎԱ, ՊԵՂԱՆ ՅՈՐԻՆՈՒՅՆ ԳԼՈԲԻԱՆԻ.

ԱԶԽՈԲԵՍԻԲԱԺ ԹԵՐԴԻՄԵՆԱԻԹԵԱՄԲ

ԳԱԴՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՑ:

0102
41/392

ՄԱՍԿՎԱ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ԼԵԶՈՒՆԻ ՃԵՄԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԼԵԶՈՒՑ:

1863

259 - 12

9

ДО-УДАЧИ

ЗАЩИЩЕННО - 1861 ГОД

9
8
7
6
5
4
3
2
1

Одобрено Цензурой. С.-Петербургъ. 11 Сентября 1861 г.

Цензоръ С. Загибенинъ.

ԱՅՍ ՓՈՔՐԻԿ աշխատասիրութիւնը նուիրելով իմ ըն-
թերցասեր հայրենակիցներին, խողըում իմ նոցա ներողամտու-
թիւնը դէպի սորա պակասութիւնները։ Նեղինակութեան կո-
չումն ես չիմ զգում իմ մէջ, ուստի և ոչ առիթ մի ունիմկամ
իրաւունք երախտիք համարելոյ այդ չնչին վաստակը։ իմ դը-
դիչը սորա թարգմանութեան մասին եղել է այս երջանիկ զգա-
յակցութիւնը, որ շարժվեցաւ իմ մէջ այդ զրբուկի ընթերց-
ման ժամանակը։ Վիակ և իրաւացի վարձատրութիւն կ'հա-
մարեի աշխատանացս, եթէ հայրենակիցքս սորա ընթերցման
մէջ անցուցած ժամերը կորուսած չեն համարել։

Մ. Բուդաղեանց։

ՎԻԼՇԵԼՄ-ԹԷԼ

Բարեկամք աղատութեան, վեհ անձինք, մատաղ հոգիք,
դուք, որ կարէք մեռանիլ ձեր անկախութեան համար, որք ձեր
կեանիքը չէք խնայիլ ձեր եղբարց համար, ականջ դրէք իմ ձայ-
նին, եկէք, տեսէք՝ թէ որպէս մի միայն մարդ, ծնված ամայի
երկրում, այնպիսի աղջի մէջ, որ իշխանների հարստահարու-
թենէն Ճնշված կորացած էր, իւր արիութիւնով կարողացաւ
այդ տառապեալ աղջը ոտն կանգնեցնել, նորան մի նոր կեանք
տալ և հասկացնել վերջապէս այն սրբազն իրաւունքը՝ որ բը-
նութիւնը մարդոյ մէջ յայտնել էր, բայց աղիտութիւնը և բը-
նակալութիւնը երկար ժամանակ ծածկել էին։ Այդ մարդը,
բնութեան որդին, քարոզեց իւր աղջին բնական օրէնք, այսին-
քըն՝ աղատութեան իրաւունք, հագաւ իւր ղէնքը այդ աղա-
տութիւնը պաշտպանելոց համար, զարթեցրուց իւր աղջակից-
ներին, որք երկաթի իշխանութեան տակ Ճնշված էին, տուաւ
նոցա ձեռը արօրի երկաթը՝ որ ինքը քաջերի թուր էր շնոր,
յաղթեց, ցիրուցան արեց այն բազմաթիւ զօրքը՝ որ նորադէմ
ժողովի էր բռնաւոր իշխանութիւնը և այնպիսի բարբարո-
սական ժամանակում, համարեան անբնակ սարերի վերայ, կա-
րողացաւ հիմնել մի առանձին քաղաքականութիւն, ուր փայ-

լում էին իմաստութիւնը և առաքինութիւնը, այդ երկու մը-
լսիթարիչքը աշխարհի:

Ես քեզ չեմ կանչում ինձ օգնել, ով երկնային բանաս-
տեղծութիւն, թէև երեխայութեանս ժամանակում քո սիրով
վառված էի. չեմ կանչում քեզ, որոյ փայլուն սուտերը երբեմն
իմ երջանկութիւնս էին. պահպանիր քո կեղծուպատիր գրիչը
այն քաջերի համար, որոց պատկերագրութեանը հարկաւոր է
քեզնով գեղեցկանալ. քո զարդարանքը կ'տգեղացնեն նորան,
որին ևս պիտի գովեմ. քո ծաղկանց պասկը պատշաճ չէ նորա
խոժոռ կերպարանքին, նորա պարզ, բայց ահարկու հայեցուա-
ծը կ'կակղանայ քո առաջեւ, վախիր մօտենալ նորա վայրի փառ-
քին, թող իրան նորա կոպիտ հագուստը, թող իրան նորա
նետաղեղը, թող մենակ անցանէ բարձր սարեր, հեղեղների ա-
փեր, զնա դու նորա քամակէն, նայիր և քո դողդոջուն ձեռ-
նով վայրենի ծաղկունք սկոթիր նորա անցած ճանապարհի վե-
րայ:

Հին Հելուետիայի մէջ, այն երկրում՝ որոյ բնակիչք հըռ-
շակիտած էին իւրեանց քաջութիւնով, երեք նահանգ՝ ամրա-
ցած անմերձենալի սարերի նեղ շրջապատի մէջ, այն միամիտ
բարքն էին պահպանել, որ Արարիչն աշխարհի ՚ի սկզբանէ տուել
էր ամենայն մարդկանց, մոլութենէ ազատ լինելոյ համար: Աշ-
խատասիրութիւնը, չափաւորութիւնը, պարզամտութիւնը,
պարկեշտութիւնը և այլ ամենայն առաքինութիւններ, որ բըռ-
նականները հալածում էին, եկած թագուցված էին այդ սարերի
քամակում, երկար ժամանակ այլոց անծանօթ էին սոքա, բայց
և ոչ ոք երբեք չէր դանդասում իւր երջանիկ միայնակութե-
նէն՝ որ ազատորէն վայելում էին:

Այս օրերէն սկսած՝ իւրաքանչիւր խոհեմ անձն, իւրա-
քանչիւր քաջ մարդ, միշտ յարդանօք էր յիշում երեք նա-
հանգների անունը, որ է՝ Ուրի, Շուայց և Ունթերվալդ: Առ-

ցա բնակիչքը անդադար աշխատելով իւրեանց դաշտերում, հաղարաւոր տարիների մէջ, հրաժարված էին այն մեղքերէն, այն թշվառութիւններէն՝ որք բղխում էին պատուասիրութենէ, կռուէ և այլ մեղապարտ ցնորդներէ, որովք շատ բարբարոս ազգէրի առաջնորդներ, Հռովմայեցւոց թագաւորութեան աւերակների վերայ հիմնեցին այլեայլ տէրութիւններ, յափրշտակեցին մարդկային իրաւունքը և կառավարեցին այն սարսափելի օրէնքներով, որ տգիտութիւնը կարգել սահմաննելէր բըռնաւորութեան և աւելորդապաշտութեան օդտի համար:

Աշխարհի բոնակալները ոչինչ էին համարում Ուրիի երկրագործներին և հովիւններին, իսկ սոքա, թէև կայսերաց իշխանութեան ներքոյ էին, բայց դեռ ևս պահպանում էին իւրեանց ազատ անունը, դեռ ևս վարվում էին իւրեանց նախնեաց օրէնքներով, իւրեանց հասարակութիւնով և իւրեանց խստակրօն բարքով։ Գերդաստանի հայրը՝ որ անվրդով և ինքնիշխան տէր էր իւր խաղաղ խրճիթում, անդորրութեամբ համառմեր խորին ծերութեան, սիրոյ և պատույ մէջ։ Նորա զաւակները չարը չգիտելով, իւրեանց ստեղծողէն երկնչելով և ծնողներէն ամաչելով, այլ բաղդ, այլ ցանկութիւն, այլ յոյս չունէին, բայց միայն նման լինել այն բարի մարդկանց, ումէ իւրեանց կեանքը ստացել էին. նոցա հնազանդելը, նոցանէ օրինակ առնելը, բոլոր իւրեանց կեանքի նպատակն էր։ Այդ մաքուր և առաքինասէր ազգը՝ որ այլ երկիրների անձանօթ էր, բնութեան հետ առանձնացած, չափաւորութեան մէջ մնված՝ ունէր իւր համար ամենայն բարութիւններ և ոչնչով դեռ ևս պատժված էր։

Արդօրք ծովակի և նոյն անունով քաղաքի մօտ մի բարձր սար կար, սորա վերայէն վաստակած ճանապարհորդը կարէր անսել իւր աչաց առաջեւ շատ ձորիր և նոցա մէջ տեղ տեղ այլ ապառաժու սարեր, արագընթաց աղբիւրներ և հեղեղներ՝ որք

Երբեմն բարձրութենէ անկանելով գաղաթանց վերայէն թռչում էին, երբեմն օձի նման սողալով երկրի վերայ, իջանում էին ձորերը, խառնվում էին միմեանց հետ և ոռոգանելով մարդագետինքը՝ որոց վերայ արածում էին բաղմատեսակ խաշինք, գալիս էին, անկանում էին յստակ լծերը, ուր և եղները սովորաբար լուացվում էին:

Յիշեալ բարձր սարի վերայ մի աղքատ խրճիթ կար՝ շուրջ պատված փոքրիկ ազարակով, այգիով և պարտիզով. մի քաջ մարդ՝ որ գեռ ևս ինքն իրան լաւ չեր ճանաչում, որ իւր սրտում զգում էր միայն իւր երկրի սերը, քսանամեայ հասակում իւր հօրէն ստացել էր այդ տունը ժառանգութիւն. այդ մարդը ՎԻԼՀԵԼՄ-ԹԷԼՆ էր: Աորա հայրը իւր յետին շունչը աւանդելոյ ժամանակը, այսպէս էր խօսել իւր որդւոյ հետ՝ «Որդեակ իմ, վաթսուն և հինգ տարի ևս աշխատել եմ և ապրել եմ այս խաղաղ տան մէջ. մոլութիւնը կամ չարութիւնը չեն համարձակվել անցանել իմ տանս շեմքը այսրան տարիների մէջ. ոչ մի գիշեր, խղճմանքի տագնապը չէ կարողացել իմ քունս շփոթել: Որդի, դու ևս ինձ նման ընտրիր քեզ համար մի խելօք կին, որոյ սերը, հաւատարմութիւնը, քաղցը և հեղահամբոյր մարդասիրութիւնը կարող են կրկնապատկելքո անմեղ զուարձութիւնները և կէսով չափ թեթևացնել քո աշխատանքը: Վամուսնացիր իմ պատուական ՎԻԼՀԵԼՄ. զիտես՝ առարինի մարդը, եթէ կին չունի, կէսով միայն է առարինի: Վնաս բարեաւ, որդի, չափաւորիր քո կսկիծը և իմացիր որ մեռանելը հեշտ է բարի մարդկանց համար: Վիտդ է, երբ ևս կ'ուղարկէի քեզ պտուղ և հաց տանել մեր եղբարց համար, որք կարօտութեան մէջ էին. ո՞ւպիսի ուրախութիւնով էիր դու յետ դառնում և քեզ յանձնած բարի գործի կատարման հաշիւր ինձ տալիս. ուրեմն, սիրելի, այժմ իմ պարտաւորութիւնս է գնալ և հօրս հաշիւ տալ այն գործերի համար, որք այդքան

երկար ժամանակ ինձ յանձնված էին, նա ինձ կ'ընդունի այն պէս, որպէս ևս քեզ էի ընդունում. նորա մօտ ևս քեզ կ'սպասեմ, մնացիր խաղաղութեամբ, ուր ևս թողնում եմ քեզ, մը նացիր, մինչդեռ կարող ես աղատ լինել, բայց՝ եթէ մի որ և իցէ բո՞նաւոր համարձակվի մեր նախնի աղատութեանը թէև փոքրիկ հարուած հասուցանել, ՎԻՃԵԼՄ, կեանքդ չ'ինայես քո հայրենիքի համար և մեռանելով կ'իմանաս թէ՝ որքան քաղցրէ այդպիսի մահը» :

Այդ խօսքերը, կործես թէ գրոշմիշին Ա իլհելմի զգայուն սրտի մէջ, նա կատարեց իւր վերջին պարտաւորութիւնը գետ ՚ի մեծարդոյ ծերունին, թաղեց նորա մարմինը իւր տան մօտ մի եղենիի ծառի տակ, խոստացաւ երդմամբ և երդումը չդժբեց ամենայն երեկոյ մենակ դալ այդ պաշտելի դերեղմանի վերայ, միաը բերել անցուցած օրվայ բոլոր գործերը և մտածողութիւնները և հարցանել իւր հօրէն՝ բաւական է նա արդեօք իւր որդւով։ Ով, թէ քանի առաքինութիւնների պատճառեղաւ այդ բարեկաշտ պարտքը՝ որ ինքը իւր վերայ դրել էր. քանիցս անկամ տարակուսութիւնը, թէ մի գուցէ ամօթով շառագունվի (կարմրի) հայրական շուքը հարցանելոյ ժամանակը, ընտելացրուց նորա եռանդոտ հողին յաղթել և նուածել իւր կիրքերը։ Կշխելով իւր սաստիկ ցանկութիւններին և բոնութեամբ ուղղելով նորանց դէպի առաքինութիւնը, Ա իլհելմը՝ որ ժառանգել էր իւր հօր ամենայն ստացուածքը, սկսեց աւելի ևս աշխատել և երկրէն երկպատիկ ստացած հունձը բաժանել նաև չքաւորաց։ Առաւօտեան արշալուսի հետ վերկացած, ուժեղ ձեռնով բոնումէր նա արօրի ծայրը, որ երկու եղինք հազիւ էին քաշում, կոխումէր փայլուն երկաթը քարերով խառն հողի մէջ, շտապիցնումէր իւր յամբազնաց անասունքը մտրակով և քրաինքը ճակատէն վաղելով, չէր դադարում մինչեւ երեկոյ, և նոյնժամայն խնայումէր այն տարաբաղդներին՝ որք

բնաւ արօր չունեին։ Այդ միաքը ճանապարհակից էր լինում
նորան, մինչ իւր եղինքը տուն էր քշում և զիշերը ողջոյն նոյն
մտքով էր զբաղվում, իսկ միւս օրը՝ 'ի ծագել առաւօտուն,
գնում էր իւր աղքատ բարեկամաց դաշտերը վարում էր, սեր-
մանում էր, մինչ սոքա բացակայ էին և թագչելով հեռանում
էր, ոչ թէ այնու համար որ՝ զրկէ նորանց այն բաւականու-
թենէն՝ որ պիտեր զգային իւրեանց շնորհակալութիւնը յայտ-
նելով, այլ ամօթ էր քաշում որ՝ բարերարութիւն պիտի անէր
իւր հաւասարներին։ «Աորա հոգացողութիւնը, նորա սփոփանքը
այն էին որ՝ զբաղված լինի աշխատանօք և հանդիսա վայելէ բա-
րեգործութիւնների մէջ։

Հեռութիւնը՝ որ Վելչելմին տուել էր այդպիսի մաքուր
և բարի հոգի, կամեցել էր տալ նորան նմանապէս մարմնի յա-
ջողութիւն և զօրութիւն։ Նա գլխով չափ բարձր էր իւր հա-
սակաւոր ընկերներէն, վեր էր ելանում ապառաժուս սարեր,
անցանում էր լայն հեղեղներ, հասանում էր սարերի մինչեւ սա-
ռուցապատ դագաթները, վայրենի այծը բռնում էր վազելու
ժամանակը, ձեռներով կորացնում էր և կոտրում էր կաղնիի
ծառը, մինչ կացինը հաղիւ կեղեքել էր նորա արմատը, և այդ
բազմածիւղ ծառը իւր ուսերի վերայ էր տանում։ Տօնական
օրերը, երբ պատանի նետաձիզք խաղալով էին պարապում, Վել-
չելմը՝ որոյ նետաձգութեան ճարտարութիւնը անհամեմատ էր,
ստիպում էր իրան պարապ մնալ, որ իւր ընկերները վեճէին
պարգև ստանալոյ համար։ Ճերերի կարգում նատած, իրեւ
դատաւոր, թէւ պատանեկական հասակ ունէր դեռ ևս, նա
դողում էր իւր պատուի ուրախութենէն։ անշարժ իւր տեղում,
հաղիւ շունչ առնելով, սրբնթաց նետերին նայելով, ծափ էր
տալիս ուրախութեամբ 'ի պատիւ այն նետաձգին՝ որոյ նետը
նպատակի մօտ էր հասնում։ ձեռները անդադար բարձրացրած,
սպասում էր որ՝ զիրկը առնու այն ախոյեանին, որ իրան հա-

ւասարապատիւ էր համարում։ Բայց երբ կապարձները դատարկվումէին և ոչոք չեր կարում աղաւնիին գիտել, երբ վաստակած թռչունը նստում էր հանգստանալու մի բարձր ձողի վերայ և անդորրութեամբ նայում էր դէպի իւր անզօր թրշնամիները, Ախլամը դուրս էր դալիս, վեր էր առնում իւր մեծ աղեղը, գետնէն ժողովում էր երեք նետ, մինով խփում էր ձողին որ՝ աղաւնին թռչի նորա վերայէն, երկրորդով կրտրում էր թռկը, որով աղաւնին կապած էր, իսկ երրորդով ամպերի մէջն էր գնում և դողդողուն թռչնին բերում էր, վեր էր քցում զարմացած դատաւորների ոտի տակ։

Եյդքան գերազանցութիւններով բնաւ չհպարտանալով և մի փոքրիկ առաքինութիւնը առաւել պատուելով, քան որ և իցէ զարմանալի յաջողակութիւն, Ախլամը արդէն մեղազրում էր իրան որ՝ գեռ ևս անհոգս էր իւր հօր հրամանը կատարելոյ մասին։ Նա կամեցաւ վերջապէս ամուսնանալ և ահա մատաղ Խղմէյը նորա ցանկութիւնը գրաւեց։ Խղմէյը Ուրիի աղջկերքի մէջ ամենապարկեշտ և ամենագեղեցիկն էր։ Օդը՝ որ յսուաջքան լոյսը դալիս է ծառերի տերևները շարժելու, աղբւրը՝ որ ապաստէն է բղխում և որոյ ամէն մի կաթիլի մէջ ցոլանում են արեղակի ծառ աղայթները, այնքան մաքուր չեն, որքան Խղմէյի սիրտը։ Խաղաղութիւնը, քաղցրութիւնը, բանականութիւնը, նորան ընարել էին իբրև իւրեանց սուրբ տաճար։ առաքինութիւնը՝ որ սեփական էր Խղմէյին, առանց իմանալոյ անզամ նորա անունը, նորա համար կեանք էր։ նորա միտքը չկարէր հասկանալ, նորա հողին չկարէր հաւատալ թէ՝ կարելի է ապրել և առաքինի չլինել։

Ուր և չքաւոր, երախայութենէ սնված և մեծացած մի ծերունիի մօտ, որ վերջին ընտանին էր՝ նորա տնանկ աղգատոհմէն մնացած, Խղմէյը այդ առաքինի ծերունիի հօտն էր պահպանում։ Գեռ ևս արշալոյսը չլուսաւորած ծառերի կա-

տարները, Աշտմէյը արդէն սարերումն էր լինում. ոչխարներով շուրջ պատված, իլիկը պառառումէր և իւր բարերարի համար ձորձք էր հիւսում. օրը մթնացած՝ գառնումէր տուն, կարգադրումէր ամենայն բանը, պատրաստումէր որպէս երեկոյեան ընթիրքը, նոյնպէս և առաւօտեան նախաճաշիկը, խրնացելով նուազ ծերունին թէ՝ մի գուցէ կարօտութիւն ինչ ունենայ, մինչ ինքը տանէ դուրս կ'լինի, յետ ամենայնի ընկնումէր իւր անկողինքը, բաւական լինելով անցուցած օրով, երջանիկ համարելով իրան որ՝ իւր շնորհակալութեան քաղցր պարտքը հատուցել էր և անտարակոյս թէ՝ միւս օրը նոյն բաւականութիւնը պիտի ունենայ:

Վ իլհելմը ճանաչեց այս աղջկան և սիրեց . . . բայց երբէք սորա մօտ գործ չ'ածեց այն ուշի մտօք հոգացողութիւնը, այն համոզեցուցիչ ընթացքը, այն հնարները՝ որք նորան անծանօթ էին և ոլք շատ անդամ՝ ապականում են սերը խառնելով նորա մէջ այնպիսի խորամանկութիւններ՝ որք կամ փութացնում են և կամուշացնում քաղցր զգացմունքի խոստովանութիւնը։ Ե յապիսի սովորութիւններէ օտար լինելով և չգիտելով թէ՝ հաճոյ լինելոյ ձիրքը բաժան են սիրոյ բաւականութենէն, Վ իլհելմը չէր որոնում դիպող ժամ Աշտմէյին շուտ շուտ տեսանելոյ համար. նորա հետքէն չէր շրջում սարերը, չէր սպասում նորան երեկոյին, մինչ նա իւր հօտն էր ժողովում, այլ ընդհակառակն՝ քանի որ Աշտմէյը սարերումն էր լինում, Վ իլհելմը նորա ծերունի բարերարին այցելութիւն էր գնում. այն տեղ երկար խօսակցութեան մէջ, ուր նախընտիր էին համարձակութիւնը, բացարարութիւնը և ճշմարարութիւնը, Վ իլհելմը ականջ էր դնում ծերունիին՝ որ մեծ ուրախութիւնով էր խօսում Աշտմէյի վերայ, պատմում էր նորա ամենայն խօսքերը, աչքերը արտասուբով լի, գովում էր նորա քաղցրութիւնը,

նորա անսպառ բարութիւնը, որով այդ որբ աղջիկը օր քան
զօր աւելի թանկագին և քաղցր էր ծերունիի համար:

Այդ գովեստները՝ որոց արձագանքը Ախլչելմի հոգւոյ
մէջ էին հնչում, առաւել էին բոլբոքում նորա սէրը, քան իւր
սիրուհիի տեսքը: Երբեմն այդպիսի խօսակցութեանց ժամա-
նակը, Եղմէյը դառնումէր տուն: Ախլչելմը նորա ճակատի
վերայ, նորա պարկեշտ կերպարանքի և հայեցուածքի մէջ, կար-
ծես թէ կարդումէր բոլոր լսածը ծերունիէն: Հաղիւ համար-
ձակումէր նա դողելով մի քանի խօսք ասել և խկոյն աչքերը
քաշ քցած բարովումէր և ծանր ծանր հեռանումէր դէպի
իւր միայնակեցութիւնը, ուր աւելի կարէր մտածել նորա վե-
րայ, քան միասին եղած ժամանակը:

Աերջապէս՝ վեց ամիս անցած, Ախլչելմը՝ որ արդէն
աներկրայ էր թէ՝ իւր սէրը նմանապէս մի առաքինութիւն է,
հաստատեց իւր մտքում որ՝ յայտնէ իւր կամքը նորան՝ որ այդ
սիրոյ պատճառն էր, բայց և այսպէս՝ նա չհամարձակվեցաւ
առանձին նորա հետ խօսել, այլ ընարեց մի հանդիսաւոր օր և
քաջալերված, առաջի բոլոր ժողովրդին՝ որ եկեղեցիէն դուրս
էր դալիս, սպասեց մատաղ Եղմէյին և մինչ սա մօտեցաւ,
Եղմէյ, ասաց նա, «Ես քեզ սիրում եմ և շատ յարգում եմ,
և միայն բարի էի, քեզ ճանաչելով քնքուշ ևս դարձայ, եթէ
հաւատում ես թէ՝ կարող ես բաղդաւոր լինել իմ հետ, ահա
իմ սիրոս և իմ ձեռս. եկ ընակել իմ հետ, եկ և իմ հօր դե-
րեզմանի վերայ խօստացիր սովորեցնել ինձ այն առաքինութիւն-
ները, որ նորանէ կարէի ուսանել»: Եղմէյը աչքերը քաշ
քցեց, կարմրեց յառաջ, բայց շուտով քաջալերված և ստոյգ
դիտելով թէ՝ որ ինչ մտածում էր, կարէր և պարտէր յայտ-
նել, պատասխանեց՝ «Ախլչելմ, ես քեզնէ շնորհակալ եմ քո
այդ ընտրութեանդ համար. մինչեւ այսօր բաւական լինելով իմ
խաղաղ երջանկութիւնովս, ես զգում եմ այժմ որ՝ այդ եր-

ջանկութիւնը պիտի աւելանայ այն քաղցր իրաւունքով՝ որ
պարտաւորում է ինձ ասել թէ՝ իմ ընտրեալս նմանապէս գու
ես»։ այս խօսքում մեկնեց իւր ձեռը, որ առոցդ Ա. իլհելմը սեղ-
մեց իւր ձեռի մէջ, նայեցին նորա միմեանց և ոչինչ այլ ևս չը-
խօսած՝ բոլոր իւրեանց խոստմունքը երդմամբ հաստատեցին։

Այդ ամուսնութիւնը նոր բաղդ պատճառեց Ա. իլհելմին։
աշխատութիւնը աւելի գեղեցիկ եղաւ նորա համար, որովհետեւ
Լզմէյն էր վայելում այն աշխատանքի պառւզը, ինչ որ բարի
գործում էր, աւելի քաղցր էր երեւում նորան, որովհետեւ Լզ-
մէյը իմանալու էր այն բարեգործութիւնը։ Ոիշտ ՚ի միասին,
կամ բաժանվելով երբեմն, կրկին և շուտով միաւորվելոյ համար,
նորա կարեխին իւրեանց խաղաղատէր և մտածիչ բնութիւնով
չափաւորել բաւականացած սիրոյ վտանգաւոր առաւելու-
թիւնը, կարեխին ամոքել իւրեանց բերկրալիր եռանդը, մարդա-
սիրութեան և մտերմութեան երկարատեւ զուարծութիւններով,
փոխադարձ պատուով, այն քաղցր և պարկեշտ կասկածանօք
թէ՝ մի գուցէ երբեմն բաւական արժանի չլինին միմեանց։ այն
հաստատ մտքով վերջապէս թէ՝ իւրեանց հոգիքը առաւելա-
ռաքինի և գեղեցիկ կ'լինին, մինչ իւրեանց մտածմունքը կ'յայտ-
նեն իրերաց և զգացմունքը կ'խառնեն։

Այդ սիրոյ կապը աւելի ևս պիրկացրեց նոցա նորածին որ-
դին։ քաղցրահնչիւն անունները հայր և մայր մի նոր աղբիւր
էին նոցա համար գեռ ևս անծանօթ զուարծութեանց։ Փոքրիկ
և գեղեցկաղարդ Ճեմմին (որդւոյ անունն է) սկզբում յանձնը-
վեցաւ Լզմէյին։ Առ կամեցաւ մենակ տանել երեխայութեան
հոգսի բոլոր ծանրութիւնը, բայց երբոր տղան վեցամեայ հա-
սակը մտաւ, Ա. իլհելմը այնուհետեւ իւրմէ չէր հեռացնում նո-
րան։ աանում էր իւր հետ դաշտը, արօտը, ցոյց էր տալիս նո-
րան հասկով ծածկված արտը, սարերը, ջուրերը, անտառները
և աչքերը դէպի երկինք բարձրացրած՝ հրամայում էր նորան

երկիւղածութեամբ յիշել ամենաբարձրեալ Աստուծոյ անունը և ասում էր՝ Աստուած՝ որ դատաւոր և վկայ է մեր ամենայն մտածմանց, իւր արարածէն պահանջումէ բարի լինել, որ նորան յաւիտենական երջանկութեան հասուցանէ։ Ամենայն առաւօտ և երեկոյ անդադար կրկնումէր նորան այդ կանոնը և բացարումէր թէ ի՞նչ է բարի լինելը։ Անփոյթ լինելով նորատկարութենէն և նորա տղայական երկչու հասակէն, տանում էր նորան ձիւների մէջ, հարկադրումէր սառուցի վերայ գնալ, վարժեցնումէր նորա մանկական ձեռները եղների լուծք բարձրացնել, փայփայել առանց երկիւղի այդ զարհուրելի անասուններին, լծել արօրի մէջ և տանել իւր հետ։

Այս իսկ երեխան ծանրաբարոյ և մտածիչ, մինչ աշխատումէր կամ խօսումէր Վ իլհելմի հետ, այն ի՞նչ վերադառնումէր տուն և ընկնումէր իւր մօր զիրկը, իսկապէս քաղցր և երկիւղած զաւակ էր երեւում՝ քնկուշ, ուշադիր և քաղցրաբարոյ։ Նա մտիկ էր տալիս իւր մօր աչքերին որ՝ իմանայ նորանակ փոքրիկ հաճոյքը, շտապումէր կատարել այդ, մինչդեռ իշտմէյր ոչինչ չէր ասած։ Ովթէ, այդ քաղցրիկ երեխան որպիսի երջանկութիւն էր պատճառում իւր մօրը։ քանիցս անգամ, մինչ բացակայ էր լինում Վ իլհելմը՝ որոյ խոժոռ գէմքը մերժումէր որ և իցէ նաև օրինաւոր զգացմունքի շափազանցութիւնը, իշտմէյր իւր մատաղ և սիրելի որդեկին զիրկը առած՝ սեղմում էր իւր սրտին և անդադար ասում էր նորան փափկութեամբ, արբեցած մայրական սիրով՝ որդեակ իմ, միայնակ որդեակ իմ, իմ կեանքս քո կեանքի մէջ է, իմ հոգիս քո հոգւոյ մէջ է բնակում, լաւ իմացիր այդ, իմ անուշեկ որդի և հաւատիր ինձ, բայց քո հօրդ առաջեւ այնապէս կերպաւորիր, իբրև թէ չգիտես։

Այդքան բարիքի հետ միասին, Վ իլհելմը ուներ մի բարի բան ևս, որ շատ հարկաւոր է համարվում, թէ բաղդաւորու-

թեան և թէ տարաբաղդութեան ժամանակը, այսինքն՝ նա ունէր մի բարեկամ։ Այդ բարեկամը հասակակից Վ. իլհելմին՝ ընակումէր այն բարձր սարերի մէջ՝ որք Ուրին բաժանումէն Աւնթերվալդէն։ Երկու բարեկամաց սրտերի, այլ ոչ ընաւորութիւնների նմանութիւնը միաւորելէր սորանց երեխայութենէ, անտի։ Վելքթալը (բարեկամի անունն է) նոյնչափ մաքուր, քաջև ազնուաբարոյ, որչափ ինքը Վ. իլհելմը, սորանէ պակաս չէր սիրում՝ թէ առաքինութիւնը, թէ արդարութիւնը և թէ իւր հայրենիքը։ ‘Եորա սէրը թէ ոչ այնքան մտածիչ, ոչ այնքան ’ի մի ժողոված սրտի վառարանի մէջ, սակայն և այսպէս կարող էր մեծամեծ գործեր գործել, առանց կարելոյ գէմ կենալ երկարատե նեղութիւնների։ Վելքթալը կարիչ, եռանդու և կատաղի, չէր կարում թագուցանելիւր որ և իցէ զգացմունքը։ Խօսելոյ ժամանակը շնչառապառ էր լինում, առաջին բորբոքի մէջ վերջանումէր այն սաստիկ ցանկութիւնը՝ որով նորա հոգին վառված էր։ Բայց Վ. իլհելմը ընդհակառակն՝ նուածելով իւր կիրքը պահպանումէր և զօրացնումէր։ Նա չէր թոյլտալիս իւր բերանին կամ իւր գէմքի որ և իցէ գծագրութիւնին յայտնել կամ ցուցանել իւր զգացմունքը։ Որքա երկուքը ևս ատումէին անիրաւութիւնը, բայց մինը ընդդէմ անիրաւութեան որոտալից ձայնիւ աղաղակումէր և պատրաստ էր իսկոյն զոհել իւր կեանքը նորան պատժելոյ համար, իսկ միւսը լուութեամբ անիրաւութեան քամակէն զնալով՝ կամումէր ուղղել այն, եթէ հնար էր։ Վինը նման էր սաստիկ հեղեղի՝ որ իւր կատաղի յարձակմունքի մէջ, անինայաբար կործանումէ ամենայն պատահած արգելք, իսկ միւսը իշխելով իւր խորին սրտմառութեան, համբերութեամբ ժողովումէր իւր ատելութիւնը ընդդէմ չարութեանց, որպէս շատ ձմեռների ձիւնի կուտուածք՝ որք բոլորը ’ի միասին լիռներէն վեր են ընկնում, այն ինչ արել խախտումէ նորանց։

Վելքթալը և Վիլհելմը շատ անգամ իւրեանց ընտանիքի
հետ գալիս էին միմեանց այցելութիւն և պարապ օրերը միասին
էին անցուցանում. այսպիսի օրերը երկու բարեկամք միօրինակ
սպասում էին միմեանց. երբեմն Եղմեյը իւր ամռանոյ և որդւոյ
հետ ճանապարհ էին ընկնում դէպի Վելքթալը և նորա հա-
մար կաթն և նորաբոյս պտուղներ էին տանում, իսկ երբեմն
Վելքթալն էր գալիս կուռ կուռի քցած իւր ծերունի հօր և
իւր դստեր հետ, այն դստեր՝ որ միայնակ յիշատակ էր մնա-
ցել իւր կողակցէն՝ որոյ մահը դեռ ևս արտասւումէր։ Վիլ-
հելմը սպասում էր նորանց իւր դրան մօտ. մի աթոռ պատրաս-
տած ծերունիին նստեցնելու համար, զինիի բաժակը Եղմեյի
ձեռնում, իսկ Ճեմմին՝ որ անհանգիստ աչօք ճանապարհին էր
մտիկ տալիս, ծաղկանց փունջը բռնած՝ սպասում էր որ իւր
սիրելի Քըրային (Վելքթալի դստեր անունն է) ընծայէ։
Ե և, որքան մաքուր և քաղցր էր այն ուրախութիւնը՝ որ
նորա վայելում էին միասին, որքան զուարձութիւն էին գտնում
նորա զիւղական սեղանը շուրջ պատած, իւրեանց պարկեշտ
հացկերոյթը երկարացնելով. և երբ որ վերջացնում էին, ծերունի
Վելքթալը (աղջկայ պապը) որ արդէն ութսունամեայ հասա-
կի ծանրութենէն հոգնած էր, իւր գաւաղանի օգնութեամբ
գնում էր, վեր էր ելնում բարձր սարի վերայ, նատում էր այն-
տեղ իւր բարեկամաց և զաւակաց մէջ, բացում էր իւր մե-
ծարոյ զլուխը և նորա սպիտակ մազերը ջերմութիւն էին ընդու-
նում արեգակի ճառագայթներէն, բաւականապէս զմայելով
բնութեան տեսարանին՝ որ իբր նոր նորա երեւակայութեան առ-
ջել էր բերում իւր լաւ անցուցած օրերը, նա սկսում էր խօ-
սկել իւր անցած կեանքի վերայ, իւր աշխատութեանց վերայ,
այն տրտմութեանց վերայ, որք անբաժան են մարդոյս կեանքէն,
այն միմիթարութեանց վերայ, որ միշտ կարելի է գտանել խրզ-
մտանաց և առաքինութեան մէջ։ Վիլհելմը, Վելքթալը,

Եղմեյր յարդանօք և մտադրութեամբ լսումէին նորա խօսքերը։ Քլարան և Ճեմմին նորա ծնկանց մօտ նստած՝ նայում էին միմեանց և իրար ձեռքն էին սեղմում։ Ա իւհեմի մի հայեցուածը սոցա գէմքի վերայ անմեղ կարմրութիւն էր բերում, իսկ ծերունին նկատելով այդ, իսկոյն ներողութիւն էր խնդրում նոցա համար։

Քլարան և Ճեմմին զարդանումէին և նոցա անմեղ սէրը նմանապէս աճումէր և զօրանումէր։ բայց ահա պակսեցան այն երջանիկ օրերը՝ որ նոքա միասին անցուցանումէին։ Ճեմմին այն երկար շաբաթների մէջ իւր սիրուհին չ'տեսնելով, զանազան պատճառներ էր հնարում՝ որ տանէն փախչի և թռչնի նման սլանայ գէպի Քլարայի տունը, երբեմն գալիս էր Մելքթալին ասումէր թէ՝ սարերում մի արջէ երևել և խաշինքը վտանգի մէջ են, երբեմն գալիս էր յայտնումէր թէ՝ անցած գիշեր հիւսիսային հողմը չորացրել է խաղողի նորաբոյս պտուղները։ Մելքթալը լսում էր ժպտելով և շնորհակալեր լինում նորա հոգացողութենէն, նորա անկեղծ բարեկամութենէն, իսկ Քլարան շտապով նորա տուաջն էր բերում փրփրած կաթնի բաժակը։ Ճեմմին բաժակը բռնած, ձեռները Քլարայի ձեռների վերայ, խմումէր մինչի վերջին կաթիլը։ բայց շատ ծանր էր խմում և աչքերը իւր սիրուհիի աչքերէն չէր հեռացնում։ Ա երջապէս բաւականացած այդ այցելութենով, ուրախ և զուարձ վերադառնումէր իւր հօր մօտ, մասածելով ծանապարհում թէ՝ ինչնոր պատճառ գտանէ, որ միւս օրը կրկին տեսանէ Քլարային։

Վայդպէս էին ապրում այդ երկու գերդաստանքը, այսպէս էր ապրում մի բոլոր ազգ՝ որոյ մէջ ամենքը եղբարք էին և որոյ թէ ծնողք և թէ զաւակունք, թէ ծերք և թէ տղայք, այլ հարատութիւն, այլ բաղդ, այլ ուրախութիւն չ'գիտէին բացի աշխատանքը, անմեղութիւնը, սէրը և հաւասարութիւնը։

Յանկարծ Առողջի մահը խլեց սոցանե, այդ ամենայն բարութիւնները. Առողջի թէև բաղդի օգնականութիւնով բարձրացել էր մինչև կայսերական գահը, բայց Նելուետիայի ազատութիւնը դեռ ևս յարգումէր: Առա յաջորդ բարձրամիտ Ելեկտր, հպարտացած իւր ունայն փառքով, անչափ ժառանգութիւններով, միապետութեան բոլոր զօրքով, անպատշաճ համարեց որ՝ իւր թագաւորութեան մէջ քանի մի հովիւներ, քանի մի երկրագործներ ազատ լինին նորա հպարտութենէն. նա կարծումէր թէ՝ արծաթ է վճարել և գնել է այդ ազգի սեփականութիւնը և թէ անարդ գանձը պիտի նորան մարդկանց ինքիշխան տէր կացուցանե: Աս մի նահանգապետ որոշեց, որ գնայ այդ երկիրը հարստահարէ և այս նահանգապետը Գևորգին էր, ամենաբարբարոս և ամենավատթար պալատականը մանուկ թագաւորի:

Գևորգը առաւ իւր հետ զինակիր ստրուկներ՝ որք նորա ընտրութեամբ գահինք ևս կարէին լինել և գնաց հաստատեց իւր բնակութիւնը Ելդորֆում: Կատաղութեամբ բորբոքված, չարագործութեան աղղեցութենէն տիրված՝ Գևորգը ինքը չարչարվումէր որ՝ չարագործութեան հնարագիտութիւնը լաւ սովորի: Եզատութեան անունը միայն լսելով՝ նա դողումէր որպէս գայլ՝ որ ուսորդին իւր հետքից կ'ահսանե, կամ նորա նետի ձայնը կ'լսէ: Երդմամբ խոստացաւ նա ջնջել և ոչնչացնել այդ անունը: Ամենայն բան թոյլ էր տուել Գևորգը իւր գարշելի գահինքներին, ինքը շատ օրինակներ ցոյց տուաւ նորանց յափշտակութեան, սպանութեան և զանազան յանցանքների ընդդէմ ամօթխածութեան. ՚ի զուր էր գանգատում ազգը, վասն զի գանգատը ևս նա պատժումէր: Երկիւղած առարինութիւնը գնաց ծածկվեցաւ խրձիթներում, նորահաս աղջեկը դողալով թաք էր կենում իւր զարհուրած մօր քամակում, երկրագործը անիծումէր երկիրը՝ որ նորա քրտնքի փոխարէն ա-

ուստ հունձ էր տալիս, որովհետեւ նա յոյս չուներ այդ հունձը ժողովելու : «Օեր մարդիկ բաղդաւորութիւն համարելով իւրեանց ծերութիւնը՝ որ մահը ներկայացնում էր նորանց իրրեալ ազատիչ, միաւորվեցին իւրեանց զաւակաց հետ, որովհետեւ սոքա նմանապէս պատրաստ էին և ցանկանում էին մեռանել իւրեանց ծնողաց հետ . ամենայն տեղ վերջապէս այդ երեք նահանգներում աղիողորմ թշուառութեան հաստ քողը սփովեցաւ անօք թէն Գհեսլերի ծեռնով :

Խնչալէս որ Գհեսլերը եկաւ, Վելհելմը խկոյն զուշակեց այն նեղութիւնները՝ որք պիտիր տագնապեցնէին նորա հայրենիքը : Առանց իմաց տալոյ Վելքթալին, առ անց աղմկելոյ իւր ընտանիքը, նորա մեծահոգութիւնը պատրաստվեցաւ ոչ միայն այդ նեղութիւնը կրելոյ համար, այլև իւր երկիքը նորանեւ աշատելոյ համար : Չարագործութիւնները բազմացան, բոլոր երեք նահանգները սարսափի մէջ ընկած՝ դողումէին Գհեսլերի չոտի տակում, բայց Վելհելմը չ'սարսեցաւ, Վելհելմը բնաւ չ'զարմացաւ ևս . նա տեսաւ բոնաւորի անիրաւութիւնը, որ պէս թէ՝ կ'տեսաներ չոր ապառաժի վերայ մի մորենի՝ որ փուշերով ծածկված էր : Շտապեց անվեհեր Վելքթալը Վելհելմի մօտ, թափեց նորա առաջեւ իւր կատաղութիւնը . Վելհելմը լսեց նորան առանց պատասխանի տալոյ . ոչ նորա աչքերը մի արտասուքի կաթիլ ցուցին և ոչ նորա անվիշտ կերպարանքը մոքի որ և իցէ խորհուրդը յայտնեցին : 'Ես սրտէ պատուելով իւր բարեկամին, նորա հաւատարմութիւնը ճանաչելով, բայց զզուշանալով նորա բարկութիւնը գրգռելուց, Վելհելմը թաքցրեց իւր սրտի ցաւը, որ նորանը աւելի չ'բորբոքէ . իւր ծածկեալ խորհուրդը չ'յայտնեց նորան, մինչև կ'գար կատարելոյ ժամանակը : Վելհելմի նախատեսութիւնը ասումէր իրան թէ՝ այդ ժամանակը գեռ ևս հեռի էր : Ճանդարտ, տրտում և մըթնագէմ, իւր երկար օրերը նա անցուցանումէր, ոչ անգամ մի

իւր որդիքն զրկելով և ոչ երբէք դէպի իւր կինը նայելով. սովորական ժամանակէն յառաջ վեր էր կենում առաւտոր, եղինքը լծում էր, տանում էր ագարակ, զբաղված մտքով մշակում էր, խթանը փախչում էր նորա ձեռնէն, նա կանգնում էր յանկարծ կիսապատճու տկօսի միջում, գլուխը քաշ քցած, դէպի երկիր նայելով, անշարժ, լուռ, շնչառութիւնը սպառելով և նոյն ժամանակ չափում էր, հաշուում էր բոնաւորի զօրութիւնը և իւր կարողութիւնը նորան կործանելոյ համար. իւր բանականութեան կշեռքի տակ էր գնում, մի կողմէն գնելերին, իւր դահիճներով, անսահման իշխանութիւնով, տէրութեան բոլոր զօրքով, միւս կողմէն մի երկրագործի՝ որ միայն իւր երկրի աղատութեան խորհրդովն էր ոգեւորված:

Ո՞ի երեկոյ, մինչ Ա ԵԼՇԵԼՄԸ և իւր կինը իւրեանց խըրծիթի առաջեւ նատած՝ նայում էին Ճեմմիին՝ որ փոքր ինչ չեռի նոցանե, իւր կարողութիւնն էր փորձում մի նոխաղի դէմ, այդ երեխայի տեսիլը՝ որ անմեղ ուրախութիւն էր ցոյց տալիս և այն միտքը՝ թէ ի՞նչ թշուառութիւններ է պատրաստում նորա համար ստրկութիւնը, խոր խորհուրդի մէջ ձգեցին Ա ԵԼՇԵԼՄԻՆ և զուցէ առաջին անգամն էր որ՝ նորա աչքերը արտասուք երեւացրին : Եղմեյը նկատում էր այդ և տարակուսած մտածում էր թէ՝ խօսի՝ արդեօք իւր ամուսնի հետ թէ ոչ Ա ԵՐԺԱՎԵԿՍ ստիպվելով իւր սիրոյ եռանդէն, իւր անհրաժեշտ պարտաւորութենէն մասնակից լինել իւր սիրեկանի նեղութիւններին, մօտեցաւ նորան, բոնեց նորա ձեռը և աչքերը քցած նորա աչքերի մէջ՝ ասաց՝ իմ հոգի, ի՞նչ եմ արել քեզ՝ որ այդպիս անողորմարար թողել ես ինձ. ի՞նչ եմ արել որ՝ դու չըկարես այլ ևս հաւատալ իմ մտերմութեանս, որով մինչ այժմ պարծենում էի. դու աշակերտում ես մի ցաւով՝ որ քո կինդչդիտէ, միթէ դու ուղում ես որ՝ այդ չարչարանքը աւելի կսկածալի լինի քո կետջ համար, քան թէ քեզ համար. տասն և

Հինգ ամաց մէջ, միթէ դու չիմացա՞ր որ՝ իմ միտքս քո մոքի հետևանքն է, չիմացա՞ր որ՝ ես չկարեմ համարձակիլ՝ ոչ հաւատալ բաղդին, ոչ ճաշակել նորան, և ոչ զգալ, մինչեւ ինձ յայտնի չլինի թէ՝ այդ բաղդը իմ հողեկից ամուսնէն է հասնում: Եւաղ, աւաղ, ՚ի զուր եմ քննում ինքս ինձ, իմ սիրով նոյն է, որ ինչ յառաջ էր, իսկ քո սիրով վասնէր նոյն չէ. մեր տան մէջ ոչինչ փոխխութիւն չէ եղել, էր պիտի ուրեմն իմ ամուսինը փոխվի: Տես այս մեր խրձիթը, ուր մենք միշտ միմեանց սիրել ենք, նայիր քո մշակած ագարակը, որոյ հունձը բաւական է՝ թէ մեր ապրուստի համար և թէ բոլոր տարին այլոց օգնելոյ համար, նայիր այդ փայլուն լուսինը՝ որ սարերի քամակէն բարձրանալով, զուշակում էր վաղը մի այնպիսի լաւ օր, որպէս այս օրս՝ որ ահա վերջանում է. նայիր վերջապէս մեր սիրելի որդւոյն՝ որոյ անմեղ ուրախութիւնը և ծիծաղը և մեր զուարձութիւնը պիտեր զրդուր և օրինակ տար մեզ նոյնպէս երջանիկ լինել, որպէս ինքն է: Կ՞նչ է պիտոյ քեզ, ո՞վ իմ Վ իւ հելմ, ասա ինձ, իմ անհամբեր հողիս պատրաստ է քո բաղձանքին հետևել:

Եղմէյ, պատասխանեց Վ իլհելմը. «Ո՞վ յիշեր բաղդի անունը, մի սաստկացրուր այն ահապին տառապանքը՝ որ զգում եմ հոգւոյս մէջ: Ա՞վ, ո՞րքան խղճալի ես դու, դժբաղդ կին, եթէ հաւատում ես մեր երջանկութեան, եթէ մի բանի տեղ ես դնում այդ անարդ հանգիստը, որ մենք խաւար տպիտութեամբ վայելում ենք. միթէ չզիանս Նելուեախիսի գերութիւնը, չզիտես որ՝ բոնաւոր Գենուերը, բարբարոս տիրապետի ամենաշար հրամանակատարը մեր վերայ իշխում է, մեր զլուխը երկաթի գաւաղանաւ ջարդում է: Գու ցոյց ես տալիս այդ հունձը՝ որ իմ աշխատանոր բուսել է, կարծում ես թէ Գենուերը չի կարող մի խօսքով յափշտակել. դու ինձ ցոյց ես տալիս այդ խրձիթը, ուր իմ նախնիք երեք հարիւր տարի կեցել են. Գեն-

Երբ չե՞ կալող խլել այդ ինձանեւ . իսկ այդ երեխան՝ որ այդքան պաշտելի է ինձ , այդ իմ հոգւոյ և մարմնոյ բաժինը , որ թէ՛ բոլորովին տիրել էր իմ սիրոյս , բայց երկապատիկ սիրով քեզ է սիրում . այդ երեխան եմ ասում ; Վեսլերէն կախված չէ արդեօք . իմ երկիրս , կինս , որդիս , մինչ հօրս գերեզմանը ևս ոչ ապաքէն ամենքը բռնաւորին են պատկանում . օդը՝ որով մենք նորանէ ծածուկ շունչ ենք առնում , նոյնակէս նորա իշխանութենէն չէ գողացած , բայց վայ մեր լիուլի տմարդութեանը՝ որ մի ամբողջ ազգ , մի բոլոր ժողովուրդ մի մարդոյ անձնակամութեանն է ծառայում . . . ի՞նչ ասացի , մարդոյ . . . Աստուած իմ , ներիր իմ յանցանքիս , որ քո գեղեցիկ սաեղծուածի անունը ապականեցի . մարդկութիւնը ոչինչ ունի հասարակաց բռնաւորների հետ . նա զոհ պիտի լինի բռնութեան մինչ այն կէտը , երբ կրկին ստանալով իւր իրաւունքը , հաղարամեայ նախատինքի վրէժը մի օրումը կ'առնու : Այդ փափազը , այդ յոյսը ինձ քաջալերումէն . իմ հոգիս չկարէ տեղաւորել իւր մէջ այդ խորհրդի մեծութիւնը . զգուշացիր ուրիմն զբաղեցնել , զգուշացիր քաղցրացնել իմ զգացմունքս թէ քո և թէ որդւոյս համար . ըստը ոչ որդի ունի և ոչ կին . ես զիտեմ այդ , զիտեմ թէ՝ և բնութիւնը դադարելէ ինձ համար : Վո աչունքը սիրով կուրացած , ուրախ հայեցուածով շրջումէն այս տան , այս գեղեցիկ երկրի վերայ , ուր երբեմն մէք երջանիկ էինք . իսկ իմ աչքերս առաքինութենէ միայն պարտաւորված՝ ոչ այլ ինչ են տեսնում , եթէ ոչ՝ այն ահագին ամրոցը՝ որ կառուցած է բարձր ապառաժի վերայ , Աւրին կապանքի մէջ պահելոյ համար :

Միթէ դու կարծումէիր , ասաց Եղմէյը , որ իմ սիրտս , թէ՛ անարժան քո սրտիդ , չսկսեց արդէն թարշամել ստրկութեան անունը միայն լսելով . միթէ դու կարծումէիր թէ՝ ես կարող էի սիրել իմ Ալհելմին , եթէ չատէի բռնաւորին . զգուշացիր ուրիմն և դու արհամարհել այն քնիքուշեւ միամիտ

Հոգիքը՝ որ կարծեսթէ միայն քաղցր զգացմունքով են պարարվում. խանդաղատութիւնը՝ որ երբեմն մայր է թուլութեանց, շատ անգամ մայր է և մեծամեծ առաքինութեանց, նա՝ որ արտասումէ, տեսանելով մի դժբաղդութիւն, կամ մինչ պատմումեն մի գեղեցիկ գործ, ցոյց է տալիս թէ՝ կամի թեթեացնել առաջինը և զգումէ երկրորդի բաւականութիւնը. քեզնով դատիր քո ամուսնիդ, մի հոգի չէ արդեօք երկուքիս մէջ. դու պաշտումես քո հայրենիքը, չպիտի արդեօք և ես սիրեմնորան սաստկապէս, որովհետեւ իմ և քո հայրենիքն է նա. բոլոր քո հոգւոյ ձիրքերը անշափաւոր գեղեցկութիւն ունին իմ աչքում այնու ես, որ ես քեզեմ պատկանում. առանց քեզ գուցէ և լինէի առաքինի, բայց քեզ սիրելով, երկսկատիկ եմ արդէն. խօսիր ուրեմն իմ հետ մտերմութեամբ, յայտնիր ինձ քո խորհուրդը. կին գոլով, ես անցոյս եմ բազմապիտանի լինել քեզ, բայց իմ կին լինելը արդելք չէ որ՝ մեռանիմ քեզ՝ ձեռնառու լինելով»:

Վելհելմը այս խօսքերից յետ, զրկեց Եղմէյին և մինչ պատրաստվումէր իւր սիրուր բացելնորան, յանկարծ խրեանց խրճիթի կողմէն մի աղաղակ խառն հեծութեան հետ հասաւ նորա ականջը. վերկացան ամուսինքը շտապով և տեսին որ՝ իւրեանց որդին գունաթափ դիմօք, աչունքը լի արտասուքով, ձեռները դէպ'ի երկինք բարձրացրած, զարհուրանոք վազելովնոցամօտ, աղէխարշ ձայնիւ, կանչումէր՝ հայրիկ, հասիր, հասիր նորան օդնել. . . . Վելքթալը, ծերունի Վելքթալը. . . . այդ անխիղջ բարբարոսները. . . . նոքա համարձակեցան. . . . Վինչ նա այդպէս աղաղակում էր, Վլարան ծերունի Վելքթալի թեից բոնած՝ յառաջէր գալիս նորա գողղոջուն դնացքը պահպանելով. թշուառ ալեորը աջ ձեռնով յեցվելէր իւր գաւաղանին, ձախը տուելէր անմիսիթար Վլարային. ամեն մի քայլ փոխելով դոչումէր՝ Վելհելմ, սիրելի Վելհելմ, ուր ես, և իւր ձեռները

յառաջեր մեկնում որ՝ Ա իլհելմին հանդիսի, իսկ ոտները քարերի դիպելով հարկադրումէին նորան կրկին պաշտպանել իւր գնացքը զաւաղանով՝ որ վայրկեան մի վեր էր քցել: Ա իլհելմը վաղեց, զրկեց ծերունիին, սեղմեց իւր սրտին, ուշի մաօք նայեց և մի ահաղին զուոց բարձրացրեց, մազերը կանգնեցան նորա զլիսի վերայ. մինչ տեսաւ որ պատուական ծերունիի երեսում հանած աչքերի արիւնով լցված տեղիքն էին մնացել, սոսկումն և զարհուրանք տիրեցին Ա իլհելմի հոգւոյն, յետ քաշվեցաւ նա ատելութենէն, կանգնեց մի ապառաժի վերայ վրբե կաշկանդված: Եղմէյը ուշաթափ վեր ընկաւ, Ճեմմին շտապումէր նորան օդնել, Քլարան Ա իլհելմին կանչելով, ցոյց էր տալիս կոյլ ծերունիին և լալազին դէպի երկինքն էր նայում: «Դու հեռանումես ինձանի, ով իմ ընտիր բարեկամ, զոչեց ծերունին տկար ձայնիւ, դու չկամիս շաղախվել այդ արիւնով՝ որ իմ վերքէն թափվումէ, դարձիր դէպի իմ սիրտս՝ որ զեռ ևս կենդանի է, դարձիր որ՝ զգամ զոնի, նորա բարախելքո սրտիդ մօտ, կարենամ քեզ զրկելով, քեզ շօշափելով ստուգել թէ՝ բարբարոսները աչքերէս միայն զրկեցին, այլու իմ բարեկամէն»:

«Երիր ինձ, պատասխանեց Ա իլհելմը, շտապելով զրկախառնվել ծերունիի հետ, «Երիր առաջին շարժմունքիս որոյ պատճառ էին իմ վշտակցութիւնը և զարհուրանքը: Ալ առաքինազոյն անձն, քո գժբաղդութիւնը չկարէ առաւելացնել այն յարդանքը, որով քեզ պատվումէի, այլ կարէ կրկնապատիկ առնել այն սէրը՝ որ դէպի քեզ զգումէի և ամրացնել այն սրբազն կապը՝ որ մեզ միաւորումէր: Ա ասներ արգեօք, որպէս կամուր համարձակեցան այդ արեան ծարաւի կատաղեքը հարկանել քո առաքինազարդ ծերութիւնը, ի՞նչ արիր դու նոցա, իսկ քո որդիդ Ա ելքթալը, մեռան նա, քեզ պահպանելով, եթէ նորա աչքերը լոյս տեսնումէին զեռ ևս, կ'թողներ

նա արդիօք քեզ, թոյլ կտա՞ր մնալ մի տկար և խեղճ աղջկայ
յուսով, որ միայն լալ գիտէ։ Տայց աշա ևս եմ փոխանակ քո
որդւոյդ, ևս եմ, որ պիտի ժառանգեմ՝ թէ նորա սիրոյ քաղը
ցրութիւնը և թէ նորա վրէժինդրութիւնը քեզ համար»։

«Ո՞ի մեղադրիր բնաւ իմ որդիիս, ասաց ծերունին,
մի դատապարտիր քո բարեկամին, մինչդեռ չգիտես բանի որ
պիտութիւնը։ Նստեցնւը ինձ ձեր միջում այնպէս որ՝ զգամ՝
թէ դու, Ա իլհելմ, իմ մօսս ևս, Քլարան ինձանեւ հետի չէ և
թէ Լշդմէյը և Ճեմմին մտադրութեամբ լսում են ինձ։ Տա-
րին ալեւորին մի խոտաւէտ տեղի, նստեց նա Ա իլհելմի մօս,
Լշդմէյը նորա քամակէն նստած, իւր սրտի վերայ պահպանում
էր պատուելի ծերունիի դլուխը, Քլարան և Ճեմմին նորա ձեռ-
ներն էին համբուրում և իւրեանց արտասուքով լուանում։

«Ասէք ինձ, ասաց ծերը. Ո՞ի թոյլ տուէք ոչ աւելի
խանդադատութեան և ոչ չափազանց բարկութեան։ Եյսօր
առաւօտ՝ մինչ արեգակը՝ որ վերջին անգամ պիտիր տեսնենին
իմ աչքերս, դուրս եկաւ ուկեզօծել մեր սարերը, Քլարան և
ևս ազարակումն էինք, Քլարան ինձ օգնում էր հունձի խուր-
ձերը կապել, իսկ որդիս ժողովում էր սայլի մէջ, որ երկու լծած
եղինքը պիտիր տանենին մեր խրճիթը. յանկարծ մի զինուոր ե-
րեւցաւ, կատաղի Գևելերի մի դաշիճը. ուղիղ եկաւ սա մեր
վերայ, ոտնակոխ անելով հասկերը մօտեցաւ սայլին, զնեց և
անզգամութեամբ սկսեց եղինքը լուծէն արձակել, որդիս ասաց՝
ի՞նչ իրաւունք ունիս մեր տաւարների վերայ, մեր միակ ստա-
ցուածի վերայ, մեր սոսկ հարստութեան վերայ. այդ եղինքը
կերակրում են մեր ընտանիքը և քո մեծաւորիդ հասուցանում
են այն ռոճիկը, որ դու ստանում ես։ Հնաղանդիր ողա-
տասխանեց զինուորը, և մի համարձակիր հարց ու փորձ անել
նորանց՝ որք քո տերդ են։ Եյս խօսքումը, տեսի որ որդ-
ւոյս աչքերը կատաղութեամբ վառվեցին, խեց նա զինուորի

ձեռնէն եղանց լուծը, բարձրացրեց նորա վերայ և այն ինչ պատրաստ էր նորա գլուխը ջարդել, աղաղակեցի և և արդելեցի նորան։ Բարբարոս, գոչեց որդիս, փառք տուր իմ հօր։ Նորա ձայնը առաւել իշխանութիւն ունի իւր որդոյ վերայ՝ քան իրաւունքի բարձրութիւնը, այդ ձայնը արդելեց ինձ ջնջել աշխարհի երեսէն գոնէ մի թշնամին մարդկային աղջի։ Փախիր, անպիտան, կորիր այս տեղից, սարսափիր որ՝ այդ ագարակը բոնակալութեան մի զործակալի գերեզման չդառնայ։ Օ, ինը որը արդէն հեռացել էր. Վելքթալին գրկիս մէջ բոնած, որդի, ասացի նորան, եթէ սիրումես երկինքը, եթէ սիրումես հօրդ և զաւակիդ, թաքցրուր քեզ այս իսկ բողեիս Գևելերի վրէժինդրութենէն. և ճանաչումեմ նորան, նա անողորմէ, նա կլուացվե քո արիւնով և նոյն արիւնը կթափէ, քո հօր ըսպիտակ մազերի վերայ. Խնայիր ինձ որդի, Խնայիր իմ կեանքը քեզ աղատելով»։

«Քառ լիցի ինձ, հայր իմ, պատասխանեց նա այնպիսի ձայնիւ, որ միանդամայն ցոյց էր տալիս նորա բարեպաշտութիւնը, բարկութիւնը և յուսահատութիւնը. քառ լիցի, և քեզնէ չեմ հեռանալ. ինձ համար աւելի քաղցը է քեզ պաշտպանելով մեռանիլ, քան թէ քեզնէ հեռի վայրկեան մի երկիւղի մէջ լինիլ քո կեանքի համար. Գևելերը և նորա բոլոր իշխանութիւնը չեն կարող խել ինձ նորա ծոցէն, որ ինձ կեանք է տուել, և կամիմ, և պարտ եմ. . . . Հնաղանդիր՝ կորեցի և նորա խօսքը խստութեամբ. իմ կեանքի համար ոչինչ վտանգ չկայ, թող և պահպանեմ մեր խրճիթը և քո դուստրդ, թող ևս հողամ որ ինչ հարկաւոր է, իսկ դու գնա, թաք կացիր մի քանի օր Աւնթերվարդի սարերում. Քլարան և և կ'գանք քեզ հետ կ'միաւորվենք, մինչ խոռվութիւնը կ'անցանէ, գնա այս բոպէիս. յառաջ աղաչում էի քեզ, այժմ հրամայումեմ, այժմ պատուիրումեմ որպիս քո հայր։

«Գլուխը քաշ քցեց կատաղի Վելքթալը, ծունդ իջառ
առաջես և մնաս բարեւ ասելով, իմ օրհնութիւնս խնդրեց. զրո-
կեցի նորան խանդաղատանօք, թափեցի արտասուքս նորա վե-
րայ, «Քլարան ընկաւ նորա ծոցը և իւր համբոյրներով սրբում
էր այն արտասուքը՝ որ 'ի զուր էր աշխատում թաքցնել զրժ-
բաղդ հայրը. խկոյն յետ այսորիկ հեռացաւ նա իւր դսաերէն
առանց անդամ մի յետս նայելոյ:

«Քլարան և ես մենակ մնացած՝ գարձ արինք մեր խրճի-
թը. իմ զիտաւորութիւնս այն էր որ՝ նոյն ժամայն գնայի Աւ-
գորք բոնաւորի մօտ, և իմ աչօք տեսանեի և իմանայի թէ՝
արդեօք ամենեի՞ն ուրացել էր նա արդար զգացմունքը. կամէի
մենակ գալ նորա ահապին աչաց առաջեւ և կամ ներումն ստա-
նալ որդւոյս համար, կամ աղաչանացս մէջ տանջանօք մեռա-
նիլ: Այս միջոցում յանկարծ տեսի որ՝ իմ խրճիթս շուրջ
պատեցին բազմաթիւ զօրականներ, ամենքը բարձր ձայնիւ Վելք-
թալին էին կանչում. նորան չ'զտած դէպի ինձ եկին, սկսեցին
հարց ու փորձ անել և վերջապէս կապանքով բեռնաւորած՝
տարին ինձ Գեղելի առջեր:

«Ո՞ւր է քո որդին, հարցըց նա ինձ տխուր և դժնդակ
ձայնիւ. սկիտի կամ փոխանակ նորա մեղապարտ լինիս, կամ
իրան բերես տաս իմ կտապութեանս: Արա ինձ ինչ կամիս,
պատասխանեցի ես, փառք Աստուծոյ որ քո բարբարոսութեանդ
պատճառով երկրորդ անդամ կեանք կ'շնորհեմ իմ որդւոյս:
Գեղելը նայեց ինձ տխուր և ակնապուշ հայեացքով՝ որոյ մէջ
յայտնի երեւումէր թէ՝ նորա անխոռով արիւնի ծարաւութիւնը
և թէ այն տարակուսութիւնը թէ, ի՞նչ չարչարանք հնարէ ար-
դեօք, որ իմ ծերութիւնս կարող չ'լինի տանել. վերջապէս յետ
երկար լոռութեան, նշան տուեց իւր գահիճներին և սոքա, այս
բարբարոսները, նորա առաջեւ մինչ դեռ ևս դէպի ինձ էր նա-
յում, մինչ նորա անագորոյն ժպիտը՝ որ առլացոյց էր նորա

անսպասուհաս մնալոյն, չեր հրաժարվել անողորմ երեսէն, բըռ-
նեցին ինձ, տարածեցին երկրի վերայ և պողովատիկ երկաթը
խորամուխ արարին տկար աչքերիս մէջ:

«Ի՞աւական է, ասաց Գևեսլերը, թողէք ապրի այդ ան-
զօր կոյրը, խորտակէք նորա կապանքը, և արձակեցէք որ՝ գնայ
միաւորվի իւր որդւոյ հետ: Տարին ինձ քարշքշելով և դուրս
ձգեցին պալտատէն: Չեռներս յառաջտարածելով, մի քանի քայլ
փոխեցի և ահա Քշարայիս ծոցը ընդունեց ինձ. այս խեղճիկը
իմ հետքէս եկելէր, բայց անիրաւ դահիճները արգելելէին նո-
րան առաջին շրջապատում: Օգացի ևս խկոյն թէ՝ Քշարայի
սրտին կապած եմ և թէ նորա արտասուքն են իմ վերայ թափ-
փում: Նորա ողբածայն հառաջանքի մէջ, լսումէի այդ խօսքը,
այդ իմ հոգւոյս համար քաղցր անունը՝ հայրիկ, հայրիկ, ևս
եմ քեզ մօտ. դադարեցրի նորա հառաջանքը և ցաւս նորանէ
ծածկելով, խնդրեցի որ ինձ ուղեկից լինի դէպի իմ բարեկամը,
դէպի որդւոյս բարեկամը: Ո՞ւկ ճանապարհումն ենք արգէն,
պատասխանեց Քշարան, իմ սիրոս յառաջադոյն ասելէր ինձ՝
թէ ուր պիտի երթայինք:

«Ահա մեք եկելինք, սիրելի Ալհիմ, բայց եղուկ ինձ,
որ չկարեմ քեզ տեսանել, զգումեմ որ՝ դու իմ մօտ ես, քո
ձեռնդ իմ ձեռնի մէջ է, և դողումէ իմ ցաւի պատմութենէն,
բայց՝ ոչ ապաքէն որդիս փրկված է, ոչ ապաքէն դու իմ բարե-
կամն ես. ա՛, ուրեմն դեռ ամեն բան կորուսած չեմ:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԱՅՍՊԻՍ խօսեց ծերունին, և այն ինչ վերջացրել էր իւր պատմութիւնը, Եղմեյը, Վլարան և Ճեմմին ողբալով անկան նորա վերայ. Ա իւհելմը անշարժ նստած էր. զլուխը ձեռի վերայ յեցուցած, հայեացքը դեպի ստոր, նորա կիսախուփ աչքերէն թափվում էին արտասուքի խոշոր կաթիլները, նորա սրտէն՝ որ ահագին ծանրութիւնով ճնշված էր, հաղիւ էր երեւում շունչը, նորա ձեռը՝ որոյ վերայ զլուխը հանգուցած էր, դողում էր ակամայ շարժմունքով: Յետ երկար և տրտում լրութեան, նա վերկացաւ յանկարծ, զրկեց ծերունիին, սեղմեց նորան իւր բարախուն սրտին, ջանք արեց որ՝ խօսի նորա հետ և միայն այս խօսքը կարաց ասել շնչասպառ ձայնիւ՝ «Ճայր, դու կ'ստանաս քո վրեժը»:

Սորանից յետոյ, կրկին լուռ և արտում, խօրին մտածութեան մէջ, սկսեց նորէն քննել և խորհել, որ ինչ յառաջ ևս խորհած էր, դարձաւ վերջապէս խաղաղ դեմքով դեպի ծերունին և հարցարեց նորանէ թէ՝ դիտէ արդեօք Վելքթալի թաքուսի տեղը: — Գիտեմ, պատասխանեց դժբաղդ հայրը, նա սկսի լինի Գեժելի սարերի խոր քարանձաւներում: այդ անքնակ և անմատչելի բարձունքը անծանօթ են բռնաւորի լրտեսներին և

դահիճներին. Մելքթալը երդմամբ խոստացելէ որ՝ առանց իմ հրամանի դուրս չկայ այս տեղեց: — Խնդրում էմ քեզ, ասաց Վիլհելմը, յատկապէս նորա օդտի համար, դարձնել նորան իւր խոստմունքը. իսկ դու, որդեակ իմ, պատրաստվեր իսկոյն ճանապարհ ընկնելու. բոլոր դիշերը դու պիտի գնաս և 'ի ծագել առաւօտուն լինիս Գէժելի սարերում. պառիր Մելքթալին և չդադարես, մինչև որ չդանես. դու կ'ասես նորան թէ՝ և յուղարկեցի քեզ յայտնել ամբարիշտ Գեսլերի նոր չարադրծութիւնը, որ ահա նորա ծերունի հօր աչքերը հանեց. դու կ'ասաս նորան այս իմ սուրը. Վիլհելմը նոյն ժամայն բացարեց իւր վերայից այն սուրը՝ որմէ երթէք չեր բաժանվել: Ճէմ մին պատկառանօք եկաւ հօր առաջեւ, ընդունեց նորանէ սուրը և կապեց իւր վերայ: Եզմէյը և Քլարան սարսափում էին, բայց չհամարձակեցան ոչինչ հարցանել Վիլհելմին. նայեցին Ճէմմիին, նայեցին միմեանց և զգուշացան ցուցանել իւրեանց անհանդստութիւնը այդ վտանգաւոր ճանապարհորդութեան մասին: «Օերունի Մելքթալը, զարմանալով լսած հրամանի վերայ, հարցարեց Վիլհելմին թէ՝ ի՞նչ էր արդեօք նորա միտքը: Քո որդին դիտէ, պատասխանեց Վիլհելմը, այս թուրի տեսքը միայն բաւական է որ՝ նա իմանայ թէ՝ ինչ պիտի անէ, ժամանակը սուլէ, 'ի զուր չկորցնենք. միայն այս կարեմ ասել քեզ՝ այսուհետեւ արդար վրէժխնդրութիւնը կատարվելու է:»

Այս խօսքից յետ, բոնեց նա Ճէմմիի կոնից և տարան նորան իւր հօր դերեզմանի վերայ. այս տեղ յառաջ երդում տուաւ նորան և յետոյ յայտնեց իւր դիտաւորութեանց մի մասը. պատմեց նորան իւր հնարքը և ամենայն պարագայքը՝ որ Ճէմմին ասելու էր Մելքթալին:

Դարձան յետոյ երկուքը միասին իւրեանց տուն. քաջալերված աղնուամիտ յուսով Ճէմմին պատրաստվում էր ճանապարհորդելու, մինչ Քլարան խնդրեց որ՝ ինքը ևս ուղեկից

լինի նորան նա պատճառ բերեց թէ՝ կամի գնալ իւր հօր գիրկը
ընկնել, կամի նորա համար տանել միրգ, հաց և այլ կերակուր,
որոց կարօտութիւնը անքնակ սարերում անշուշտնա պիտի կրէր։
«Օերունի Հենրիկոսը (Մելքթալը) արձակեց նորան։ Եղմէյը
լցրեց զանազան պաշարով ուռիից հիւսած մի զամբիւղ, պատ-
րաստեց նմանապէս կաթն և գինի, բոլոր տուաւ իւր որդւոյն,
զրկեց նորան, համբուրեց և յանձնեց Քլարային որ՝ արթուն
լինի իւր քաղցրիկ որդւոյ վերայ։ Ժեմմին վեր տուաւ իւր պո-
ղովատիկ գտւազանը՝ որոյ գործածութիւնը հայրը սովորա-
ցրել էր նորան, զամբիւղը զլիսի վերայ դրաւ, տուաւ իւր ձեռը
Քլարային և երկուքը միասին գուրա եկին, իբրև երկու մատաղ
որթեր՝ որք գիշերային խաւարում գեղերում են նոր արօտի
տեղ գտանելոյ համար»։

Ա իլհելմը ստուգապէս տեսաւ սոցա գնալը։ Ա իլհելմը
ինքը հագել էր գայլի մաշկեակ՝ որ սովորաբար գործ էր ածում
հեռաւոր որսորդութեան գնալուս, լայն գօտի էր կապել՝ զլու-
խը նմանապէս մաշկովն էր փաթաթել. խակ երեսի վերայ կաշեի
այն տեղին էր, որ գաղանի բերանը և ատամունքն են, ոտնե-
րում ուներ կօշիկներ արջի մորթից, ուսի վերայ կաշեայ կա-
պարձր լի փայլուն նետերով, ձեռում իւր ահագին աղեղը՝ որ
զեռ ևս անտեղի գործածած չէր. սորա վերայ յեցած, հանդիստ
հայելով դեպի Եղմէյը, այսպէս սկսեց խօսել նորա հետ։ «Ո՛վ
իմ կին, ահա թողնում եմ ևս քեզ և հեռանում եմ աստէն։
քեզ եմ յանձնում այդ հիւրին՝ որ իմ բարեկամիս հայրն է,
իբրև իմ յատուկ հայր. քո ամենայն հոգսը նորա համար պիտի
լինի. արթուն կացիր նորա մօտ, մինչ նա քնած կ'լինի. գիշեր
և ցորեկ ուշաղիր լինես թեթևացնելու և կանխատես լինելու
նորա նաև փոքրիկ տրտմութեան և ցաւոյն. վճարիր ամենայն
ժամանակ, ինչոր սկարտաւոր ենք դժբաղդութեան, ծերութեան

և բարեկամութեան։ Ըուտով ինձ կրկին կ'անսեք, երկու օր
բաւական է իմ ճանապարհորդութեան համար։ Ոչ ումեք մի
ասացէք թէ՝ ես գնացած եմ, և իմ տան դուռը փակած լինի
մինչեւ իմ վերադառնալը։ Այս ասաց, դուրս եկաւ իւր տնակէն,
և շտապով գնաց, բայց ոչ այն ճանապարհով, որով Ճեմմին եր
գնացել։

Մինչ այս մինչ այն՝ Ճեմմին և Քլարան ցած էին գալիս
սարէն և մտանում էին այն նեղ ճանապարհը՝ որ տանումէ դէպի
Ունթերվալդ պայոյտ տալով Արքորդի վերին կողմով, եկին սոքա
մի ձկնորսի մօտ, որ Ա իշերմի բարեկամն էր, բաղիսեցին սորա
դուռը և խնդրեցին նորան ծովակի միւս ավել անցուցանել իւ-
րեանց։ Բարեմիտ ձկնորսը, 'ի սրտէ ցանկալով օգնական լինել
այդ երեխաներին, վաղեց խկոյն, բաց արեց նուակի կապը, ձեռը
մեկնեց երեխաներին և բերեց նստեցրուց նուակի մէջ։ յետոյ
առաւ թիակները և սկսեց բաղիսել պայծառ ալիքը արագ և
հաւասար հարուածով։ Բնդդիմակաց ծովակի վերայ երեխայքը
դուրս եկին, շնորհակալ եղան ձկնորսէն և սկսեցին բարձրանալ
չոր սարերի վերայ, որով ծովակը շրջապատված էր։ Այս մի-
ջոցում Քլարան պահանջում էր Ճեմմիէն որ՝ բեռնը իրան
յանձնէ և սկսեց վիճել նորա հետ այդ անոյշ բեռնի համար,
որ Ճեմմին չկամէր թոյլ տալ նորան։ վերջապէս բաժանեցին
նոքա իւրեանց մէջ այդ ծանրութիւնը և երկուքը միասին բըռ-
նեցին զամբիւզը և այսպէս գնում էին դէպի վեր լեռնային ճա-
նապարհով, միմեանց հետ խօսելով, քաղցրութեամբ և սիրով
միմեանց նայելով։ երբեմն կանգնում էին իրը շունչ առնելոյ հա-
մար, բայց ճշմարտապէս խօսելոյ և միմեանց մօտիկին նայելոյ
համար։

Լուսինը արդէն աներևոյթ էր եղած. արշալոյար՝ որ այդ
ցուրտ եղանակին ուշէ ծագում, սկսել էր արդէն ոսկեջրել սա-
րերի ձիւնապատ դադաթները, մինչ մեր մանուկ ճանապար-

Հորդքը եկին Գեժելի ստորոտը, բարձրացան այդ սարի վերայ, սկսեցին որոնել աչօք գոնէ մի այծեպան կամ խաշնարած՝ որ կարող էր նոցա ցոյց տալ այն անշեն քարանձաւը, ուր թաքուցված էր Վելքթալը։ Աչինչ և ոչ ոք չերեւեց նոցա այդ անբնակ ապառաժների վերայ. 'ի զուր էին երեխայքը հեռի տեղորայք տարածում իւրեանց հայեցուածը, ամենայն ուրեք միայն սառնամանիք էին երեւում, կամ երբեմն մի քանի այծեամք կախված անգունդների եղերքէն, որք, մինչ տեսնվում էին ումէ և իցէ, անգէն անդ թռչունի արագութեամք փախչում էին։

Վերջապէս ութերրորդ ժամին, մի թեթև ծուխ ապառաժի միջին դուրս դալով, Ճեմմի հայեցուածը դեպի ինքը դարձոյց, և մինչ սա ցոյց տուաւ այդ ծուխը Վլարային, երկուքը միասին սլացան դեպի այն կողմը. վաղելով սառած հեղեղների վերայօք, եղենիի անտառների մէջ, հասին նոքա քարանձաւը, մախին նորա մէջ, տեսին մի բոցավառ կրակ և սորա մօտ մի մարդ նստած, որ չոր ճիւղեր աւելացնելով, հուրը բորբոքում էր։ Եյն ինչ քայլավտխի ձայնը լսեց այդ մարդը, դարձաւ, վերկացաւ տեղից, առաւ իւր սուրը և բարձրացրած վաղեց մատաղ ճանապարհորդների դէմ։ Ի՞նչ է սլիտոյ ձեզ, բարկութեամք հալց արեց նա։ Վեր քո երեխայքդ ենք, հայրիկ, պատասխանեց Վլարան, վաղելով նորա մօտ. սա Ճեմմին է, իսկ ես քո դուստրդ եմ. մէք քեզ համար կերակուր ենք բերել և քո կարօտութիւնդ առնուլ կամինք։

Այս ասելով, անկաւ նա Վելքթալի գիրկը, իսկ սա ձգեց խկոյն սուրը, ուրախութեան աղաղակ բարձրացրեց, գիրկը առաւ իւր աղջկան, անխնայաբար համբուրելսվ նորան, վաղեց նոյն ժամայն և Ճեմմիի մօտ, որ լուռ կեցած նայում էր, զըրկեց նորան և արտասուախառն դէմքով, յիշելով հօր և իւր բարեկամի Վիլհելմի անունները, սկսեց հետղշետէ զանաղան հարցումներ անել. վերջապէս տարաւ նորանց կրակի մօտ, նստե-

ցրուց և իւր արտասուբը սրբելով, պատրաստվեցաւ լսել նոցա
խօսքը:

«Քլարան զգուշութեամբ պատմեց իւրեանց գալոյ պատ-
ճառը և յայտնեց ծերունի Ճենրիկոսի հրամանը. այդ պատմու-
թեան ժամանակը, յանկարծ Քլարայի ձայնը սկսեց տկարա-
նալ, նա կամէր, բայց չկարէր ասել Գևելերի սոսկալի չարա-
գործութիւնը. երեք անգամ սկսեց և չկարաց վերջացնել, մին-
չե որ Ճենմմին հասաւ նորան օգնութիւն : «Ով Մելքթալ,
ասաց նա, տես մեր արտասուբը և խմացի՛ր մի նոր գժրաղղու-
թիւն ես . իմ հայրս յանձնել է ինձ որ քեզ յայտնեմ, իմ
հայրն ինձ ասել է, թէ՝ դու համբերութեամբ կ'լսես ինձ և քո
դուստր Քլարային խնայելով, քո կտիծը կ'չափաւորես. այս
խօսքերից յետոյ պատմեց նորան անիծեալ Գևելերի չարագոր-
ծութիւնը: Մելքթալը կատաղեցաւ, վեր թռաւ իւր աեղեց,
կրկին առաւ իւր սուրը և կամէր դուրս ձգել իրան քարանձա-
ւեն, կամէր նոյն բոպէին գնալ և լուացիել անողորմ Գևելերի
արիւնով. Քլարան ծունը իջաւ նորա առաջեւ և Ճենմմին ըս-
կսեց յորդորել նորան. միտդ բեր իմ հօրս, ասաց նա, մի թէ
մոռացել ես նորան, մի թէ նա քո բարեկամը չէ արդէն. լիբր
գոնէ ինչ որ հրամայել է ինձ քեզ ասել. Վելհելմը պատրաստ
է քեզ համար վրէժխնդիր լինել, նա այժմ Վելների մօտ է, և
այդ մի խօսքը բաւական է, որ բոլորը հասկանաս: Եհան իմ հօր
հրամանը՝ «Գնան որդի, ասաց նա, խմաց արա Մելքթալին
բոնաւորի նոր չարագործութիւնը. ոչ թէ կատաղութեամբ
պիտի մեր վրէժը առնենք, այլ քաղցրութեամբ և խոհեմու-
թեամբ: Ես գնում եմ այժմ Ծուայց, գնում եմ գտնել
Վելներին և ասել նորան որ՝ զօրաժողով լինի բոլոր իւր նա-
հանդում. Թողլ Մելքթալը գնայ Ատանց, նորա բարեկամները
և Աւնթերվաղդի գլխաւորները այն տեղ են. թողլ ժողովի, նո-
րանց և հրաւիրէ պատրաստել իւրեանց զէնքը, իսկ յետոյ թողլ

գնայ Արիւդգիի քարաձաւները , ուր Ա երները և ես շուտով
կ'զանք և կ'միաւորվենք նորա հետ»:

Վելքթալը ուշադիր եղաւ Ճեմմիի խօսքերին և վը-
բեժինողութեան ցաւալի ուրախութիւնը նորա դէմքի վերաց
նկարվեցաւ: «Ես հնազանդում եմ Ա իլհելմին , ասաց նա ,
ուրախութեամբ և շտապով կ'զնամ ժողովել իմ բարեկամնե-
րին . դու , սիրելի Ճեմմի , կարես պատասխանել հօրդ թէ՝ վա-
զեւ իսկ երկու հարիւր զօրականք քաջասիրտ և հաւատարիմ ,
բորբոքված ազատութեան սիրով , պատրաստ մեռանել այդ ա-
զատութեան համար , բայց յուսացած , յառաջ քան իւրեանց
մեռանելը , ջնջել աշխարհի երեսէն բոնաւորի հազարաւոր բա-
տրուկ զօրքը , — կ'բարձրացնեն ազատութեան դրօշը Ատանցի
հրապարակում: ահա այն վայրկեանը՝ որում քաջասիրտ կ'ըս-
պասէի , մինչեւ այժմ Ա իլհելմի և իմ պատուական հօր հրա-
մանները կապանքի մէջ ելն պահում ինձ , այժմ այդ քաջա-
զունքը թողնում են ինձ իմ կամոց . վազենք ուրիմն , շտապենք
դէպի յաղթութիւնը՝ որ մերն է , որ անտարակոյս է . ա՞յս ,
ի նշունք է սիրտս երվում որ՝ շուտով կոիւ մտնեմ անիրաւ
Ճեմմերի հետ . թող գայ նա իմ առաջ իւր բազմաթիւ դա-
շիճներով , իւր բոլոր իշխանութիւնով . ես քան զնա հզօր եմ ,
ես կ'զնամ նորա դէմ զինոված , ազատութեան , որդիական բա-
րեկաշտութեան , նախատեալ մարդկութեան անուններով:

Վելքթալը իսկոյն կամեր ճանապարհ ընկնել դէպի Ըս-
տանց , բայց մատադ Քըլարան արգելեց նորան և ստիպեց փոքր
ժամանակ թոյլ տալ բնութեան իրաւունքին , շնորհել իւր զա-
ւակին մի ժամ՝ նորա քաղցր սէրը վայելելոյ համար և իւր նուա-
զեալ մարմինը բերած կերակուրներով զօրացնել: Քաջասիրտ ,
գորովազութ Վելքթալը լարով գրկեց իւր անուշիկ դստրին ,
գրկեց նոյնազէս սիրով պատանի Ճեմմիին և յօժարեցաւ երե-
խերքի հետ նատել կրակի մօտ և ուտել նոցա բերած պարկեշտ

ընթիւքը՝ որ շատ շուտով վերջացրեց։ Յետ այսորիկ հազար դէնքը, դրկեց կրկին իւր գուտընին և Ճեմմիի ձեռը բըռ նած՝ ասաց՝ լսիր ինձ, որդեակ, ես պատրաստ եմ մեռանիլ մեր գործի համար և այդպիսի մահը անուշութիւն ես ունի իմ համար։ մեծահողի անձինք կ'նախանձին իմ վիճակին, բայց ես կամիմ, մինչդեռ կենդանի եմ, մի կարդաղըռութիւն անել իմ միակ գանձիս մասին, այն գանձիս՝ որ յետ իմ երկրի աղատութեան, ամեն բանէ թանգաղին է և քաղցր իմ սրտիս համար։ այդ գանձը, որդի, իմ Քըլարայն է, որ այսուհետեւ քեզ եմ յանձնում։ ահա քո կինը, Ճեմմի, միտորեք ձեր երկուքիդ ձեռ իմ ձեռիս մէջ, երդուեցէք իմ սրտիս վերայ, որ երերում է իմ հայրենեաց համար, ձեր և իմ հօր համար։ երդուեցէք միշտ միմեանց սիրել, սպրել և մեռանիլ միմեանց համար, խառնել ձեր ամենայն զգացմունքը մաքուր և եռանդուն սիրով, գուք այժմ այր և կին էք, որդեակք, և ես օրհնում եմ ձեզ իմ հօր և իմ բարեկամիս անուններով։ Քըլարան և Ճեմմին ծունք իջնին, խոնարհեցուցին իւրեանց դլուխները և միմեանց ձեռը բոնած՝ պատուով ընդունեցին հայրական օրհնութիւնը։ յորդ արտաստքը թափում էին նոցա երեխներէն։ Վելքթալը ինքը ևս չկարեր թաքուցանել իւր արտաստքը։ նորա աչքերը՝ բորբոքված հոգւոյ ուրախութենէն, փայլում էին արտաստքի միջից։ Ա երջապես՝ նա վեր կացրուց իւր երեխներին, համբուրեց նորանց կրկին, մնաս բարեւ ասաց, պատուիրեց երկրորդ անդամ, որ ինչ պիտեր առէին Ա իւշելմին։ դուքս եկաւ անձաւէն և շատաղով գնաց Ատանցի Ճանապարհը։

Երկու երեխայքը մենակ մնացած՝ չկարեին գիս ևս համարձակվել աչքերը բարձրացնել և միմեանց նայել։ Ենշարժ իւրեանց տեղում, ձեռ ձեռի բոնած, որպէս յառաջուց էին, նոքա մի տիսակ ստրառու էին զգում, խառն ուրախութեան, երջանկութեան և երկիւղի հետ, նոցա հողիքը, որք շատ և զտ-

նազան զգացմունքով տատանում էին, հաղիւ կարեին անդոր-
րութիւն գտանել. նոցա անմեղ և երեխայական ամօթխածու-
թիւնը այժմ միայն վախեցնում էր նորանց, իւրեանց առան-
ձնութեան մասին : Յառաջ Ճեմմին վստահացաւ և երերուն
ձայնիւ ասաց՝ Քլարա, դու այժմ իմն ես. քեզ վաղուց յայտ-
նի է որ՝ Ճեմմին ևս միայն քեզ է պատկանում, բայց որովհե-
տեւ այժմ մեր ծնօղքը վտանգի մէջ են, հարկ չէ մեզ ուրեմն
իրարօք վրաղիլ. գնանք, Քլարա, միաւորվենք իմ հօր հետ և
մեր ճանապարհորդութեան հաշիւը նորան տանք. իսկ մինչ իմ
հայրս և քո մեծարոյ պապը կ'հաստատեն այն օրհնութիւնը՝
որ Վելքթալը մեզ տուաւ, այն ժամանակ գուցէ ես կ'համար-
ձակվեմ քեզ ասել թէ՝ ո՞րքան երջանիկ եմ ես :

Քլարան առանց պատախանելոյ սեղմեց Ճեմմիի ձեռք,
դուրս եկաւ անձաւէն և երկուքը միասին սկսեցին յետ դառնալ
եկած ճանապարհով: Երեղակը՝ որ արդէն իւր շրջանի կեսն էր
հասել, թուխագ ամպերի տակէն հաղիւ էր լոյս տալիս. մի մոխ-
րագոյն քող ծածկել էր երկնքի կապտութիւնը. ձիւնի տարափ-
ները օդի մէջ թոչոտելով աւելի ևս սաստկացնում էին այդ
թխպութիւնը և նոյն ժամայն մի ցուրտ քամի բարձրացած՝
ձիւնը այնքան յորդացնում էր որ՝ աչք բանալ կարելի չէր լի-
նում. անձրեի նման դալով սաստիկ մըրկի ժամանակը, բոլոր
անցուդարձի ճանապարհները աներեւոյթ արեց և անդունդները
լցրեց և ծածկեց. այս պատճառով մեր գժբաղդ ուղեորները
աչքերը խփած, չկարելով դիմանալ եղանակի ահապնութեա-
նը, ստիպվեցան կանգնել և մի տեղի ապաստանի որոնել ապա-
ռաժների տակում: Ճեմմին Քլարայի համար էր վախում, իսկ
սա նորան հանգստացնելոյ համար ծիծաղադէմ էր ցոյց տալիս
իրան, դէպի օդը ցանելով իւր վերայ կուտփած ձիւնը: Ա եր-
ջապէս փոթորիկը փոքր առ փոքր սկսեց դադարել, ցորեկուայ
աստղի ճառ ողայթները արձակվեցան իւրեանց կապանքէն, պա-

տառելով այն քօղը՝ որ նորանց ծածկում էր և փայլեցնելով
ձիւնը իրիւ ալմաներ : Արեխայքը նորէն ծանապարհ ընկան,
բայց իւրեանց շաւիղը արդէն կորուսել էին, որովհետև ձիւնը
իրիւ տապաստ տիռված՝ հաւասարել էր բարձրութիւնքը և
խորութիւնքը : Ճեմմին Քլարայի ձեռնէն բռնած՝ սկսեց զգու-
շութիւնը յառաջ գնալ . նա իւր գաւաղանով քննում էր ձիւ-
նը և մինչ չէր տեսնում թէ՝ անվտանգ է, չէր թողնում Քլ-
լարային մի քայլ փոխել, իսկ սա միայն Ճեմմիի համար երկիւղ
կրելով և նորա հետեւէն գնալով, պիրկ բռնել էր նորա ձեռը և
պատրաստ էր պահպանել պատահած վասնգէն : Եյդ երկար և
դժուարին գնացքը, անդադար վասնգները Քլարայի աշքում
կարծիս թէ մի առանձին վայելութիւն ունեին :

Ատիպված լինելով խոտորվել ուղեղ ծանապարհէն և զր-
նոլ հեղեղների ափերով, մեր ծանապարհորդքը հաղիւ երեկոյին
հասին Աշխերդ անունով գիւղը : Ճեմմին խմացաւ այժմ թէ՝
ուր էին նորա և մինչ վեր ելաւ թիւս սարը, անկատկած էր ար-
դէն թէ՝ զիշերը պիտեր Վլդօրֆ մանեին . և սկսեց քաջալերել
իւր ընկերին և լուսինը նոյն ժամայն երեկով, ամենեին փա-
րատեց նոցա կրկին մոլորվելոյ կասկածաները : Արկուքը ևս հան-
գիստ գնում էին իւրեանց ծանապարհը ձախակողմեան ափով
այն գետին՝ որ անցանում էր Աւրիի նահանգի միջով . այս մի-
ջոցում յանկարծ հաւասարվեցաւ սոցա հետ մի մարդ, նետա-
ղեղը ձեռին, փաթաթված իւր լայն վերարկուի մէջ . ձիւն և
սառոց էին միայն երեւում սորա զլխոցի, վերարկուի և եղեմով
հիւսված մազերի վերայ . մօտ եկաւ սա դէպի երեխայքը՝ որք
տեսնելով այդ անձանօթին, կանգնեցին, և այլափոխված ձայնով
խօսեց նոցա հետ :

« Աիրելի երեխայք, ասաց նա . դուք տեսնում էք ձեր ա-
ռաջեւ ծանապարհից մոլորված մի որսորդ . բոլոր ընկերներիս
կորուսել եմ և ինքս չկարեմ հասնել Վլդօրֆ, ուր իմ բացա-

կայութիւնս անշուշտ մեծ անհանգստութութիւն պիտի պատճառէ. կարօղ էք, որդեակք, ուղեկից լինել ինձ մինչայդ քաղաքը, ձեր հաւասարմութեան եռանդը և ձեր օգնութիւնը ևս կ'վարձատրեմ: Ա արձատրութիւնը ցուցած երախտիքի մէջ է. պատասխանեց շուտով Քլարան, մեք զիտենք Ելդօրֆի ճանապարհը և այնքան ուրախութիւն կ'համարենք քեզ քո ընտանեաց մօտ ըերելը, որքան ՚ի հարկէ և դու կ'համարես, դարձուցանելով մեզ մեր ընտիր աղջականաց մօտ. Եկ մեզ հետ և միամիտ եղբք որ՝ մի ժամկից յիտ կ'լինիս քաղաքում: որսորդը միաւորվեցաւ երեխաների հետ և ուշադրութեամբ զննելով նորանց պայծառ զիշերում, միասին զնաց լութեամբ:

Հայց ահա մի կարծ միջոցից յիտ, գարճաւ նա զեպի Ճեմմին՝ ասան ինձ մաստաղ, ով են քո ծնօղքը և որտեղ է Ելդօրֆում ձեր ընտիրութիւնը: Աս մի երկրագործի որդի եմ, պատասխանեց Ճեմմին, իմ հայրս երբէք քաղաքում ընտիրութիւն չի ունեցել: — Ուր էնա հրաժարված ուրեմն: — Արերը և գաշտերը, ուր իւր երկիրն է մշտիում և առաքինութեամբ է վարփում: — Եռաքինութեամբ, ասաց որսորդը ժողովով, և չեի կարծում թէ՝ այդ անունը քեզ ծանօթ երտղայական հասակումդ: — Աս առաջին խօսքն է, որ երեխայական կաղկաղանօք սովորեցի արաւարերել, պատասխանեց Ճեմմին վսասհութեամբ: — Գիտես արդեօք՝ ի՞նչ է նշանակում այդ խօսքը: — ՚Ի հարկէ զիտեմ: — Եպա, բացատրիր ինձ: — Երեք խօսք բաւական են սորա մեկնութեան համար, այս է՝ Երկիւղ Տեառն, Աէր առ մարդիկ և Ետելութիւն գեղի նոցանեղիչքը: — Ով են այդ նեղիչքը: — Բանաւորները և նոցա գահիճները: — Նելուեախի մէջ բոնաւորներ չկան: Քլարայի սրտից մի ակամայ հառաջանքի ձայն դուրս եկաւ: Ճեմմին ոչինչ չպատասխանեց և որսորդը զլուխ քաշ քցած զնաց ժամմի լութեամբ: Ոօտեցան սոքա Ելդօրֆի պարսպին, արդէն պահապանների փայ-

լուն տէղերը շողշողում էին. խոժոռադէմ անձանօթը յանկարծ հարցրեց Ճեմմիին զմնդակ ձայնիւ՝ քո հօր անուն՝ ի՞նչ է: Քշարան գողելով ողիրկ բռնեց Ճեմմիի ձեռքը, իսկ սա՝ որոյ համար սուտ խօսելը անկարելի էր, փոքր ինչ տարակուսեցաւ և մինչ անձանօթը ստիպում էր, — նայեցաւ նորան վստահ դէմքով և ասաց՝ մենք ուրախութեամբ ցուցինք քեզ քո ճանապարհը. այդքան էր միայն այն մտերմութիւնը՝ որ գումեզ աղջեցիր. դու չես խմանալ իմ հօր անունը, որովհետեւ նորան միայն իւր բարեկամներն են ճանաչում: Ենիսոհեմ երեխայ, գոչեց յայնժամ որարդը բարկութեամբ, քո հայրը ինձանէ չի փախչել և դու իսկ չես գուրս գալ երկաթի կապանքից՝ որ քեզ համար պատրաստված է, մինչեւ որ կ'իմանամ քո ապստամբ ընտանիքը. գնա՛ ուրեմն, ես կարող եմ գտնել մեզապարտներին, որպէս կարող եմ և պատժել նորանց:

Եյս խօսքում հաստ նա պարսպի դուռը, յայտնեց իւր անունը, որ էր Գեհալեր և զինուորքը խկոյն դուրս եկան և խոնարհեցուցին նորա առաջեւ իւրեանց գեղարդները: Ա եր առեք այդ երեխելքին, ասաց անողորմ նահանդապեար, դրէք բանդը և փոյթ ունենաք խկոյն բերել իմ մօտ, եթէ ով և իցէ Ելդօրֆի բնակիչներէն կ'գայ խնդրել սորանց:

Պահապանները հնազանդելով, խկոյն շուրջ պատեցին Քշարային և Ճեմմիին և չինայելով ոչ նոցա տղայական հասակը, ոչ տկարութիւնը յիտ դժուարակիր ճանապարհորդութեան, բերին բերդը՝ որոյ մէջ մի մութ բանդ նոցա բնակութեան տեղի դարձաւ:

Ենվորով երկուքը ևս, քաղցրութեամբ միմեանց նայելով և իւրեանց սրտում շնորհակալ լինելով դահիճներէն որ նորանց իրարէ չ'բաժանեցին, առանց ինչ զարհութանաց, լսեցին ահաւոր բանդի հաստ դուռների փոկվելը, նառեցին մի սերայի վերաց, որ խղճալով քցել էին նոցա մօտ և բաժանեցին իւրեանց

մէջ մի կտոր կոշտ հացը՝ որ թողած էր նոցա։ Առանց ինչ
երկիւզի կամ խղճմտանքի սողտանաց, անհանդիստ լինելով
միայն այն խոռվութեան մասին, որ սղիտէր զգային նոցա ընտա-
նիքը կամ այն վտանգի համար, որ սպասում էր Ալհելմին,
եթէ կ'զար նա բո՞ստորի առաջեւ, երեխայքը յուսով էին և ՚ի
սրտէ ցանկանում էին որ՝ Խղմէյը և ծերունի Ներիկոսը կար-
ծեն թէ՝ իրանք Վելքթալի մօտ են և չիմանան նոցա դժբաղ-
դութիւնը՝ որ ինքեանք միայն կամեին կրել։

Եյսպիսի բարեպաշտ մտածմունքնով զբաղված՝ երկու
երեխայքը քնիցին, թէև բարբարոսի սուրը նոցա զլիսի վերայ
կախ էր, առանց շփոթվելոյ մահազուշակ երազներով, նոքա-
ճաշակում էին այն խաղաղութիւնը, այն հանդիսոր, որ միայն
առաքինութիւնը կարող է տալ մարդոյս նաև կապանաց մէջ.
իսկ նահանդապետը իւր պալատում, շուրջ պատված բազմա-
թիւ զօրքով, ամենայն իշխանութիւնը իւր ձեռում և որ կա-
րող էր իսկոյն ջնջել երկրի երեսից, ով որ իրան անհաճոյ էր,
— նահանդապետը զիշեր ցորեկ քուն չունէր. մի սոսկալի զար-
հուրանք տիրել էր նորա հոգւոյն. խաւարազէմ և կատազի,
աղմղված զանազան և միմեանց հակառակ խորհուրդներով, դո-
ղելով իւր կեանքի համար, նա իւր մտքում նորանոր տանջանք-
ներ էր հնարում, որք զուցէ կարէին զարհուրեցնել նորանց,
ումենակը սարսելով դողում էր. կամելով իւր չնչին կեանքը
պահպանել, ուրիշներին մահապարտելով, իւր և իւր կենաց
վախճանի միջոցը արիւնի լայնատարած դես կազմել, այսպէս
սկսեց նա մտածել։

Ով թէ, որքան սոսկալի պիտի լինի այն առելութիւնը՝
որ աղքը զգում է դէպի ինձ, զի ահա սորա երեխայքը ևս, ար-
կար երեխայքը չեն կարում թաղուցանել այդ՝ ուղեորից, ան-
ձանօթից՝ որ զիսպուածով յայտնվում է սոցա առաջեւ. ի՞նչ
պիտի ասեն ուրեմն սոցա ծերերը, երիտասարդները, ի՞նչպէս

չզարհութեմ և չսոսկամ ես այս ազգին, այս ապստամբներէն՝
որոց սերունդը օր քան զօր աճում է և բազմանում է այն յուշ,
այն փափագանոց մէջ որ՝ մի օր խլեն ինձանել իմ իշխանութիւնս և սրով թափանցեն իմ սիրտու բայց ես դիտեմ և
կարող եմ զգուշանալ սոցա հարուածներէն. ահ և գողուժն
կ'ձգեմ այս մարդկանց վերայ, որք կարեն փախչել իմ սոսկալի
դատաստանէն։ Ահա ես կամիմ մի նոր տանջանք ստեղծել, կա-
միմ մի նոր հնարք զտնել իմ թշնամիքս ճանաչելոյ համար. այլ
մի թէ ամենքը չեն իմ թշնամի, անկասկած է այդ, բայց ամեն-
քը չեն համարձակվիլ ինձ երեւել, ուրեմն յառաջադոյն քաջա-
սիրտները պիտի իմ սրոյ ճարակ լինին։

Այսպէս բարկութեան և ամբարտաւանութեան ցնորքի
մէջ, հազարաւոր անկարելի առաջարկութիւններ էր անում և
որ աւելի յիմարտագոյնն էր, այն էր ընդունում և փայփայում.
այն հրամանի մէջ էր նա աւելի արժանաւորութիւն տեսնում,
որ սաստկագոյն կարել ցուցանել նորա ատելութիւնը ընդդէմ
այն աղդին՝ որմէ ինքը սարսափում էր։ Վերջապէս նա որոշեց
մի անմիտ առաջարկութիւն, կամեցաւ բռնադատել Արիի բը-
նակիչներին անարդութեամբ կորացուցանել իւրեանց զլուխը մի
գդակի առաջեւ, որ նորա, այսինքն՝ անիրաւ նահանգապիտի,
զլխոցն էր. նորա կիասկորոյս բանականութիւնը՝ ի զուր էր ներ-
կայացնում նորան այդպիսի անպատշաճ և անօդուտ հրամանի
վտանգները. նա չկարաց աեղի տալ բանականութեան և անդէն
անդ հրամայեց կանչել իւր զօրապետներին, սկսեց անհանգըն-
տութեամբ հարցուփորձ անել իւր վարձկան զօրքի հաւատար-
մութեան և ջերմեռանդութեան մասին, բաշխեց նորանց շատ
դանձ, որ ապացոյց էր թէ՝ նորա ժլատութիւնը ևս տեղի էր
տալիս սոսկալի երկիւղին, և գարձաւ դէպի Ասոնեմը՝ որ նորա
մեղսամած ցանկութիւնների զաղանի և հաւատարիմ գործա-
կալն էր։ Վաղիւ՝ ի ծաղել առաւօտուն, ասաց նա, հրամայիր

մի երկար նիզակ ցցել Ալդորֆի հրապարակում։ ևս կամիմ որ
այդ նիզակի ծայրի վերայ իմ գդակս՝ որ ահա քեզ տալիս եմ,
յանդիման կացուցած լինի ամենայն հայեցողաց։ իմ բազաթիւ-
զօրքս թող շուրջ պատեն այդ հրապարակը և պահպանեն ձա-
նապարհի անցքերը, սոխակելով անցաւորներին խոնարհել պատ-
ւով այդ նշանակի առաջեւ, որ ներկայացնում է իմ, այսինքն՝
երկք նահանգների իշխողիս զօրութիւնը, և եթէ ումէ և իցէ
ընդիմութիւն կամ մի փոքրիկ տրաունջ լինի, իսկոյն սրով և
կապանօք սկիտի պատժի այն։ զու պարտաւոր ևս քննել այդ
չար մարդկերանց՝ որք ընութենէն ստեղծված ևն միայն սար-
կութեան համար և զուշակել նոցա հայեցուածէն, կամ դիմաց
դժադրութենէն նոցա գաղանի զգացմունքը թէ դէպի ինձ ատե-
լութեան, և թէ իւրեանց անկախութեան և քաջասրտութեան,
վասն զի քաջասրտութիւնը նմանապէս յանցանք է նոցա հա-
մար, որք սպարտաւորված ևն հնազանդել միայն։ գնաւ ուրեմն,
կատարիր այդ հրամանը, իսկ մեր այլ զործակալները թող ջանք
անեն զտանել այս բանդարկեալ երեխաների մեղապարտ ընտա-
նիքը։

Այն ինչ վերջացրուց նա այդ խօսքը, Ասոնեմ շտապում
էր արդէն ամենայն ինչ պատրաստել. զինուորքը կանխիկ ստա-
ցան իւրեանց թոշակը, ոսկին և զինին առատապէս բաշխվե-
ցաւ նոցա, լրտեսքը սիստեման քաղաքում և շրջապատ դիւ-
զօրեքում, սոքա մտնում էին բնակիչների տունը և սուտ ձեռով
պատմում էին իւրեանց ցաւակցութիւնը այն մասին թէ՝ եր-
կու անմեղ երեխայք զոհ են եղել Գտեսլերի խատասրտութեան
և նոյն ժաման նկատում էին լսողաց հայեցուածը որ՝ խմանան
այդ լուրի ազդեցութիւնը նոցա վերայ և մի փոքրիկ վեշտը կամ
ցաւակցութիւնը պատժեն իրեւ մի ահապին յանցանք։

Բայց Կախախնամութիւնը, արդար Կախախնամութիւ-
նը, որ հսկում էր Ալհելմի խրծիթի վերայ, թաքցրուց այդ

Խործիթը Գանալերի դործակալներէն. ոչ ոք չ'զնաց Եղմէյի մօտ,
որ մենակ նստած կոյր ծերունիի հետ, ժամերն էր համարում,
որ անցուցել էր հեռի իւր ամուսնէն և զաւակէն: Գիշերը ան-
ցաւ անհանգստութեան մէջ. միակ կանթեղը՝ որ լրյու էր տա-
լիս տան մէջ, և ոչ վայրկեան մի շիջաւ, ծերունի Ճենրիկոսը և
բարեսիրտ Եղմէյը ամենելին չքննեցին և անդադար խօսում էին
իւրեանց երեխերքի վերայ. հարիւր անդամ խօսքը կտրելով, ա-
կանջ էին դնում դունէն եկած որ և է ձայնին. ցրտաշունչ հողմը,
շելով տերևէ զրկված ծառերի մէջ, հաւատարիմ շուները հա-
շելով տոն շրջապատում, սարսկնում էին Եղմէյին. վեր էր
կենում նա, վազում էր գեղի գուռը, յուսալով թէ՝ Ժեմմին
պիտի լինէր, նայում էր և բացի գիշերային աղջամուղջը ոչինչ
չէր տեսնում, ականջ էր դնում ուշադրութեամբ, և բացի լեռ-
նային վազկան հեղեղների ձայնէն, ոչինչ չէր լսում, տրտում
գեմքով յետ էր դառնում խռովիալ ծերունիի մօտ և ջանք էր
անում թաքուցանել ծերունիէն իւր անհանգստութիւնը, իւր
երկիւղը: Երկի քո որդին նորանց չի թողել, հառաչելով ա-
սում էր Եղմէյը, քնիր, քնիր, աղնիւ ծերունի, ևս կ'մնամ
արթուն մինչի առաւօտ: Ճշմարիտ է, դուսար իմ, պատաս-
խանում էր Ճենրիկոսը, կարելի է որ՝ որդիս չի թողել նորանց,
ահա ևս հանգստանում եմ իմ համար, հոգս մի արա և քո վր-
դովիալ հոգիդ խաղաղացրուր: Եյսպէս ասելով, ծերունին
Եղմէյին չ'աղմկելոյ համար, ցոյց էր տալիս, իբրթէ ինքը հան-
գիստ է. երկուքը ևս մնում էին լուռ, կարծելով թէ՝ միմեանց
խարում էին, երկուքը ևս իւրեանց արտասուքը թաքուցանում
էին, բայց մինչ մի փոքրիկ ձայն էին լսում, երկուքը ևս խկոյն
թոշում էին իւրեանց տեղից, բայց աւաղ, ունայն էր նոցա
յոյսը:

ՊԵՄՆ ԵՐԵԱՐԳ

Հարեկամ, սասց գիւցազնը Ահրներին, հասել է արդէն
այն ժամը, որ պիտի՝ կամ մեր հոյրենիքը ազատենք և կամ
մեր տարաբաղդ կեանիքը վերջացնենք. այժմ ոչ քո խոհեմու-
թիւնն է ինձ հարկաւոր և ոչ քո խմաստութենէն եմ եկել խոր-
հուրդ հարցանելու, այլ քո քաջութենէն՝ որ պիտի զարթեց-
նեմ. սուս համար եմ բիրել ահա այս զենիքը. թողնենիք խոր-
հուրդները. այժմ հարկաւոր է զործել, որովհետեւ Գտեսլերի
նոր չարագործութիւնիքը վերջին նշանակն են տալիս մեզ:

Այս ասելով, վեր քցեց Անհների առաջեւ մի ծանր խորձ
լի նիզակներով, սուրերով և այլ սպատերազմական զէնքերով, որ
իւր ուսի վերայ էր բերել։ Անհները խաղաղակիտ ուրախու-

Թեամբ նայեց այդ բաներին և ասաց՝ յառաջ քան որ ինչ ինձ
ասելու ես, գնանք թաքուցաննենք այդ բազմագին գանձը մի ծա-
ծուկ տեղ, պատճառ որ՝ այս տեղ կարեն մեզ յանկարծ բռնել.
քանի որ բռնաւորի իշխանութեան ներքոյ ենք, մեք չենք կարող
ասել թէ՝ տուն ունենք:

Երկուքը միասին առին բոլոր զէնքը և բերին մի գետնա-
փորի մէջ թաքուցին, յետոյ դարձան տուն և նստեցին միա-
սին: Ա Ելչելմը պատմեց Գհեսլերի բարբարոսութիւնը, Ճենրի-
կոսի դառն վիճակը, նորա որդի Մելքթալի փախուստը և Ճեմ-
միի ճանապարհորդութիւնը այնու դիտողութեամբ որ՝ Մելք-
թալին խնդրէ խսկոյն գուրս դալ իւր թաքուստէն և նոյն երե-
կոյին հասանել Արիւդլի, ուր պիտի խորհրդակցութիւն անեն
իւրեանց վրէժինդրութեան մասին: Ա Երները ուշադրութեամբ
լսեց, խնդրեց Ա Ելչելմին կրկնել իւր մեծ խորհրդի մի քանի
պարագայքը, կշռեց այն զանազան արդելքը՝ որք կարէին հան-
դիպել և վիրջապէս, բաւական լինելով Ա Ելչելմի պատաս-
խաններով, որք կանխապէս քննվում էին, անկառ նորա դիրկը
և ասաց՝ սկսենք, բարեկամ, ես պատրաստ եմ:

Խսկոյն յետ այսորիկ, բաժանմիցին նոքա և այլեայլ ճա-
նապարհ գնացին, տանելով բոլոր զէնքը՝ որ պահեստում ու-
նեմն, իւրեանց բարեկամաց համար թէ քաղաքում և թէ շր-
ջապատ զիւզօրէքսւմ. տուին բարբարոսութեան թշնամիների
ձեռը այն զէնքը՝ որով պիտեր ջնջէին աշխարհից այդ անօրէն-
ներին և իւրեանց վրէժը առնեմն: Շատ դոհէ էին նոքա որ՝ ե-
ղեմը բոլորտիքը պատել էր և ձիւնը յորդութեամբ դալով, օրը
մթնացնում էր և ճանապարհների անցքը ապահովացնումէր:
Ա Ելչելմը և Ա Երները անդադար անցուդարձ էին անում զէն-
քը տարածելոյ համար. չհամարձակվելով բոլորը միասին վեր
առնել, մի մի հատ էին տանում և այսպէս տասնեւերկու ժամ
անցուցին նոքա այդ գործի մէջ, ում որ մի հատ զէնք էին տա-

լիս, նորան բորբոքում էին, երդմնեցնում էին առաջի Աստուծոյ, հասկացնում էին գաևութեագործութիւնները և դեպի վրէժինդրութիւն էին գրգռում. նոցա ձայնը հետզհետէ զօրանում էր, նոցա խօսքը աւելի ազդեցութիւն էր ստանում և այսպէս յառաջ էին գնում նոքա դեպի խրեանց աղատութիւնը:

Օրը ողջոյն այդ զըաղմունքի մէջ անցաւ և բոլոր զէնքը բաժանեվեցաւ: Վ իշելմը իւր համար թողեց միայն իւր աղեղը, իսկ Վ իրները իւր նիզակը: Յոգնած այդքան աշխատանքէն, եկին մտին սոքա Վ իրների տունը, մի թեթև հացկերութով իւրեանց ոյժը զըրացուցին և ոչ մի բոպէ հանգստանալով, միտ բերին Մելքթալին տուած խօսքը և նորէն ճանապարհ ընկան դեպի Արիւդլիի խորշերը, տագնապելով թէ՝ մի՛ դուցէ ժամանակը զուր էին կորուսել:

Գնալով ձիւնի միջով, որ հիւսիսային հողմը կուտել էր ամեն կողմէ, եկին հասին սոքա մի ծովակի ափ, և մինչ մութ զիշերում նաւակ էին որոնում, անսին ահա ամուր կապով պընդած մի փոքրիկ նաւ՝ որ ծովակի զայրացած ալիքը բաղխում էին դեպի ափերը: Վ իրները հարց արեց Վ իշելմից թէ՝ նորա նաւուղղութեան հոչակեալ յաջողակութիւնը կարէ՞ արդեօք փոթորկի հետ դիմամարտել: Մելքթալը մեզ սպասում է, պատասխանեց Վ իշելմը և մեր հայրենեաց վիճակը նորա արխասիրտ գործակցութեանն է կարօտում. ի՞նչպէս ես ուրեմն հարցանում՝ կարեմ արդեօք անցանել ծովակը. ես չգիտեմ այդ կարելութիւնը, բայց գիտեմ թէ՝ անշուշտ պիտի անցանենք. մեծ յոյս չունիմ իմ յաջողութենէն, բայց յոյս ունիմ առ Աստուծ՝ որ հսկում է մաքուր հոգւոց վերայ և որ կ'հաճի պաշտպան լինել աղատութիւն սիրողներին: Վ յս ասաց և իսկոյն վաղեց նաւակի մէջ նորա հետքէն և Վ իրները շտապեց: Վ իշելմը կտրեց նաւակի կապը; ձեռը մեկնեց դեպի զեկը և

Հեռացաւ ավիեն։ Եւ ահա, դիպուածով էր արդեօք, թէ՝ օդ-
նականութեամբ արդար Ամենակարողին՝ որ հսկում էր Հե-
լուետիայի ազատողների վերայ, քամիի ստուկութիւնը նուա-
ղեցաւ, փոթորիկը հանդարանցաւ, խաղաղ ալեքը տարին
Վիլհելմին՝ որ թիակները ձեռը առած, նեաի սլացման պէս
թուցանում էր նաւը։ Փութով անցաւ նա ծովակը և միւս
ավիեն հասած՝ նաւակը կապեց այն տեղ թոկով և երկու բա-
րեկամբը դուրս եկին և գնացին այն քարանձաւը՝ որ վաղուց
Ճանօթ էր նոցա։

Վելքթալը սորանց սպասում էր, և այն ինչ երեց Վիլ-
հելմը, վազեց նա և անկաւ նորա զիրկը, սեղմեց նորան իւր
սրտին, թափեց նորա վերայ իւր արտասուքը, յիշելով իւր հօք
և բարեկամի անունները, որք միօրինակ քաղցը էին նորա հա-
մար. հազիւ կարէր նա պահպանել իւր զգացմունքը՝ որք հեղ-
ձուցանում էին նորան։ Վիլհելմը նորա ձեռնէն բռնած, նը-
մանապէս արտասուում էր. եկին սոքա զրկախառնված, մտին
քարանձաւի ներսը, նատեցին մի սպառաժի վերայ և դադարե-
լով խօսել իւրեանց անձնական գործերի և ցաւերի վերայ, երեք
բարեկամբը սկսեցին միայն իւրեանց օգուտը քննել և մտածել։

Վիլհելմը առաջինը սկսեց խօսել. Վելքթալ, ասաց նա,
քո հայրը կենդանի է և իմ տանն է այժմ, թող քո սերը և որ-
դիապատկան ցաւակցութիւնը անվրդով և լուռ մնան առաջի
հայրենեաց. քննենք այժմ և զանենք այնպիսի անկասկած և
շուտափոյթ հնարներ, որով կարելի լինի մեր հայրենիքը ազա-
տել և նորա կրած երկարաւ նախատանաց, բարբարոսու-
թեանց և բռնութեանց վրեժը առնուլ։ Վելք ամենքս մեր նա-
շանգների մէջ վայելում ենք մեր եղբարց սերը, պատիւը և մը-
տերմութիւնը։ Վիճի քաջ բնակիչքը կ'զարթնեն, Վերների
ձայնը լսելով. նոքա պակասութիւն ունեին միայն զէնքի՝ որ
ահա Վերները և ես նոցա հասուցինք։ Այդ զէնքը և այն՝ որ

Ը վեծի մեր բարեկամները իւրեանց համար պատրաստել էին, բաւական են երկու հարիւր զօրականների՝ որոյ զօրապետը Վերներն է. մեք զիտենք նոցա հաւատարմութիւնը. նոքա մեղ երդուել են և մեք կարենք ապաւինել նոցա, որպէս մեղ խկ: Աւրիում և Ելդօրֆի պարապում, ուր բոնաւորի ներկայութիւնը արծարծում է սարսափ ու զարհուրանք և ուր նորա կառուցած աշազին ամրոցը կարծես թէ ապահովում է մինչի յաւիտեան նորա իշխանութիւնը, ինձ համար շատ դժգուար էր ընկերներ գտանել, որովհետեւ թէեւ ամենի սիրտը վառված է աղատութեան համար, բայց և այսպէս, Գհեսլերի բազմաթիւ դահիճները, նորա անարդ կամակատարելը, մեծ հողացողութեամբ և հսկողութեամբ մտադիր են որոնել այդպիսի անձինքը և պատժել նոցա նուիրական բոլբոքի նաև փոքրիկ կայծը: Աւրեմն ևս չկարեմ դեռ ևս ապաւինել Ելդօրֆի ընակիչներին, որովհետեւ նորա դողում են և մրմնջում են բռնաւորութեան ձաղկի տակ, անդադար տեսանելով անարդ տապարը բարձրացուցած այն մարդի վերայ, որի՛ համարձակվի միայն մտիկ տալ նահանգապետին: Ելդօրֆի ժողովուրդը չկարէ ընդդիմնորա զնալ, բայց և ոչ երբէք կ'յօժարի պահպանել նորան. ուրեմն անշուշտ պիտի տիրել Ելդօրֆին՝ որոյ շրջակայ դիւզօրէից մէջ ունիմ ևս հարիւրի չափ ընկերներ, ամենքը սպառաղինված՝ ամենքը քաջութեամբ ոգեւորված: Եհան այս է իմ խոստմունքս և իմ կարողութիւնս: Խօսիր այժմ դու, Վելքթալ, տուր մեղ Անթերվալդում ունեցած կարողութեանդ հաշիւը և այնուհետեւ մենք անփոփոխապէս կ'հաստատենք ժամը և ըուպէն, երբ պիտի ժողովենք մեր բոլոր դօքքը և զնանք կամ մեռանիլ և կամ աղատութիւն ստանալ:

Վելքթալը սկսեց խօսել մի այնպիսի ձայնիւ՝ որ ցուցանում էր թէ՝ հաղիւ կարել իշխել ինքն ինքեան: Ծարեկամք, ասաց նա, ևս ամենենին չեի կարծում թէ՝ այդքան զօրք կան

մեր ձեռի տակ , բայց այնու ամենայնիւ յաջողութենէն անցոյս
չեմ . յիսունի չափ առոյգ զօրականք Աւնթերվալդում արդէն
պատրաստի են . այսօր իսկ ես ամենքին տեսել եմ . նոքա ինձ
ընարեցին իւրեանց գնդապետ և ինքեանք պատերազմելոյ եռան-
դով վառված են : Բարեկամք , չպիտի կորուսանենք և ոչ մի
բոպէ , այլ այս իսկ դիշեր գնանք Ելդօրֆի պարապի տակ , ժո-
ղովինք մեր զօրքը այդ քաղաքի մեջ և յարձակվինք ամրոցի
վերայ . ընակիչքը մեզ կ'օդնեն , մեք կ'պատժենք նահանգապե-
տին : Վկ թէ , ի՞նչպէս կ'ցանկայի ես նորա աչքերը հանել նոյն
տեղում , ուր իմ հայրս Բայց ներեցէք ինձ , գժբաղդ որդ-
ւոյս՝ որ մոլորեցայ : Ես կ'ցանկայի որ՝ ոչ խաւարը դիշերի և
ոչ ձիւնը՝ որ երկիրը ծածկել է և ճանապարհները գժուա-
րացրել է , արգելեին մեզ վաղիւ իսկ մինչի ծագել առաւօ-
տուն լինել Ելդօրֆի հրապարակում . կ'ցանկայի մի պատերազմ
տալով իսկոյն , կամ տիրել միջնաբերդին և կամ 'ի կորուսա-
մատնվել : Եյո , 'ի կորուսա կ'մատնվինք , պատասխանեց Ա եր-
ները խազաղ դէմքով , և այդ մահը՝ որ անտարակոյս վառաւոր
մահ է , ամենելին անօգուտ կ'լինի մեր երկրի ազատութեան :
Չլեցի՞ր արդեօք ինչ ասաց Ա իլհելմը . հարիւր ընկերը՝ որոց
հաւատարմութիւնը նորան յայտնի է , ցրված են Աւրիի դիւ-
ղուեքում . նորանց ժողովելոյ համար ժամանակ է հարկաւոր .
բռնաւորը միշտ պատրաստի ունի չորք հազար անձնապահ զօրք .
Ելդօրֆի ժողովուրդը՝ որ Ճնշված է , Գեսլերի ծանր չարչա-
րանաց տակ , նորա զօրքի անիբաւութեանց տակ , չի համար-
ձակվել մեզ հետ միաւորվել . մեր ակար զօրքը , խառնիխուռն ,
մին միւսի քամակէն գալով , չեն կարող քաղաքի մուտքը բռնել
և կ'ջնջվին իւրեանց պատուարների տակում . երեք նահանգքը
անզօր են Գեսլերի իշխանութիւնը կործանելոյ համար , այն իշ-
խանութիւնը՝ որ հաստատած է սկայազօր կայսերութեան հիմ-
քիվերայ , որ ունի շատ ամուր տեղիք և սոցա պաշարումը ,

որքան և արագ լինի , կ'սերէ դեռ ևս Գաերմանիային ընդդէմ
մեր նոր զօրք ժողովել , առաւել բազմաթիւ քան մեր բոլոր
ազգը : Ուրեմն՝ հաւատացէք ինձ , յառաջ քան մեր դործը
սկսելը , պիտոյ է զանազան օգնութիւններ հաստատել մեղ հա-
մար : Վիթէ կարծում էք թէ՝ միայն մեք ենք բորբոքված
ազատութեան սիրով . միթէ օիւրիխ , Լուցեռնա , օուղ ,
Քլարիսի և Ափենցելի լեռնային բնակիչքը նմանապէս դողու
սարսափի մէջ չեն այն կասկածանքէ թէ՝ գուցէ ինքեանք ևս
մեղ նման կապանքի մէջ ընկճիվին . մի երկբայէք այդ մասին ,
այդ աղնիւ ժողովուրդքը անկախութեան ծարաւով պապակ-
վում են , իմ սիրտս վկայում է թէ՝ մի օր նոքա կ'լինին մեղ
հետ մի մարմին , մի հասարակապետութիւն՝ որ ահաբեր և
ակնածելի կ'լինի աշխարհի բոլոր թագաւորներին : Ուրեմն՝
փութացնենք այդ փառաւոր ժամանակը , յուղարկենք հաւա-
տարիմ պատգամաւորներ Լուցեռնա , օուղ և օիւրիխ , երդ-
նունք ամենեքեան և նշանակենք մի օր , մի նուիրական օր և
Ներւետիայի ազատութեան բոլոր բարեկամքս յարձակվենք
պատերազմով բոնաւորի վերայ . այսպէս և եթ մեք կարող
ենք խորտակել մեր հակառակորդներին , այսպէս և եթ Ալդօր-
ֆը մեր կողմը կ'անցանէ և շփոթված նահանգապետը բոլոր իւր
գորքով մեր զօրութենէն կ'նուածիվ , յառաջ քան թէ՝ նորա
սուրհանդակները ամեն տեղ արգելված՝ կարող էին տեղեկու-
թիւն տալ իւրեանց ինքնակալին թէ՝ ինչ վտանգի մէջ են :

Ա երները աւարտեց , իսկ Վելքթալը դեռ ևս մըմնջում
էր և մինչ նա կամեցաւ վիճել Ա երների հետ , Ա իլհելմը յա-
ռաջ եկաւ և սկսեց խօսել . Վիրելի է ինձ քո համարձակութիւ-
նը , ասաց նա Վելքթալին և ներելի է քո սաստիկ եռանդը ,
բայց ըստ իմ կարծեաց մահագոյժ են սոքա մեղ : Յարգելի է
իմ աչքում նմանապէս և քո խոհեմութիւնը , Ա երներ , բայց
նա ևս վտանգաւոր է : Ա այ այն սուրբ երդմնակցութեանը ,

որոյ գաղտնիքը թաքուցված չեն փոքրաթիւ սրտերի մէջ. մի աննշան յանցանք, մի չնչին խօսք, որ և է թեթև դիպուած կարեն վերիվայր անել բազմամեայ աշխատանաց արդասիքը: Եյդ բազմաթիւ քաղաքների մէջ, որոնց դու առաջարկում ես մասնակից անել մեր խորհուրդին, միայն մի մատնիչ բաւական է, որ՝ բոլոր մեր հայրենիքը առաւել սաստիկ սորկութեան կապանքի մէջ ընկճէ և նորա ընտիր ընտիր զաւակունքը տանջանքի մէջ՝ ի կորուստ մասնե: Աչ, ոչ, մեք չենք կարող մեր ազնուամիտ, մեր շքեղ խորհուրդը ում և է յայտնել. քաջայոյս եմ թէ՝ մեք ինքներս կարենք հիմնարկու լինել մեր ազատութեան և երբոր Աւրին, Շուայցը և Ռնմթերվալդը կ'կանգնեցնեն իւրեանց սարերի վերայ անկախութեան դրօշը, մեր կամ մեր ապագայ սերունդը կ'տեսնենք որ՝ բոլոր սահմանակից նահանգները կ'գան՝ կամ պատերազմել այդ դրօշի նելքոյ և կամ հանգիստ և խաղաղութիւն վայելել նորա սառւերում:

Անըներ, մեր դուրս գալոյ ժամանակն է, արդէն, խելքեղ, Մելքթալ, խնդրում եմ մի քանի օր ևս սովասել: Եհան դիտաւորութիւնքս ձեղ յայտնում եմ:

Ռնմթերվալդը և Շուայցը զինված են. ինչպէս դուք ասում էք, երեք հարիւր յիտուն պատերազմողք, այդ երկու քաջնահանգների մէջ, պատրաստ են ձեր հետքէն գնալ: «Կշանակեցէք նորանց, ոչ թէ մի քաղաք կամ գիւղ, այլ մի ձոր կամ անքնակ տեղի, ուր զանազան ճանապարհներով գնալով, ամենեքին նորա կ'հաւաքվին, կ'միաւորվին և ճանապարհ կ'ընկնեն: Վինչ դոք այս հոգսի մէջ կ'լինիք, ես կ'գառնամ Աւրի և օդնական ունելով ինձ քաջարի Գիւրստին, որ իմ ընկերների մէջ միայն ինքը գիտէ մեր խորհուրդը, կ'սկսեմ ժողովել, եթէ կարելի լինի, հարիւրի չափ բոնակալութեան թշնամիներ՝ որոց տրտունջը և արիասիրտ պատրաստութիւնը ինձ յայտնի լինելով, յոյս կ'տան թէ՝ նորա մեր հետ միասին արժանի են

յաղթութեան պսակին : Վաշազուն Գիւրսոր կ'գնայ, կ'գտնէ
նորանց Մատերանում, Խւրսերանում և այն բարձրաբերձ սա-
րելում, ուստի բղխում են Սար, Պէսսէն, Ծէյն և Ծօն գե-
տերը: Ես մենակ կ'մնամ Ելդօրֆում, ուր Գիւրսորի գործա-
կալը կ'գայ ինձ իմաց տալու թէ՝ նորա զօրքը արդէն ճանապար-
հումն են: Եյդ լուրը ստացած՝ իսկոյն կրակ կ'քցեմ մի մեծ
փայտակուտի մէջ, որ իմ ձեռօք պատրաստել եմ այս սարի վե-
րայ, ուր իմ բնակութիւնս է, և մինչ դուք կտեսնէք այդ կրակի
բոցերը, դուրս եկէք ձեր ընկերների հետ միասին դէպի ձեր ժո-
ղովատեղին . այս տեղից, մինչ ամենքդ 'ի միասին պատրաստ
կ'լինիք, գնացէք, որքան կարելի է շուտով, դէպի Ելդօրֆ:
Ես կշուկ եմ թէ ժամանակը և թէ հեռաւորութիւնը. Գիւրս-
որ Աւրիի քաջերի հետ, Աերները Շուայցի և Վելքթալը
Ունթերվարդի, պիտի հասանեն գրեթէ մի և նոյն ժամանակ քա-
ղաքի հարաւային, հիւսիսային և արևելեան կողմերէն: Ես այն
տեղ կ'լինիմ, քաջ բարեկամք իմ, և այն տեղ կ'լինիմ մենակ
ժողովուրդի մէջ և կ'հրաւիրեմ նորան յորդորանօք դէպի ա-
զատութիւն. իմ շրթունքս բարձրաձայն կ'հնչեն այդ պաշտելի
անունը՝ որ մեզ համար եղել է այժմ աղաղակ պատերազմի և
որ դուք նմանապէս բարձր ձայնով կ'կանչէք յարձակվելոյ ժա-
մանակը: Բնակիչքը զարմանքէ ապշված, տեսանելով և լսելով
թէ՝ Ունթերվարդը, Աւրին և Շուայցը, արագաթոիչ արշա-
ւանօք զալիս են իւրեանց օգնութիւնն, բնակիչքը յայնժամ, ա-
տելութեանէ գրգոված՝ բոլորովին անձնատուր կ'լինեն իւրեանց
կատաղութեանը ընդդէմ Պեսլերին և միաւորվելով ձեղ հետ,
ձեր քաջամարտիկ զօրքի թիւը կ'բաղմացնեն: Եյն ժամանակ
կ'յարձակվենք մէք ամրոցի վերայ, ուր բոնաւորը, զարմացած,
շփոթված, անարդ երկչութեամբ միայն՝ կարէ իրան պաշտ-
պանել: Շուտով սորանից յետ, դուք կ'տեսնէք մեր դրօշակ-
ները՝ որք կ'փայլեն ահապին պարապի վերայ և բոլոր Նելուե-

տիայն այդ առաջին յաղթութենէն շարժված՝ կ'գայ խնդրել
մեղ, որ արժանի անենք իւրեանց յետագայ պատերազմերում
մեղ հետ ընկերութեան պատույին:

Այն ինչ Վելչելմը վերջացրեց իւր խօսքը, Վելքթալը
անկաւ դիւցազնի գիրկը, ուրախութեան արտասուք թափելով.
Վերները ինքը հաւանեց նորա խօսքերին և ընդունեց նորա
խորհուրդը: Երեք ազատիչքը, առանց նորէն երդմամբ կապակ-
ցութեան՝ որ անօգուտ էր նոցա վեհանձնութեանը, երեք դիւ-
ցազունքը, յետ միմեանց կրկնելոյ թէ՝ մինչև հրդեհի նշանը՝
որ Վելչելմը պիտի տար, չտեսնեն, չեն շարժիլ իւրեանց տե-
ղից, բաժանվեցին միմեանցէ: Վերները և Վելչելմը յետ ե-
կին դեպի նաւակը, անցին ծովակը՝ որ արդէն խաղաղ էր և
միւս եղերբում Վերները գնաց Շուայցի ճանապարհը, իսկ
Վելչելմը Ելդօրֆի:

Վելչելմը ծովակի եղերբովն էր գնում. նա կամում էր
յառաջ քանի Եղմէյի մօտ դառնալը, իւր բարեկամներին տես-
նել Ելդօրֆում և նոցա հասկացնել իւր մեծ խորհուրդը:
Երեղակը արդէն փայլում էր, մինչ նա հասաւ քաղաք. յա-
ռաջ գնաց դեպի հրապարակը, ուր առաջին առարկան՝ որ
ապշեցրուց նորա տեսութիւնը, այն երկար նիզակն էր, ծայրի
վերայ հագուցած զարդարուն և ոսկեգործ դդակով. բազմաթիւ
զինուորներ շուրջ պատած այդ նիզակը, անցուդարձ էին անում,
կարծես թէ՝ պատուով պահպանելով այդ նոր նշանը Գեղեցի
իշխանութեան: Վելչելմը զարմացած, նիզակի մօտ եկաւ և
նոյն ժամայն տեսաւ որ՝ Ելդօրֆի բոլոր ժողովուրդը անար-
գութեամբ երկրապագութիւն էր տալիս դդակին, իսկ սպառա-
զինված դաշիճները, իւրեանց երկաթապատ նիզակներով, ա-
ւելի ևս կորացնում էին դեպի երկիր խոնարհողաց գլուխները:
Հազիւ կարելով տիրել իւր սրտմտութեանը, Վելչելմը կանդ-
նեց առաջի այդ տեսարանին. նա չէր հաւատում իւր աչքե-

րին. Եռու և անշարժ մնաց իւր տեղում, թեք ընկած իւր մեծ
աղեղի վերայ և արհամարհանօք նայելով դէպի անարդ ժողո-
վուրդը, դէպի չարագործ զօրականները:

Ասոնեմը՝ որ այդ պահպանական զօրքի հրամանատարն
էր և որոյ վայրենի եռանդին ախորժ էր գերազանցօրէն կատա-
րել բռնաւորէն ընկալած հրամանը, իսկոյն նկատեց այդ նորեկ
մարդին՝ որ մենակ խրոխտ և անվեհեր բարձրացրել էր իւր զը-
լու իր կորացած ժողովուրդի միջում։ Ասոնեմը վազելով եկաւ
նորա մօտ և կատաղի աչօք նայելով դէպի նա, ասաց. ով և
լինիս դու, դողեր իմ պատժից՝ որ պատրաստ է քեզ համար,
եթէ չես շտապիլ հնազանդել Գհեսլերի հրամանին։ Այնուհետեւ
չդիտես հրատարակեալ պատուիրանը՝ որ պարտաւորում է
Արդօրֆի բնակիչներին յարդանօք մեծարել այդ նշանակը Գհես-
լերի իշխանութեան։ Ես չդիտեի այդ, պատասխանեց Վիլ-
հելմը, և չկարեի մտածել երբէք թէ՝ իշխանութեան մոլեգնու-
թիւնը կարէ հասանել մինչ այդ ծայրագոյն աստիճանը բռնա-
ւորութեան. բայց՝ ժողովուրդի անարդութիւնը արդարացնում
է նորան, վասնորոյ ևս ոչ միայն չկարեմ մեղադրել, այլև հա-
ւանում եմ Գհեսլերին. նա իրաւունք ունի մեզ հետ, իբրև ըս-
տրուկների հետ վարվել. նա պիտի շատ անարդ կարծիք ունե-
նայ այդ վատ անձանց վերայ, որք իւրեանց ենթադրում են
նորա մոլի հաճոյքին, բայց որ ինչ ինձ է պատկանում, ևս խո-
նարհեցնում եմ իմ գլուխս և երկրազագում եմ միայն Աստուա-
ծութեան։ Ճաղիքէ, ասաց Ասոնեմը, դու կ'քաւես այդ յանդը-
նութիւնը այժմ իսկ. ծունք դիր իսկոյն, եթէ չկամիս որ՝ ևս
զէնքս բարձրացնեմ քեզ պատժելոյ համար։ Ես ինքս կ'պատ-
ժեի ինձ, պատասխանեց Վիլհելմը, եթէ հնազանդէի հրա-
մանիւլ։ Այս խօսքում, անդութ Ասոնեմը նշան տուաւ և խու-
ռըն դահիճները ընկան Վիլհելմի վերայ, խլեցին նորա ձեռ-
նէն իւր աղեղը, յափշտակեցին կասլարձը, շուրջ պատեցին

փայլուն սուրերով՝ որք ուղղված էին դէպի նորա սիրտը և քաշ-
քշելով տարին դէպի նահանգապետի պալատը:

Հանգիստ կացած զինուորների միջում, խուլ դէպի նոցա
մեծամեծ սպառնալիքը, ձեռները սրտի վերայ խաչած, Ա իւ-
հելմը եկաւ բռնաւորի առաջեւ, արհամարհանօք նկատեց նո-
րան, թոյլ տուաւ, առանց միջահատելոյ, խօսել, վասն զի ան-
երկրայ էր թէ՝ ինքը պիտի մեղապարտ լինի, ուստի և ան-
վեշտ լուութեամբ սպասեց որ՝ Գեսլերը սկսէ հարցմունք անել:

Ա իւհելմի խաղաղ դէմքը, երեսի անվորով գծագրու-
թիւնը զարմացրին և շփոթեցին նահանգապետին. մի ակամայ
սարսափ տիրել էր նորան, մի գաղտնի զգացումն գուշակում
էր նորան թէ՝ նորա առաջեւ այն մարդն է, որ պիտի պատժէ
նորան իւր եղեռնագործութեանց համար. նա վախում էր իւր
հայեացքը դէպի Ա իւհելմը ձգել և տարակուսում էր իսկ հար-
ցանել նորան. վերջապէս մի այլայլիալ ձայնիւ այսպէս խօսեց
նա. Ի՞նչ սպատճառ ունէիր գու չ'հազանդել իմ հրամանին և
չ'տալ իմ իշխանութեան որ և իցէ նշանին այն պատիւը, այն
յարգանքը, որով պարտաւոր ես ինձ : Խօսիր, պաշտպանիր
քեզ. ես կարող եմ դեռ ես ներել քո յանցանաց : Եյլ խօս-
քում Ա իւհելմը նայեց նորան դառն ժպտանօք : Պատժիր ինձ,
պատասխանեց նա, բայց մի հարցրու իմ միտքս, որովհետե-
ղու չ'կարես երբէք ոչ ճանաչել ճշմարտութիւնը և ոչ պաշ-
պանել նորան : Կամիմ լսել քո բերանից, ասաց Գեսլերը,
կամիմ որ՝ դու ինքդ հասկացնես ինձ իմ պակասութիւններս
և իմ պարտաւորութիւններս : Ես բռնաւորի ուսուցիչ չեմ,
պտտասխանեց Ա իւհելմը, բայց այն սարսափելի ատելութիւ-
նը՝ որ ես զգում եմ նոցա ներկայութենէն, չ'կարեն նուաղե-
ցնել իմ քաջարտութիւնս, ուստի ես կամիմ յիշել նոցա չա-
րագործութիւնները և գուշակել նոցա ապագայ վեճակը : Ա ը-
սիր ինձ ուրեմն, Գեսլեր, որովհետեւ դու յօժար ես որ՝ ես
խօսիմ:

Արացաւ ահա չափը. գժբաղբութեան բաժակը՝ որ մեր
վերայ զայրացած երկինքը կամեցաւ քո ձեռնը տալ, լիութե-
նէն թափում է : Աստուած քո ձեռնով սպառեց մեր վերայ
իւր բարկութեան նետերը. Եորա արդարութիւնը պատրաստ է
այժմ քեզ կործաննել : Ասիր այն անմեղների բողոքը, որք քեզնէ
պահված են բանդերում. լսիր այն որբ երեխաների բողոքը՝ ո-
րոց այրի մայրերը քեզնէ են պահանջում իւրեանց ամուսիննե-
րին, իւրեանց երեխայից ծնողներին, որք քո հրամանով տան-
ջանաց մէջ շնչառապառ են եղած . տես նոցա արիւնաթաթաւ
ողիքը՝ որք թափառում են շուրջ պատած քո բնակարանը, որք
քո քունը շփոթում են, որք քո առաջեւ են գալիս, իւրեանց
լայն խոցուածները, իւրեանց պատառոտեալ, երերուն մարմին-
ները ցուցանելոյ համար. նոցա արիւնը ցայտում է քո ձեռնե-
րէն և զարթեցնում է քեզ՝ ի մէջ գիշերի. գու տեսնում ես
այդ արիւնը զիշերային խաւարի մէջ, գու տեսնում ես այդ
և քո աչքերը՝ ի զուր են խփում որ չաեսնեն : Աակաւաթիւ
կենդանի մնացածները՝ որք իւրեանց ժառանգութիւնը, իւ-
րեանց ստացուածքը, իւրեանց քրտնաջան աշխատանաց պլ-
տուղները քո անյագ աղահութեանդ են թողել, վախել են,
թաք են կացել անտառների խորքերում, սարերի անձաւներում:
Ե՞նչ է գործում այս տեղ այդ երերեալ ժողովուրդը՝ որոյ
համար քո անունը անգամ տուաւել զարհուրելի է, քան դը-
ղոդիւնը ձիւնի մեծամեծ հատուածների՝ որք սարերի բարձրու-
թենէն անկանում են, մեր զիւզորէից գերեզման դառնալով.
Ե՞նչ է գործում նա, զիտե՞ս արդեօք. ապառաժների վերայ
ծունը իջած, ձեռները դէպի երկինք տարածած՝ վրէժխնդրու-
թիւն է պաղատում. իւր Արարչին աղաչում է բնաջինջ առ-
նել մարդկային ազգի թշնամիին: Ահա, Գհեւեր, ես քեզ յայտ-
նեցի բոլոր մի ազգի աղաչանքը, բաղմաթիւ անմեղների բո-
ղոքը, այն անմեղների՝ որք հալածված, յափշտակված, թակ-

ված և զոհված են քո հրամանով . այդ արիւնը՝ որ քո ձեռօք
անդադար թափվում է և որոյ թանձր ծուխը, իբրև ամսկ բար-
ձրացած՝ շուրջ է պատել քեզ, այդ արիւնը երկինք է հասել .
մեր ողբի ձայնը հասել է մինչի գահը Ամենաբարձրելոյն՝ որոյ
արդարութիւնը քո պատիմն է պատրաստում և իմ հայրե-
նեաց ազատութիւնը . այս իմ բաղձանքս է և իմ խորհուրդս:
Դու ինձանէ պահանջեցիր խօսել, ահա ես կատարեցի քո կամքը .
աւելի ինչ չունիմ ասելու, որովհետեւ ես չկամիմ մինչ այն աս-
տիճան անարդանալ իմ բանականութեամբ, որ քեզ ինչ և իցէ
ասեմ քո անխելք հրամանիդ մասին , այն ցնորդի մասին , որ
ստիպում է Ուրիի դժբաղդ բնակիչներին ծունը կրկնել քո դր-
դակի առաջեւ : Այժմ դու ամենայն ինչ գիտես, կարես ուրեմն
հրամայել որ՝ իմ տանջանքս սկսեն :

Գեսլերը լոռութեամբ ականջ դրեց . նա իւր բարկութիւնը
զսպում էր որ՝ աւելի լաւ հաստատէ իւր մտքում այն հարուա-
ծը՝ որ պիտի տար Վիլհելմին . նա իւր կատաղութիւնը ար-
դելեց առ ժամանակ այն յուսով որ՝ նոր և անօրինակ տան-
ջանք հնարե վրէժինդրութեան այն մարդից՝ որ կարծես թէ
արհամարհում էր մահը : Այս միջոցում նա միտը բերեց այն
երկու երեխերքին , որ երեկ հրամայել էր շղթայակապ բանդի
մէջ ձգել . միտը բերեց նոցա համարձակախօսութիւնը և բաղ-
դատելով Վիլհելմի խօսակցութեան հետ , նորա հնարագէտ
կատաղութիւնը երկմտեցաւ , տագնասապեցաւ և վերջապէս գու-
շակեց թէ՝ այն երեխայքը՝ որք այդքան յանդուգն էին և թա-
փանցված բոնակալութեան ատելութեամբ , պիտէր պատկա-
նէին Վիլհելմին՝ որ եկել էր իւր խրոխտութիւնը ցուցանելու .
Գեսլերը կամեցաւ իսկոյն տեղեկանալ այդ բանին և ծածկա-
բար հրամայեց բերել իւր առաջեւ այն երկու երեխերքին :

Այսնեմը վաղեց այդ հրամանը կատարելու , իսկ Գեսլերը
կեղծիւ ծածկելով իւր բարկութիւնը և կերպարանելով իբր

բնաւ գրդոված չեր, հանդարտութեամբ Ա իլհելմին հարցու-
փորձ էր անումնորա դրութեան մասին Աւրիի մէջ. Ա իլհելմը
չ'ձածկեց իւր անունը՝ որ Ելդօրֆի մէջ հոչակված լինելով,
զարհուրեցրուց նահանգապետին։ Ի՞նչ ասացիր, հարցրեց նա
զարմացած. դու նաև ես, որոյ նաւավարութեան ճարտարու-
թիւնը այդքան համբաւված է. դու ես, որոյ անսխալ նետը և
ոչ անգամ մի վրիպել է իւր նպատակին։ Ես եմ, պատասխա-
նեց Ա իլհելմը և ամօթիցս շառագունում եմ (կարմրում եմ)
ահա, որ իմ անունս յայտնի է միայն այնպիսի յաջողութիւն-
ներով՝ որք ոչինչ օգուտ չեն բերել իմ հայրենեաց. այդ ունայն
պարծանքը չ'արժէ այն մահուան՝ որով պիտի դատապարտ-
վիմ, ազատութեան անունը յիշելով։

Այն ինչ Ասոնեմը դարձաւ, իւր հետ բերելով Քլարային
և Ժեսմիին, Ա իլհելմը տեսաւ իւր որդիին, Ճիչ արձակեց,
սլացաւ, վազեց դէպի նա։ Ով իմ Ժեսմի, ով իմ որդիս, ա-
սաց նա, ես կարեմ դեռ ես զրկել քեզ. . . բայց այս ի՞նչ տեղ
ես դու. . . , ինչո՞ւ համար. . . , ո՞րպէս. — Աչ, ոչ, պատասխա-
նեց շուտով Ժեսմին, տեսնելով Ա իլհելմի վտանգը և հա-
կանալով այն վիճակը՝ որ Գեսլերը պատրաստում էր իւր տա-
րաբազդ ծնողաց համար. Աչ, դու իմ հայրս չես, դու ինձ ա-
մենելին անծանօթ ես, ես այս տեղ ընտանիք չունիմ։ Ա իլ-
հելմը զարմացած, ձեռները բարձրացրած, անշարժ մնաց իւր
տեղում, նա չ'կարաց իմանալ թէ՝ ինչո՞ւ է իւր որդին հրա-
ժարվում նորա զրկախառնութենէն և համարձակվում է ու-
րանալ անգամնորա հայրութիւնը։ Քլարան աւելի ես զար-
մացրեց նորան, հաստատելով Ժեսմիի ասածը և կրկնելով թէ՝
Ա իլհելմը նոցա հայրը չէ։ Ա իլհելմի սիրար լցվաւ տրանջա-
նօք, նա խռովեցաւ այդ խօսքերէն, իսկ Գեսլերը՝ որ կատաղի
աշօք նոցա բոլոր շարժմունքը նկատում էր, Գեսլերը՝ որ տե-
ղեկացաւ իրան հարկաւոր դադտնիքին, վայելչութիւն էր զգում,

տեսանելով միանգամայն հօր և երեխաների երկիւղը , զարմացումը և ցաւը : Մի սոսկալի ուրախութիւն նկարվեցաւ նորադեմքի վերայ . նորա հայեցուածը փայլում էր թաղծալից լուսով : Խնձ չխարեցին , ասաց նա իւր մաքում և դարձաւ դեպի Վելիչելմը . ահա քո որդին , ասաց նա , և սա ինձ անարգանք է ցուցել . իմ համբելութիւնս վաղուց զգում է այս տեղ քո թշնամնը . կամելով քեզ մի այնպիսի պատիժ տալ , որ հաւասար լինի քո յանդգնութեան , ահա յայտնում եմ քեզ , լըսիր : Ես կամիմ քեզ պատժելով ևս մեծարանք ցուցանել այն հազուագիւտ տաղանդիդ , որով պարծենում է քո բարեբաղդ երկիրը . ես կամիմ որ՝ տեսանելով իմ արդարութիւնը , Ալդորֆի ժողովուրդը հիանայ քո յաջողակութեանդ . ահա կը տան քեզ քո ազեղը , կ'կանգնեցնեն որդիիդ քո առաջեւ , կը դնեն մի խնձոր նորա գլխի վերայ , որ պիտի նպատակ լինի քո նետին . եթէ քո ձեռնդ՝ որ միշտ անվրէպ է , կ'թոցնէ նետով այն խնձորը , ես կ'ողորմիմ այնուհետեւ ձեզ երկուսիդ ևս և կը տամ ձեզ ազատութիւն , իսկ եթէ դու յանձնատու չես լինիլ այդ փորձը կատարելու , քո որդին աչացդ առաջեւ կ'մեռանի : Ով բարբարոս , աղաղակեց Վելիչելմը , ո՞ր դժոխքից դուրս եկած դեր շնչեց քո մէջ այդ ժանտալից միտքը : Աստուած արդար , որ ամենայն ինչ տեսնում ես և ամենայն ինչ լսում ես , կ'համբերեն արդեօք մարդկային անդթութեան այդպիսի ահազին չափազանցութեանք : Աչ , ոչ , ես չեմ կարող ընդունել այդ փորձը , չեմ կարող լինել որդեսպան . ես քեզնէ մահ եմ խընդիրում և նոյն քո դահիճներէն՝ որք ահա այս տեղ են . սոքա ամենքը՝ որք քեզ շրջապատել են , հարիւր անդամ իւրեանց ձեռները լուացել են արիւնով , թող ուրեմն դարձնեն իւրեանց սուրերը դեպի ինձ , թող ուղղեն դեպի իմ սիրտս , ես քեզնէ խնդրում եմ այդ , ես քեզ աղաչում եմ , միայն թէ՝ ես մեռանէի անմեղ , մեռանէի իրեւ մարդ և հայր : Կսիր ինձ , Գետ

լեր, քո բազմաթիւ պահապան գօրքը, այդ ժողովրդի օրինակը, իմ չարչարանաց յայտնի և երեկոյի լինելը չկարացին կորացնել իմ գլուխը քո առաջեւ. և լաւ համարեցի մահը քան անարգութիւնը. իսկ արդ՝ այդ մահը ստանալոյ համար և իմ ձեռնով որդւոյս սիրաը թափանցելոյ սոսկալի վտանգէն ազատվելոյ համար, ահա ևս ծունը եմ դնում քո առաջեւ, խոստացիր ինձ մահ, և ևս ահա խոնարհում եմ առաջի քո ամբարտաւանութեանդ: Աչերբէք, աղաղակեց Ճեմմին, որոյ աղէխարշ ձայնը կարծես թէ դահիճներին անգամ վշտակցութիւն աղդեց. ոչ, մի համաձայնիր սորա կամաց հետ. ևս ընդունում եմ առաջադրեալ փորձը. ի՞նչ և պատահի, դու խոստացել ես որ՝ իմ հայրս աղատ լինի: Քաջալերիր քո սիրաը, հայր իմ ընտրեալ. թող երկնային բարութիւնը առաջնորդէ քո ձեռը, թող նա քո որդիին ապահովէ: «Երիր ինձ որ՝ իմ դորովասրտութիւնը կամեցաւ վայրկեան մի ուրանալ և չճանաչել քեզ. ևս սարսափում էի, ևս դողում էի քեզ համար, միայն քեզ համար. քեզ աղատելոյ համար, ևս հրաժարվեցայ այն բարութենէն՝ որ աշխարհում ամեն բանէ թանգարին է ինձ. հրաժարվեցայ քո որդիութեան քաղցր անունէն. հայր իմ, քաղցրիկ հայր իմ, ներիր ինձ, թոյլ տուր ինձ բիւր անգամ կրկնել այդ անունը՝ որ ևս արգելել էի ինձ յիշել. հաստատ գիտացիր որ՝ դու ինձ չես սպանիլ, մի զաղանի աղդեցութիւն գուշակում է այդ. թող ինձ տանեն, եկ և դու, Քըարա, բայց զգուշացիր որ՝ մայրս ոչինչ չխմանայ:

Այս խօսքերից յետ, Ճեմմին անկաւ իւր հօր զիրկը. Վելչելմը սկսեց նորան համբուրել, սեղմել իւր սրտին. կամում էր խօսել նորա հետ, բայց չեր կարում. յորդ արտասուքը ծովանում էին նորա աչքերից. հաղիւ կարաց նա երերուն ձայնիւ և փղձկանօք միայն այս խօսքը ասել, չէ, որդի, չէ, իմ քաղցրիկ որդի: Քըարան ուշաթափ վեր ընկաւ, զինուորքը տարին նորան

գեսլի պալատը. անողորմ՝ Գևալերը՝ որ այս տեսարանէն ամենէն ի դութ չշարժեցաւ, նոյն սոսկալի հրամանն է կրկնում. նա վերջին անգամ թոյլ տուաւ ընտրել կամ որդւոյ մահը, կամ իւր ասած փորձը: Ա իլհելմը գլուխը քաշ քցած՝ մի քանի բոսկէ մնաց անպատճախան, Ճեմմիին իւր գրկում պահելով. յետոյ յանկարծ գլուխը բարձրացրեց և նայելով նահանգապետին, լացէն կարմրած և սրտմտութենէն կայծակնարձակ աչքերով, պատասխանեց՝ թող տանեն ինձ հրապարակը:

Հայր և որդի թե ի թեի անգէն շրջապատեցան պահան զօրքով և դուքս եկին պարսպից Առանեմի առաջնորդութեամբ: Ծոլոր բնակիչքը՝ որք իմացել էին թէ՝ ի՞նչ սոսկալի տեսարան էր պատրաստվում, շատապելով վազում էին գետի նոյն հրապարակը. ամենքը մրմնջում էին իւրեանց սրտի մէջ, բայց ոչ ոք չէր համարձակվում իւր վշտակցութեան զգացումը յայտնել: Երկչոտ հայեցուածով որոնում էին Ա իլհելմին և ահա տեսին նորան նիղակների մէջ Ճեմմի հետ, որ իւր հօրն էր նայում քաղցրադէմ ժպտանօք: Շատերի աչքերը արտաւոք էին լցվում, տեսանելով հօր գեմքը, բայց երկիւղը զգուշացնում էր նորանց այդ արտասուքէն, որովհետեւ Գևալերը պատժելու էր այն իբրև յանցանք. ամենքը գլուխները խոնարհեցուցել էին և մի մահանման լութիւն տիրել էր բոլոր ժողովրդին, որ հեծեծում էր, չարչարվում էր և լուռ էր մնում:

Վիջոցը չափեց ահագնադէմ Առանեմը. զինուորների երկպատիկ կարգը երեք կողմից փակեց այդ միջոցը. ամբոխը նոցաքամակէն խոնեալ ծեպում էր. Ճեմմին մի ծայրում կանգնած, հանգիստ և զուարթ երեսով նկատում էր բոլոր պատրաստութիւնքը. Գևալերը իւր զօրքի մէջ կացած անհանգիստ գեմքով դիտում էր ամբոխի մահակերպ լութիւնը. իսկ Ա իլհելմը նիղակներով շրջապատած, աչքերը խոնարհեցուցած, անշարժ կանգնած էր: Ծերին տուին նորան իւր մեծ աղեղը և մի հատ

նետ. Փորձեց նա այդ նետի ծայրը, կոտրեց և ձգեց գետնի վերայ. Խնդրեց իւր կապարձը, թափեց նետերը, սկսեց որոնել և ընտրել, գլուխը խոնարհեցուցած երկար ժամանակ, և մի դիպող միջոցում վեր առաւ մի նետ և թաքցրեց իւր հագուստի մէջ. յետոյ բարձրացրեց միւս մի նետ, ասելով թէ՝ այն էր, որ պիտի գործ ածէր: Առոնեմը հրամայեց ժողովել մնացեալ նետերը, իսկ Վիլհելմը սկսեց դանդաղանօք կապել իւր մեծ աղեղի լորը:

‘Եայեց Վիլհելմը իւր որդւոյն, բարձրացրեց աչքերը դէպի երկինք, վեր քցեց նետուաղեղը և խնդրեց որ՝ թոյլ տան իրան խօսել Ճեմմիի հետ. չորք զինուորք բերին նորան որդւոյ մօտ: Որդի, ասաց Վիլհելմը, զրկախառնվելով Ճեմմիի հետ, կրկնում եմ քեզ ինչ որ յառաջ ասացի, անշարժ կացիր, մի ծունկդ դիր գետնի վերայ, կարծեմ այդպէս հաստատ կ'լինիս և չես շարժելու. աղօթք արա առ Աստուած՝ որ պահապան լինի քո դժբաղդ հօրը, պաղատիր ‘Եորան միայն քեզ համար, միայն այնու համար՝ որ իմմիտքս չ'զայ քեզ խղճել և նուազեցնել արիասրտութիւնը՝ որ զարմացման արժանի է, և որում կ'ցանեկայի նմանութիւն բերել իմ մէջ. յիրաւի՛, որդեակ իմ, և չ'ըկարեմ այնքան վեհանձն լինել, որքան դու ես. պահպանիր, պահպանիր այդ վեհանձնութիւնը՝ որոյ օրինակը ես պիտէր քեզ ցուցանեի. — մնացիր այդպէս, որդի . . . ահա դու այն պէս ես, որպէս ես կամէի . . . կամէի՝ արդեօք . . . աւաղ դրժքաղդիս. Աստուած իմ, Գուտ տեսնում ես այդ: Լսիր ինձ, որդի, դարձնուր գլուխդ . . . դու չ'զիտես այդ սլաքի, այդ փայլուն երկաթի զօրութիւնը. ես պիտի ուղղեմ այն դէպի քո զըլուխը. մի նայիր ինձ, որդի: Ոչ, ոչ, պատասխանեց որդին, մի վախիր. ես կամիս միայն քեզ նայել, ես չեմ տեսնիլ քո նետը, այլ կ'տեսնեմ միայն իմ հօրս: Այ իմ անոյշ որդի, աղաղակեց Վիլհելմը, մի խօսիր, քո ձայնը, քո բարբառը իմ

զօրութիւնս հասանում է. լուռ կացիր, Աստուած աղաչիր և
մի շարժիր:

Վ իշելմը այսպէս խօսելով, դրկախառն համբուրում էր
իւր որդիին, կամում էր հեռանալ նորանէ, բայց չէր կարում.
վերջապէս մի անգամ ևս համբուրեց նորան, կրկնեց իւր յետին
խօսքերը, դրեց խնձորը նորա գլխի և արագ ընթացքով դար-
ձաւ իւր տեղը. վեր առաւ նա կրկնին իւր նետ ու աղեղը, ուղղեց
իւր հայեցուածը դէպի այն քաղցր նպատակը, երկու անգամ
կամեցաւ բարձրացնել իւր աղեղը և երկու անգամ հայրական
ձեռները թուլացած քաշ ընկան. վերջապէս՝ յիշելով իւր յա-
ջողածեռնութիւնը, կարողութիւնը և քաջասրտութիւնը,
սրբեց նա իւր արտասուքը, որք անգագար գալիս էին մթնացնել
նորա տեսութիւնը, կանչեց Ամենակարողին՝ որ 'ի բարձանց
երկնից հսկում է ծնողաց վերայ, ուղղեց իւր բազուկները՝ որք
դողդողում էին, ստիպեց, ընտելացրուց իւր աչքերը՝ որ միայն
խնձորին նայէ և այն ինչ ակնթարթ մի, որնթաց իրեւ միտք,
դիտող գտաւ իւր որդիին մոռանալոյ համար, — դիտեց, քա-
շեց և ձգեց նետը. — խնձորը նետի հետ միասին օդի մէջ խա-
ղացին:

Ճողոր հրապարակը, իրեւ երկնքի որոտումն դպրուեց ու-
րախութեան աղաղակով. Ճեմմին վազեց, անկաւ իւր հօր դիր-
կը, իսկ Վ իշելմը բոլորովին գունաթափ, անշարժ, զօրու-
թիւնը սպառված այն տագնապանքի մէջ, որ կրել էր, — ոչինչ
փաղաքշանք ցոյց չ'տուաւ իւր որդւոյն, այլ միայն նայում էր
նորան կիսախուփ աչքերով. նա չէր կարում խօսել և հաղիւ
հասկանում էր որդւոյ խօսքերը. դողդողալով ոտքերի թու-
լութենէն, անկաւ նա վերջապէս Ճեմմիի վերայ, որ կամերով օդ-
նել նորան, անզգուշութեամբ բաց արեց և յայտնեց թաքու-
ցած նետը:

Գեւելերը իսկոյն յայտնից Վ իշելմի առաջեւ և վեր ա-

ռաւ այն նետը։ Վ իլհելմը յուշ եկած, այն ինչ տեսաւ Գևու-
լերին, դարձրուց նորանէ իւր երեսը։ Ենհամեմատ աղեղնաւոր,
ասաց Գևելերը, ես իմ խոստմունքս կ'կատարեմ և կ'հատուցա-
նեմ քո հազուագիւտ յաջողակութեանդ զինը, բայց ասաւ ինձ
յառաջագոյն՝ ի՞նչ կամեիր անել այդ նետով՝ որ ինձանէ թա-
քուցել եիր. քեզ հարկաւոր եր մի նետ, ինչո՞ւ համար եիր
պահել այս միւսը։ Քո սիրտը թափանցելոյ համար, բանակալ,
եթէ իմ գժբազդ ձեռնս որդւոյս կեանքը կ'վերջացնէր, պա-
տասխանեց Վ իլհելմը։ Եյս խօսքում, որ ոչ մի հայր չէր կա-
րող չ'ասել, — զարհուրած նահանգապետը մտաւ իւր գահիծ-
ների մէջ, փոխեց իւր խոստմունքը և խկոյն հրամայեց անգութ
Ասոնեմին կապանքի մէջ գնել Վ իլհելմին և տանել բերդը։
Հրամանը կատարեցին, եկին խլեցին հօրը իւր որդիէն՝ որ 'ի
զուր եր աշխատում ուղեկից լինել Վ իլհելմին. պահապանքը
խկոյն հեռացուցին նորան։ Եմբոխը սկսեց տրանջել և զրգըս-
վել։ Գևելերը շտապով հրաժարվեցու, — գնաց իւր պալատը
և հրամայեց բոլոր իւր զօրքին պատրաստի լինել։ Բազմաթիւ
խումբերը զինաւորների շրջում եին քաղաքի միջում և սոի-
պում եին ահարեկեալ բնակիչներին թաք կենալ իւրեանց տու-
ների մէջ։ Առակումն և զարհուրանը տիրել եին բոլոր Ելդօր-
ֆին, դահիճները պատրաստի սպասում եին Գևելերի հրա-
մանին որ՝ նորանոր արիւնչեղութիւններ անեն։

պարունակած պատճենագույն շահ բայց ոչ պատճենագույն, և բարձրացնելով մի մաս
այս Շահը և մայն առաջնահանգը, պատճենագույն մի ու ուրախանակը և
այս, և նաև առաջնահանգը բայց այս : Պատճենագույն մասը ճառաւուք է պարունակած
առաջնահանգը, ուստի որևէ նույն այս բարձրացնահանգը, ապա այս մասը ճառաւուք
առաջնահանգը առաջնահանգ ու այս պատճենագույն մասը առաջնահանգը, ապա այս մասը
առաջնահանգը առաջնահանգ ու այս պատճենագույն մասը առաջնահանգը, ապա այս մասը
ՄԵՍՆ ՉԱՐՔՈՐԴ

ՄԵՍՆ ՉԱՐՔՈՐԴ անհանդիստ բոնաւորը իւր ամրոցի մէջ փակ-
ված, շրջապատել էր իրան զօրականների պատուարով և սար-
սափում էր երկիւղեց թէ՝ մի գուցէ կատաղի ամրոխը գայ և
նորա ձեռնէն խլէ Վելչելմին, Ճեմմիին, տարաբաղդ Ճեմմիին
արտօսրալից աչքելով, ձեռները տարածած, ում և հանդի-
պում էր, իւր հօրն էր խնդրում, կատաղի դահիճները՝ որը
ամենայն մուտ և անցքը պահպանած ունեին, — ամեն տեղ
դուրս արին նորան։ Եյսպէս թափառելով ամրոցի շրջապա-
տում, աղաղակում էր նա ցաւաղին ձայնով։ Քլարան՝ որ այս
ահաղին տեսարանի ժամանակը պալատում պահված էր, փա-
խաւ այս տեղեց վերջաղէս և եկաւ որոնել Ճեմմիին և այն ինչ
տեսաւ նորան, վաղեց նորա գիրկը և սկսեց շտապով սրբել նո-
րա արտասուքը։ Իմ հայրս կապանքի մէջ է, իմ հայրս բան-
դարկված է, ասաց նորան Ճեմմիին, իմ դժբաղդ ծնողս պիտի
կորնչի։ Քլարա, լսիր ինձ, ևս ամենելին յոյս չունիմ որ՝ կա-
րենամ նորա բանդը մտանել, այն տեղ մնալ և նորա սպասա-
ւորելով, իմ կեանքս վերջացնել նորա հետ։ ուստի՝ կամիմ մի
հնարք փորձել նորան աղատելոյ համար, կամիմ շուտով գլ-

նալ Ութերվարդ և յայտնել քո հօրդ իւր բարեկամի վտանգը։
Մելքթալը ունի բարեկամներ, քաջութիւն և զէնք։ Մելք-
թալը կ'շտապէ նորան ազատել։ Ես քեզ խնդրում եմ, իմ
բարեհոգի Քլարա, վերադառնալ իմ մօր մօտ, նորան պատ-
մել բոլոր մեր անցքը և այն՝ որ ինչ ես կամիմ փորձել։ Գնա,
Քլարա, գնա նորան մխիթարել։ ես միայն Մելքթալի հետ
կ'վերադառնամ, կամ կ'մեռանիմ և կամ կ'ազատեմ իմ հօրս։
Դու փոխարէն իմ անոյշ մօրս մօտ մնացի՞ր։

Ճեմմին անդէն հրաժարվելով Քլարայից, գնաց շտա-
պով, դուրս եկաւ քաղաքից և մտաւ լեռնային ճանապարհնե-
րը։ Քլարան նմանապէս ճանապարհ ընկաւ դէպի Ա իլհելմի
խրճիթը, ուր ծերունի Հենրիկոսը, անոյշ Լյոմելը առ անձ-
նացած, հեռի խրեանց բարեկամներէն և զաւակներէն, որոց
վիճակը ամենեին անցայտ էր նոցա, անհանգստութեան մէջ
խրեանց կեանքն էին մաշում։ Քլարայի դարձը, նորա դեղնած,
շփոթված և արտասուքով լուացված դէմքը երկպատիկ զար-
հուրեցրին Լյոմելին։ Նա վեր կացաւ իւր տեղից, վազեց
Քլարայի առաջը, աղաղսկելով։ Ճեմմին, Ճեմմին, ի՞նչ
է եղել որդւոյս, ուր է նա։ «Եա կենդանին է, նա ազատ է։ շու-
տով պատասխանեց Քլարան՝ որ և նոյն ժամայն շտապեց կոյր
ծերունիի դիրկը և համբուրելով փոփոխարար նորան և Լյո-
մելին, սկսեց տկար ձայնով պատմել որ ինչ անցք անցել էին,
ի՞նչպէս անողորմ Գհեսլերը հրամայեց նորանց բանդից դուրս
հանել և բերել Ա իլհելմի առաջեւ, նոյնպէս այն ահազին
փորձը՝ որ կատարվեցաւ հօր և որդւոյ մէջ և թէ Ա իլհելմը
այժմ կապանքի մէջ է և բանդում, իսկ Ճեմմին՝ նորան ա-
զատելոյ համար գնացել է Մելքթալի մօտ, որովհետեւ Ա իլ-
հելմը մահու չափ վտանգի մէջ է, — նահանդապետը երդմանի
խոստացել է այդ։

Եսդ պատմութեան մէջ, Լյոմելը ուշաթափ վեր ընկաւ-

աթոռի վերայ, իբրև կիսամեռ. կոյր ծերունին նմանապէս ամենեն այլափոխված՝ արտասուախառն ձայնիւ աղաղակում էր. գնալ իւր որդւոյ մօտ, կամենում էր նորա հետ միասին պատերազմել և մեռանիլ **Ա կլհելմի** ազատութեան համար. մատաղ Քշարան շտապեց նորան օգնել, բայց սորա գորովալեց հոգոր բաւական չէր այդ դժբաղդներին:

Ա երջապէս՝ երբ որ առաջին նուագի խորին ցաւը անցաւ, ծերունի Հենրիկոսը, իւր միտքը, արիութիւնը և խոհեմութիւնը ժողոված՝ բոնեց Եղմեյի երկու ձեռքը և իւր սրտին սեղմելով, ասաց նորան. մի՛ լար, ովլ իմ առաքինի բարեկամ. չկորցնենք արտասուելով այն թանգագին ժամանակը՝ որ հարկաւոր է դործի համար : Ճեմմին Ունթերվալդումն է, մի քանի ժամ բաւական են նորան որ՝ հասանել իմ որդւոյս մօտ . ես ճանաչում եմ **Վելքթալի** հոգին, այս իսկ զիշերիս նա իւր բոլոր բարեկամներով կ'ուղեւորվի և **Ելդօրֆի** ճանապարհը կ'բոնի. վաղիւ առաւտուն նա կ'հասանել այդ քաղաքը և ամենայն ինչ կ'փորձէ **Ա կլհելմի** ազատութեան համար, բայց նորա սակաւաթիւ բարեկամները ի՞նչպէս պիտի կատարեն այդ մեծ խորհուրդը. ես ես ունիմ քաղաքում մի քանի ինձ սրտակից անձինք. ես կ'գնամ զարթուցանել նորանց, զրգուել և քաջալերել նոցա արիութիւնը . նորա ինձ կ'տանեն ժողովատեղը, կ'տանեն ամբոխի մէջ, մինչ արեղակի առաջին ճառագայթքը կ'երեխն. այն տեղ ես կ'խօսիմ, կ'ցուցանեմ իմ վերքս՝ որ **Գենուրէն** ստացել եմ, կ'ցուցանեմ այն տեղին, ուր նորա կատաղի դահիճները աչքերս հանեցին. նորա կ'տեսնեն իմ զառամեալ հասակը, իմ ձիւներանդ մազերս, իմ ապականեալ կերպարանքը, այս արիւնը՝ որով իմ հազուսար շաղախված է, այս տկար երեխայի լաց ու կոծը. սորա ամենքը կ'օգնեն իմ խօսքերիս. ես յուսով եմ և ստոյգ գիտեմ որ՝ ժողովված ամբոխը կ'յօժարի իմ վրէժս առնուլ. ամբոխը կ'ըազմացնէ ժու

Դոված բարեկամներիս թիւը. իմ և քո որդին կ'գտնեն
մի գունդ՝ որ պատրաստ կ'լինի նոցա հետ միաւորվել: Ո՞նք
կ'յարձակվինք այն ժամանակ ամրոցի վերայ, ես կ'մնամ պա-
տերազմի մէջ, մեր աղնիւ քաջամարտիկներին սիրո տալոյ հա-
մար, բարձրաձայն կ'աղաղակեմ մեր վրէժը, անդադար կ'յի-
շեմ հայրենիաց և աղատութեան անունները. եթէ չկարենամ
նոցա հետքից գնալ, նոքա ինձ կ'տանեն քո ամուսնի մօտ և մեր
նորան կ'բերենք քո դիրկդ: Այսպէս ես աներկրայ եմ որ՝ երկ-
նային զօրութիւնը՝ որ ինձ քաջալերում է, նա ինքը կ'օգնէ
մեր յաղթութեանը: Եկ իմ դուստր, գնանք անյապաղ, տուր
ինձ դաւազանս և օգնիր ինձ. զիշերը արդէն մօտ է, եկ, զիշե-
րը մեզ պիտանի կ'լինի: — Հաւան եմ քո խորհուրդիդ, պա-
տասխանեց Եղմէյը, ե՛ի հարկէ, ես քեզ ուղեկից կ'լինիմ, բայց
մինչ դեռ մենք չեք հրաժարվել այս տեղից, հաճիր ինձ լսել
և նմանապէս տալ քո խորհուրդը: Ես իմացել եմ, թէ և ոչ
ոք ինձ չե ասել թէ՝ իմ ամուսինը վաղուց մի մեծ խորհուրդ
ունէր իւր հայրենիքը աղատելոյ համար. նորա զաղտնի ճանա-
պարհորդութիւնքը դէպի Շուայց, Ունթերվալդ, Ուրսերան,
այն կուտած զէնքը՝ որ նա թագուցած պահում էր, նորա զի-
շերներով տանէն հեռանալը, նորա միշտ զքաղված լինելը, որ
նորա դէմքից երեւում էր, բոլոր այդ բաները հաստատում են
թէ՝ երեք նահանգների մէջ մի դաշնակցութիւն պիտի լինի
և սորա հոգին հարկաւ Վայշելմն է, ես չ'զիտեմ միւս զլսա-
ւորների անունները, բայց հաւատացէք ինձ այդ զլսաւորները
կան և ես աներկրայ եմ թէ՝ մի ժամ, մի նշան դաշնաւորած
են իւրեանց մէջ. ես չ'կարացի խելամուտ լինել թէ՝ ինչ է այդ
նշանը, բայց մի քանի օր յառաջ, ես ապշեցայ իրբեւ շանթա-
հարված, այն ինչ յանկարծ մի խօսք ասաց իմ ամուսինը. այդ
խօսքը և այլ քանի մի բաներ ինձ կարծիքի մէջ են ձգում թէ՝
դուցէ երդուած դաշնաւորների նշանը լինի մի վառած փայտա-

կոյտ այդ սարի վերայ . ախտոս որ՝ ժամանակի սղութիւնը և
իմ տկարութիւնս չեն ներում ինձ այս իսկ գիշերիս կանգնե-
ցնել և այրել այդ փայտակոյտը . մի գաղանի ազդեցութիւն
ինձ ասում է թէ՝ եթէ մենք կարենայինք վառել այդ կրակը ,
ամուսնոյս բոլոր բարեկամները կ'շտապէին նորան ազատելու :
Ես քեզնէ , բարեկամ , խորհուրդ եմ հարցանում այժմ . իմ
տկար ձեռներս կարեն կրակ դնել այս տան տակը , որ մեր պա-
տսպարանն է . սա բաւական բարձր տեղի վերայ է . այս լայնա-
տարած հրդեհը կ'երեխ երեք նահանգների բնակչուց . ի՞նչ եմ
անում ես տունը , ստացուածքը , երբ որ իմ ամուսինը կորս-
տեան վտանգի մէջ է . եթէ ես նորան կարող եմ փրկել , դու-
մեզ կ'ընդունես քո տունդ , իսկ եթէ կ'կորուսանեմ , մեզ ոչինչ
հարկաւոր չէ , բացի դերեզմանը : Եյն ի՞նչ Եղմէյը վերջացուց
իւր խօսքը , ծերունի Ճենրիկոսը սկսեց քաջալերել նորան և
գովել նորա դիտաւորութիւնը : Խոկոյն Եղմէյը գնաց , վեր ա-
ռաւ չոր ոստերի մի խուրձ , վառեց կրակարանի մէջ և բոցա-
վառ ոստերը ցրուեց ամեն կողմ , արծարծեց իւր ձեռնով և ան-
խայաբար այրեց թէ իւր երեխայի օրօրոցը և թէ իւր ամուս-
նական անկողինը , ամենայն տեղ սաստկացրուց կրակը և երբ
որ աներկբայ եր թէ՝ հրդեհը անշիջանելի էր , բանեց ծերունիի
և Քլարայի ձեռներէն , դուրս եկին տանեն և սկսեցին սարէն
ցած գալ և Ելդօրֆի ճանապարհը մտանել :

Մինչ դեռ այդ կոյլ ծերունին , այդ դժբաղդ կինը և այդ
տկար երեխան շտապեւմ էին Ելդօրֆ որ՝ իւրեանց բարեկամ
ների գուռը բաղխն և մինչ բոլոր քաղաքը խորին լութեան
և զարհուրանաց մէջ էր , — Եղմէյի ձեռնով վառած կրակը
զօրանալով , զրաւեց բոլոր խրճիթը , հուրը բորբոքվեցաւ , փայ-
լուն բոցերը լոյս տարածեցին և կ'երեւէին արդէն շատ հեռուից
ես : Վ երները նկատեց Շուայցից , եռանդուա Մելքթալը , ո-
րոյ մօտ դեռ չեր եկել Ժեմմին , դողաց ուրախութենէն , տեսա-

նելով այն բոցավառ կրակը, Գիւրսոր Աւրսերանում նմանա-
պէս աներկրայ էր թէ՝ Ա իւշելմը՝ Ելդօրֆի քաջերի պեսը ,
կանչում է նորան իւր օգնութիւն։ Այդ երեք դիսաւորքը նոյն
բոպէին զէնքերը առին, դուրս եկան իւրեանց բնակարաններէն ,
գնացին ժողովել իւրեանց հաւատարիմ բարեկամներին և հը-
րաւիրեցին նորանց դէպի ազատութիւնը։ Ճագան ամենքը իւ-
րեանց զէնքերը, հաւաքվեցին լուութեամբ, գունդ կազմեցին և
երեք կողմից, համարեա մի և նոյն բոպէում, երեք զօրսապետքը
խաղացին գնացին դէպի Ելդօրֆ, առաջնորդելով այն զօրքին՝
որ թէև սակաւաթիւ էր , բայց հզօր էր իւր քաջութեամբ և
պատրաստ կամ կորնչել և կամ ազատել իւրեանց երկիրը։

Վ մենքը փութացրեցին իւրեանք ընթացքը, ամենքը յետ
մնալով երբեմն ձիւնի շատութենէն, հեղեղների յորդութե-
նէն, անհարթ ճանապարհներէն , գողում էին թէ՝ մի գուցէ
ժամանակին չհասնեն ամրոցը՝ որոյ վերայ պիտեր միասին յար-
ձակվեցին , որոյ մէջ պիտեր բռնաւորին կենդանի բռնէին։ Խոկ
բռնաւորը, անհանդիստ հոգւով, խոռված այն աղմկէն՝ որ
տեսնում էր ժողովրդի մէջ, վախելով իւր գերիի մասին, սար-
սափելով իւր խակ կեանքի համար, նորանոր հնալքներ էր պատ-
րաստում զգուշութեան, այնպիսի հնարներ՝ որոց մինք միայն
կարէր ունայն դարձուցանել երեք դաշնաւորների բոլոր ջանքը։
Գեսլերը՝ նոյն օրը երեկոյանալուս մտածում էր թէ՝ ամրոցը՝
որ լքված էր զօրքի բազմութեամբ , չունէր բաւական պաշար
երկարաաւ պաշարման դէմ լինելոյ համար և կասկածում էր
ոչ թէ այնու համար որ՝ ստիպված լինի թշնամեաց ձեռքը
տալ ամրոցը, այլ թէ՝ մի գուցէ չկարենայ հաղորդութիւն
ունենալ մնացեալ զօրքի հետ, որք սփոված էին Լուցեռնի
չորք կողմում։ «Կա հրամացեց կոչել Ասոնեմին և այս նոր պա-
տուէրը տուաւ նորան։

Հարեկամ, ասաց նա , ևս հրաժարվում եմ այս տեղից ,

ուր դու իմ բացակայութեան ժամանակը հրամանատար պիտի
լինիս. քեզ եմ թողնում իմ քաջ զօրականներիս՝ որք այսու-
հատե քո հրամանները պիտի կատարեն: Այս չար ազգը՝ որ
ես պիտի պատժեմ նորա յանդուգն տրանջանաց համար, շու-
տով ոտնակոխ կ'լինի այն նոր զօրքի բազմութենէն, որ ահա ես
գնում եմ ստանալու: Հրամայիր պատրաստել մի մեծ նաւակ՝
որոյ մէջ յիսուն ընտրեալ զինուորք իմ պահպանական զօրքէն
ուղեկից կ'լինին ինձ: Մինչ գիշերային խաւարը քօղով կ'ծածկէ;
երկիրը, դու կ'յուղարկես նոյն նաւակի մէջ այն յանդուգն
Վ իլհելմին՝ որ համարձակվեցաւ խրոխտալ իմ վերայ, բայց
հրամայիր որ՝ շղթայակապ լինի նա և զօրքով շուրջ պատած:
Ես կամիմ ինքս տանել նորան Քիսնախտի ամուր բերդը, ուր
առաւել անվտանգ կ'պահվի նա, քան այս տեղ. թող սպասէ
նա այն տեղ բանդում, մինչ ես իմ զօրքովս յետ կ'գառնամ և
նորա չարաչար տանջանօքը կ'ցուցանիմ Ալդորֆի ընակինե-
րին թէ՝ ինչ օգուտ պիտի բերէ նոցա իւրեանց թշնամութիւնը:

Ասոնեմը արդէն ամբարտաւանացած այդ ընտրութենովը
փոխանորդ նահանդապետի, շտապից կատարել նորա հրամանը.
նաւակը իսկոյն պատրաստվեցաւ, յիսուն ընտիր աղեղնաւորնե-
րին առաջնորդեց ինքը և տարաւ Վ իլհելմի բանդի դուռը:
Շանր կապանքով կաշկանդած դիւցապնին առին զգուշու-
թեամբ և մինչ մութը տիրել էր արդէն երկրին, բերին ծովակի
ափը, ուր Գեսլերը թաքուն եկած էր մենակ և ծպտված (հա-
գուստը փոխած): Աս հրամայեց ձգել Վ իլհելմին նաւակի
յատակը և շուրջ պատել նորան զինուորներով, իսկ ինքը նըս-
տեց նաւակի առաջքում, հրամայեց առատօրէն ոսկի բաշխել
և զինի տալ զօրականներին և թիավարներին և ճանապարհ
ընկաւ այնպէս որ՝ համարեա ոչ ոք չիմացաւ Ալդորֆում:

Կաւակը թոշում էր ալիքների վերայ. օդն էր պարզ, ծո-
վակը խաղաղ, աստեղք փայլում էին երկնքում. թեթև հարա-

ւային հողմը օգնում էր թիավարներին և թեթևացնում էր ցրտի խստութիւնը՝ որ մօտակայ սարերի սառոցներէն, դիշերային ժամանակէն, նոյն և աշնանային եղանակէն կարեր անտանելի լինել: Թռուի թէ ամենայն ինչ յաջողում է Գհեսլերին. այսպէս նա անցաւ չորք նահանդների առաջին ծովակի նեղուկ երկարութիւնը, ուղղեցաւ դէպի Քրիւննան և անձուկի միջով գնաց մտաւ երկրորդ ծովակը: Եսկ Ա կիլչելմը Ճ՛նշված իւր կապանքէն նաւակի ներքնակողմնում, նոյելով դէպի ձախակողմեան եղերքը, Ճանաչեց Քրիւդդիի անբնակ ապառաժները և այն խորշը, ուր թերեւ երեկ խորհրդակցութիւն էր անում իւր բարեկամաց հետ, հայրենեաց ազատութեան մասին. այդ երեսյթը, այդ յիշատակութիւնը կարծես թէ թուլացուցին նորա քաջապատութիւնը. Ա կիլչելմը զգաց որ՝ նորա աչքերը արտասուբով լցվում էին և կարմրեց ամօթից. շուտով բնածինջ անելով այդ արտասուքը, նայեց նա դէպի երկինը՝ որ, կարծում էր թէ՝ մոռացել է իրան, և նոյն ժամանյն Ալդօրֆի կողմից մի կարմիր լոյս երեաւ, որ և հետ դշետէ տարածվում էր: Ա կիլչելմը նկատեց որ՝ Ուրիի վերայէն բորբոքեալ բոցեր էին բարձրանում, նորա սիրաը դողաց այդ տեսքում, նա չեր կարում իմանալ թէ՝ ուստի է այդ նշանը՝ որոյ դադանիքը ոչ ոքի չեր հաւատացել. տարակուսեցաւ, քննեց երկար մտածելով և ստուգեց վերջապէս որ՝ այդ հրդեհի բոցերը այն լեռնէն են, ուր իւր տունն է: «Կա սկսեց գոհութիւն մատուցանել Վատուծոյ, թէե չգիտէր, բարերարութիւն էր արդեօք այդ իւր համար. նա յոյս չուներ և չեր խկ կարծում թէ՝ այդ դիպուածը կարէ փրկել նորա կեանքը, բայց հաւատում էր թէ՝ կարէ ազատել իւր հայրենիքը. այդ միտքը մոռանալ տուաւ նորան իւր անձնական վտանգը: Գհեսլերը և նորա դաշիճները նմանապէս նկատեցին այդ բոցերը, սկսեցին զարմանալով միմեանց ցուցանել և վճռեցին թէ՝ այդ պիտի լինէր մի հրդեհ,

ուստի այն դժբաղդութիւնը՝ որ հասանելու էր իւրեանց թըշ-
նամիներին, ամենեւին չշփոթեց նորանց : Գևելերը շտապեցնում
էր թիավարներին, նեղսրտելով՝ որ՝ շուտ չեն հանում, նա
հրամայում էր կրկնապատիկ անել իւրեանց ջանքը : Եւ ահա
նաւակը դարձաւ դէպի արևմուտք և կիրծը անցանելով դնաց
մտաւ Անթերվալդի վտանգաւոր ծովակի խոր ջրերը : Եյս
տեղ յանկարծ հարաւային հողմը դադարեց տանել արագըն-
թաց նաւակը . Հիւսիսային և արևմուկան ցրտաշունչ հողմերը
բոլորովին խռովեցրին օրը : Վինը փոթորիկ բարձրացրած դի-
զում էր ծովի ալեքը, շալով բաղխում էր նաւակի կողերը և
այս ուժգին հարուածներով խոտորեցնում էր նորան իւր ըն-
թացքին, որով և հակառակ թիավարների կամաց նաւակը
կարծիս թէ դէպի եղելքն էր փախչում : Խոկ միւսը՝ ամպ, ե-
ղեմունքն ձիւն բերելով երկինքը ծածկում էր գուժարեր մըթ-
նութեան քօղով և ջրերի վերայ տարածում էր նմանապէս խա-
ւար և աղջամուղջ . թիավարների երեսը և ձեռները կտրում էր
ցրտի կոկծալի սաստկութենով և ստիպում էր նորանց թող-
նել նաւուղդութիւնը, ծածկելով նոցա խոնարհեցուցած հա-
յեցուածէն իւրեանց ակներեւ կորուսոր . նաւակը հետ զհետէ,
լցվում էր ձիւնի հետ խառն սառուցի կտորներով . հողմունքը
պատերազմելով, նաւակը իւր ողնափայտի վերայ պտուտում
էին սաստիկ արագութեամբ և պահելով երբեմն կախված ըս-
տիտակացեալ ալեաց բարձրութենէն, տանում էին գահավեժ
էին անում անդունդների խորքը :

Օ ինուորքը գունաթափ և սրտարեկ, զինուորքը՝ որք
արդէն աներկրայ էին իւրեանց մօտակայ կորստի մասին, անկան
ծնկանց վերայ և սկսեցին աղօթք անել Եստուծոյ՝ որ վաղուց
մուացել էին : Անարդ Գևելերը, առաւել քան զինուորքը,
դող ու սալսափով տիրված, անց ու դարձ առնելով նաւակի
մէջ, իւր բոլոր գանձը խոստանում էր թիավարներին, խնդրե-

լով ազատել իւր կեանքը, իսկ նորա անշարժ և տրտում լուռ-
թեամբ էին նորան պատասխանում։ Երտասուքը, անարդու-
թեան և փոքրոգութեան արտասուքը առ աջին անգամ լուսցին
նահանգապետի կատաղի աչքերը. նա տեսաւ որ՝ իւր կորուսոր
արդէն անտարակոյս էր. ալեկոծութիւնը ծովի յատակն էր տա-
նելու նորան. նա տեսաւ որ՝ ոչ նորա հարստութիւնը, ոչ նո-
րա իշխանութիւնը, ոչ այլոց տուած չարչարանքը և ոչ նորա
դահիճները կարող են նորան մահից ազատել, զգաց ցաւալից
և հաւատաց որ՝ արդէն պիտի դադարէ արեամբ արբենալ։

Ա իլհելմը հանգիստ էր իւր տեղում. նոս այնքան չ' փոթ-
վեցաւ, ոչ զինուորների ազատակէն, ոչ փրփրած ալեաց ահա-
զին ձայնէն, ոչ կատաղած քամիների շըմունքէն, այնքան, մինչ
Քրիւդդիի խորշերը նորան երեւցին։ Ա իլհելմը լսում էր մա-
հագոյժ ձայները և մտածում էր այն օգուար՝ որ կարէր բերել
իւր երկրին նահանգապետի մահը։ Ո՞ինչ այսպէս Գհեսլերի եր-
կիւղը, նորա տանջանքը և հեծութիւնը անմոռունչ ուրախու-
թիւն էին տարածում Ա իլհելմի հոգւոյ մեջ, յանկարծ թիա-
վարներէն մինը կանչեց դէպի բռնաւորը. մեք կորչում ենք ահա
և ոչինչ հնար չունինք այդ ալեկոծութեան մեջ պահպանել մեր
նաւակը՝ որ ահա հիւսիսային հողմը տանում է, և բոպէի մեջ
ջաղջախելու և խորտակելու է ծովեղը քարաժայուերի վերայ. միայն մի մարդ կայ երեք նահանգների մեջ հոչակված յաջո-
ղութիւնով. և հնարագիտութիւնով փոթորիկների դէմ. նա
միայն է կարող ազատել մեզ այդ մահագուշակ փորձանքէն.
այդ մարդը այս տեղ է, այդ մարդը նա է, որ դու կապանքի
մեջ պահում ես նաւի յատակում։ Ընտրիր, Գհեսլեր, ընտրիր
շուտով, կամ քո և մեր մահը և կամ նորա ազատութիւնը։
Գհեսլերը սարսափեց այդ խօսքը լսելով, սաստիկ ատելութիւնը
Ա իլհելմի դէմ կովում էր նորա երկչոտ հոգւոյ մեջ կեանքի
քաղցրութեան հետ, և մինչ տարակուսած չէր կարում պա-

տասխանել, զօրականների և թիավարների կրկնապատիկ տրտուն-
ջը և աղաչանքը վճռեցին նորա մաքում Ա. իլհելմի արձակումը
և իւր փրկութեան յոյսը. նա կասկածում էր նմանապէս թէ՝
մի գուցէ այդ մարդիկը ապստամբէին իւրեանից, եթէ չ'յօժա-
րէր նոցա կամքը կատարել, իսկ փոթորիկը ևս քան զես սաստ-
կանում էր. վերջապէս Գեսլերը հրամայեց խորտակել Ա. իլ-
հելմի կապանքը: Ես կ'ներեմ, ասաց նա, նորա բոլոր յանցանքը,
և կ'պարզեեմ նորան կեանք և աղատութիւն, եթէ իւր յա-
ջողակութեամբ նա կ'հասուցանէ մեզ նաւահանգիստ:

Օ ինուորքը շտապեցին աղատութիւն տալ Ա. իլհելմին
և արձակեցին նորան կապանքից. վեր կացաւ նա, գուրս եկաւ
նաւայատակից և առանց մի խօսք ասելոյ, ձեռք առաւ զեկը:
«Նաւակը սկսեց շարժել նորա ձեռքի տակում, որպէս մի ոստիկ
երեխայի ձեռնում. նաւի առաջքը կացրուց նա կրկին հողմոց
դէմ և բաժանելով նոցա զօրութիւնը, նաւակի հաւասա-
րակշուութիւնը պահպանեց. յեաոյ՝ մինչ վայրկեան մի ծովը
խաղաղ երեեց նորան, փայլակնի արագութեամբ դարձրուց նաւի
առաջքը, պահպանեց այն ուղղութեան մէջ, որ միայն կարէր
փրկել նորան փորձանքէն, և նոյն ժամանեց հրամայեց երկու
թիավարների միայն վեր առնել իւրեանց թիավարները և ինքը նո-
ցա ջանքը ուղղելով, սկսեց յառաջ գնալ, հակառակ ալեկո-
ծութեան և քամիների սաստկութեան, դէպի այն նեղուցը որ
կամէր անցանել: Վթնութիւնը թոյլ չէր տալիս Գեսլերին
նկատելու թէ՝ նա յետ էր դառնում դէպի այն կողմը, ուստի
եկել էր, իսկ Ա. իլհելմը յառաջ էր տանում իւր գնացքը.
դեռ գիշերը չէր վերջացել որ՝ նա մտաւ Աւրիի ծովակը և նը-
կատեց Ալդօրֆից տուած բոցավառ նշանի վերջին նուաղած
լոյսը. այդ լոյսը նորա ուղեցոյց աստղն էր և այդ ծովակը նորան
վազուց ծանօթ էր. ուստի հեշտութեամբ հրաժարվելով վր-
տանգէն, նա մօտենում էր այն ծովեղերքին, որ շրջապատում

է Ըուայցի նահանգը։ Ա իլհելմը միտքերեց Ա երներին և հա-
շուեց թէ՝ նա պիտի լինէր այժմ ճանապարհում և թէ ձիւնի
յորդութիւնը անշուշտ ստիպելու էր նորան ծովակի ափով
դնալ։ Եյդ նուազ յուսով վարեց նա նուակը, կեղծաւ ցու-
ցանելով, իբր թէ անծանօթ էին նորան այդ տեղիքը, կամ թէ՝
փոթորիկն էր բռնութեամբ մղումնաւը, որով առաւել սասա-
կացրուց Գևելերի և նորա զինուորաց երկիւղը։

Ա երջապէս՝ արեւելքը ճառագայթեց և փոթորիկը կար-
ծիս թէ նուազում էր արեգակի առաջին ճաճանչներէն։ լոյսը
ծագելով յայտնեց Ա իլհելմին Ալդօրֆի սահմանակից ապա-
ռաժները, իսկ բռնաւորը դեռ չէր կարում ճանաչել այդ տեղի-
քը։ Ա իլհելմը ուղղեց նաւը և դնաց սաստիկ արագութեամբ։
Գևելերը՝ որ վտանգը պակասելոյ չափովը, սկսում էր նորէն
կատաղել, զննեց Ա իլհելմին թաղծալից աչքերով։ նա երփում
էր ցանկութիւնով որ՝ կրկին նորան կապանքի մէջ դնէ, բայց
չէր համարձակվում։ նորա զինուորքը և թիավարքը այն ինչ
ճանաչեցին տեղիքը, ուր հասել էին, իսկոյն յայտնեցին նա-
հանգապեաին՝ որ բարկացած եկաւ դէպի Ա իլհելմը և ահա-
զին ճայնիւ հարց արեց նորան թէ՝ վասնէր է նուակը Ալդօրֆի
ճանապարհը բերել։ Ա իլհելմը ոչինչ չպատասխանելով, մղեց
նաւը ուղիղ դէպի մի քարաժայու՝ որ ծովեղերքին մօտ էր,
խլեց յանկարծ մի նետ ու աղեղ իւր մօտ կանգնած աղեղնաւորի
ձեռնէն և կայծակնանման արագութեամբ թռաւ նաւէն քա-
րաժայուի վերայ։ այս տեղեց թռչոտելով ապառաժների վերայ,
լեռնային այծի նման սկսեց հեռանալ ծովեղերքէն և մինչ վեր
ելաւ մի դժուարագնաց սարի վերայ, տեսաւ արդէն որ՝ գա-
ղաթի վերայ էր Ալպեան արծուի նման՝ որ ամազերի մէջ դա-
ղարելով, իւր խորամուտ աչքերը շրջեցնում է ծործորակների
խաշանց վերայ։

Օ արմացած նահանգապետը աղաղակեց Ա իլհելմի հետ-

քէն կատաղի ձայնիւ , հրամայեց իսկոյն բոլոր զինուորներին նաւից դուրս գալ և շրջապատել այն սարի գագաթը , ուր դիւցաղն Ա իլհելմը դեռ ևս երեսում էր : Ամենքը հնազանդեցին և նետաձիգները նաւից ելած , պատրաստեցին իւրեանց աղեղները : Գհեսլերը՝ որ նոցա մէջ կատաղած շրջում էր , մի իղձ , մի ցանկութիւն ունէր . այն է թէ՝ բոլոր նետերը միասին Ա իլհելմի արիւնով լուացվէին : Իսայց և Ա իլհելմը նմանապէս իւր խորհուրդն էր խորհում . նա կանգնել էր իւր տեղում և երեսում էր թշնամիներին միայն այնու համար որ՝ սոքա աւելի մօտենան նորան , և մինչ այնքան թոյլ տուաւ որ՝ իւր ձեռնում ունեցած նետը կարէր մահաբեր լինել նոցա , նայեց , բեւեռեց իւր հայեացքը Գհեսլերի վերայ , լարեց իւր աղեղը , ուղղեց նետը դէպի բռնաւորի սիրտը , սլացրուց օդի մէջ և ահա այդ նետը սուլելով եկաւ թափանցեց եղեռնագործի սիրտը : Ա եր ընկաւ Գհեսլերը , սև արիւն փսխեց և կատաղութիւն կաղկաջելով իւր անագորոյն հոգին դուրս փչեց՝ հայհոյանաց մէջ : Ա իլհելմը իսկոյն անհետացաւ . աւելի քան եղնորթի թեթեւութեամբ թոչում էր նա սարի գագաթէն , վազում էր սառոցների վերայ , անցանում էր ամրոցի դաշտեր և գնալով հասանում էր Ալդորֆի ճանապարհը :

Տեսաւ նա ահա ձիւնի վերայ իւր բազմաթիւ բարեկամների անցած հետքը , այն բարեկամների՝ որ Ա երները նոյն գիշերում պիտէր դուրս բերած լինէր Ծուայցէն : Ա իլհելմը վաղելով մօտենում էր արդէն սոցա բանակին և ահա աղմուկը , աղաղակը , զէնքերի դղրդիւնը բաղխեցին նորա ականջը : Արացեալ արշաւանքով հասաւ նա այն տեղ , ուր երեք դիւցաղնական գունդերի բազմութիւնն էր : Ա երները՝ Ծուայցի զօրքի դիսաւորը , կամում էր , յառաջ քան պարսպի վերայ յարձակվելը , նորա մուտ և անցերը բռնել . Թիւրստը Ուրիի քաջերի հետ պահանջում էր իրան յանձնել առաւել վտանգաւոր պա-

Հակը. Մելքթալը՝ Աւմթերփալդի զօրապետը, իւր ծանր տապարը բարձրացրած աղաղակում էր և խնդրում էր պարսպի վերայ յարձակվել. Ճեմմին՝ որ սորանէ բնաւ չէր հեռանում, սպառազինված մի երկար նիզակով, Վիլհելմի անունն էր յիշում և նորա համար էր աղաջում բոլոր զօրքին. նա ցուցանում էր այն ամրոցը և բանդը, ուր կարծում էր դեռ ևս պահված է իւր հայրը. Տերունի Ճենքիկոսը, Քլարան և Եղմեյր քաջամարտիկների մէջ խառնված՝ աստ անդ էին շրջում շտապեցնելով և խրախուսելով պարսպի վերայ յարձակվելը:

Վիլհելմը յանկարծ յայտնվաւ այդ զօրքի մէջ. մի որոտաճայն գոչիւն, մի ճիչ միաբերան աղաղակի ահապնաբար հընչեց և նորա արձագանքը երկարեցաւ սարերում. մի մահանման լոռութիւն տիրեց յետ այնորիկ բոլոր բանակին: Ամենքը սպասում էին Վիլհելմի հրամանին, ամենքը փափաքում էին նորա ձայնը լսել և միայն նորան հնազանդել: Բարեկամք, ասաց դիւցազնը, Գեսլերը չկայ. այդ ազեղը և այդ ձեռը սկատեցին արդէն նորա չարագործութիւնները: Գեսլերի մարմինը՝ որ տարածված է ծովափի վերայ, շրջապատել են նորա զինակիր դաշիճները՝ որք այժմ անշուշտ ահ ու գողի մէջ են և ի փախուստ կդառնան: Եցիմ արտաքուստ ոչինչ երկիւղ չունիք, մեր հայրենեաց վոկտը առել ենք. բայց մեր հայրենիքը դեռ ևս ազատ չէ և երբէք չի լինիլ ազատ, մինչ այս ամրոցէն՝ որ ձեր աչքերի հարուածն է, քար քարի վերայ կմնայ: Աւրեմն յարձակվինք այդ սոսկալի ամրոցի վերայ, որ միակ յոյս, միակ սպաւէնն է անդութ Եւստրիացւոց թող մեր երեք զօրագունդը դնան միասին և որոնք ամենէ քաջքն են, թող յառաջ յարձակվին:

Եյս ասաց և նոյն ժամայն ձախ ձեռնով վեր տռաւ Ուրիի դրօշը, աջով իւր զէնքը և շտապով դնաց սարի վեր: Գիւրատը իւր զօրքով, Վերները Եռայցոց հետ շտապեցին նորա

քամակից, իսկ Մելքթալը և Ութերվալդացիք արդէն ճանապարհի կէսը անցել էին:

Սառնեմը պատրաստված սպասում էր սորանց. նետերը և սլաքները իրրե ամպ բարձրացան պատուալներէն, բայց յարձակվողքը արհամարհեցին այդ. նոքա չկասեցին իւրեանց գրնացքում, բարձրացան սարի վերայ, չպատասխանելով թշնամեաց նետերին և այսպէս հասին պարսպի տակը: Ահազին Ասոնեմը, մի նշան տալով իւրայնոց, հրամայեց պարսպի ժայռերից ապառաժներ և քարեր նետել և յետոյ եռացրած ձեթ և իւղ, որմէ սաստիկ հարուած էին կրում երեք նահանդի քաշերը. շատերը անտանելի ցաւի մէջ հողիքն էին աւանդում, միւսները կծոտում էին իւրեանց վերայ ձգած քարերը, աղաղակելով և բարձրածայն քարովելով ազատութեան անունը: Մեռանողները՝ արհամարհելով իւրեանց չարչարանքը, յորդորում էին և խրախուսում էին իւրեանց ընկերներին, խրնդում էին իւրեանց մարմիններէն սանդուղք կազմել պատուարի վերը հասանելոյ համար, իսկ Աւատրիացիք այպանում էին իւրեանց թշնամեաց հեծութիւնը: Սառնեմը պարսպի երկու ժայռի միջում կանգնած՝ ծաղը էր անում նոցա տկարութիւնը և իւր զօրքը քաջալերելով, երկարացնում էր պատերազմը:

Վելհելմը՝ որ մեռածների և մեռնողների միջում, պահպանում էր դեռ ևս իւր աներկիւղ դէմքը, յանկարծ ցաւեցաւ և խռովեցաւ, մինչ մտածեց թէ՝ ոլքան բազմութիւն էր կորչում. նա դադարեցրուց պատերազմը, կանչեց Մելքթալին և խոստովանելով իւր սխալանքը, որ միայն քաջութեան խորհուրդը ընդունեց, մի կողմից յարձակվելով պարսպի վերայ, աղաչեց նորան հեռանալ պատերազմէն և հետը առնելով իւր դունդը, դնալ յարձակվել արեելեան կողմից, մինչ ինքը և Վելները կրկնապատիկ սաստկացնելով պատերազմը, թոյլ չեն տալ թշնամեաց նկատել Մելքթալի փոփոխական շարժումը.

Վելքթալը հնազանդեց : Վիլհելմը և Վերները նորէն նշան տուան պատերազմի և սաստկագոյն ևս աղաղակ բարձրացրին : Ատնեմը և նորա անձնապահ զօրքը զարհուրեցան . Ատնեմը ժողովեց Վիլհելմի դէմ բոլոր իւր զօրութիւնը : Եյդ միջոցում, Վելքթալը փայլակնանման արագութիւնով եկաւ հասաւ պարսպի արեւելեան դուռը՝ որ պահպանվումէր սակաւաթիւ զօրքով, բաղիսեց իւր տապարով, բայց երկբայելով թէ՝ մի գուցէ երկարի պատերազմը և թշնամեաց մեծագոյն մասի ուշը դարձուցանէ դէպի ինքը, հրամայեց կրակ դնել դրան տակը, որ և իսկոյն սկսեց այրվել . Վելքթալը և Անթերվարդցիք կրակի միջով անցան և այլ ոչինչ չընդդիմացաւ նոցա . ոմանք փախչում էին, ոմանք սատակում . Ատնեմը՝ որ Վիլհելմի դէմ էր պատերազմում, լսեց փախչողների գուժարեր աղաղակը և յաղթականների ուրախութեան գոչիւնը, նա կամեցաւ գնալ սոցա առաջը և այն ինչ դարձրուց իւր երեսը, Վելքթալը նորա առաջեւ կանգնած էր . Վելքթալը սրնթաց իբրեւ կայծակ յարձակվաւ նորա վերայ և մի հարուածովը իւր տապարի երկու մասն բաժանեց նորա ատելի երեսը, յառաջ գնաց անդէն դէպի ամրոցի ժայռերը, տարածեց ձեռները և բարձրածայն իւրեանց յաղթութեան աւետիքը քարոզեց : Աւրիի դրօշը արդէն ծածանելով փայլում էր այդ սոսկալի ամրոցի վերայ : Վիլհելմը, Վելքթալը և Վերները կանգնեցին կուտած մեռեների վերայ, ուղղեցին իւրեանց գոհութիւնը առ Եստուած՝ որ այդ ողորմութիւնը շնորհել էր նոցա , և նոյն ժամայն պատշաճաւոր խօսքով պատասխանեցին աղատված ժողովրդի ուրախածայն աղաղակին :

Ծտապով ժողովեցին պարսպի միջեց ամենայն մեռելութիքը, երեք նահանգների զօրքը շուրջ պատեցին իւրեանց գրւխաւորներին, Ելդորֆի բնակիչքը ամեն կողմից շտապելով եկան հրապարակը, իւրեանց աղատիչներին տեսանելոյ համար և

իւրեանց աղատութեան պահպանութիւնը նոցա հանձարին , նոցա քաջութեանը և նոցա քաղցրաձիր բնութեանը յանձնելոյ համար : Ա իւհեմը խնդրեց որ՝ ժամ մի լուռ մնան և ինքը այսպէս խօսեց նոցա հետ .


Քաղաքացիք , դուք այժմ աղատ էք , բայց՝ դուցէ այդ թանգարին աղատութիւնը պահպանելը առաւել դժուար լինի , քան յաղթութեամբ նորան ստանալը . մինի համար քաջութիւնը միայն բաւականէ , իսկ միւսի համար հարկաւոր են անաշառ , հաստատուն և անյողդողդ առաքինութիւններ : Բզ դուշացէք յաղթութեան յղփութենէն . զգուշացէք մանաւանդ մոլութեամբ պաշտել այն անձինքը՝ որք այդ յաղթութիւնը ձեզնով ստացել են : Դռոք կ'ասէք արդէն թէ՝ կամիք մեզ ձեր գլխաւոր կարգել , մինչ բոլոր վարձատրութիւնը՝ որ ես պահանջում եմ իմ աշխատանաց համար և որ 'ի սրտէ ցանկանում եմ , ոչ այլ ինչ է , եթէ ոչ՝ լինել զինուոր և մասնել այն հաւասարութեան մէջ , որ հասարակապետական հոգւոյ մաքուր և քաղցր գեղեցկութիւնն է : Հասարակապետութեան մէջ , սիրելիք , մեք ամենքս օգտակար ենք . վայ այն մարդին՝ որ իւր համար անհրաժեշտ կարևորութեան կարծիք կ'ունենայ և վայ այն ազգին՝ որ պատրաստ չէ պատժել այդպիսի կարծիքը : Ճողովվեցէք միասին և կշռեցէք խոհեմութեամբ թէ ձեր օգուտը և թէ ձեր նոր մտադրութիւնները . թող ամեն մարդ իրաւունք ունենայ համաձայն օրինաց խորհել , յայտնել և առաջարկել , որինչ օգուտ է համարում իւր հայրենեաց համար . այդ աղատութիւնը պիտի ունենայ ամենայն մարդ՝ որ արդէն քսանամեայ հասակ ունի : Ավ սիրում է իւր հայրենիքը , նա ունի իրաւունք պարապել նորա համար , նորան հատուցանել թէ իւր կարողութեան և թէ իւր լուսաւորութեան տուրքը : Կշանակեցէք մի քաղաքապետ . այդ հինք և մեր նախնիքէն պատուված անունը թող աւելի ևս պատուվի մեզանէ :

Խորհրդոյ ատեանը պիտի ուղղէ սորա կառավարութիւնը և սա ինքը պարտաւոր է պահպանիլ այն ատեանը։ Օրէնք հաստատեցէք, որովհետեւ առանց օրինաց չկայ կառավարութիւն և նոյն իսկ ազատութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ դերի լինել իմաստուն օրինաց։ Պահպանիցէք ձեր բարքը, թող լինին նոքա առաւել ևս խիստ և անաշառ։ առանց առաքինութեան անհնարին է ազատութիւնը։ Ասարածկապետական անձը իւր կոչումով կարգված է հրեշտակների և մարդկանց մէջ։ Նա պիտի լինի առաւել բարի, առաւել վեհանձն, քան այլ մարդիկ՝ ուրովք շուրջ պատված է։

Խսկ որ ինչ ինձ համար է, քաղաքացիք, ես ցանկանում եմ, խնդրում եմ և ընդունելու եմ միայն ձեր եղբայրութեան անունը, միայն իրաւունքը՝ որով կարող եմ ձեզ հետ միասին պատերազմել։ Ապասէք նոր նոր կոխւների։ կայսրը ջանք կ'անէ կրկին ստանալ այն իշխանութիւնը մեր վերայ, որ ահա խորտակեցինք։ ապաւինեցէք Եստուծոյ և ձեր բազուկներին։ Արաւիրեցէք դէպի ազատութիւնը Նելուետիայի այլ նահանգները։ Ես աներկբայ եմ որ՝ նոքա համախոհ կ'լինին ձեզ հետ։ այն ժամանակ՝ աշխատանաց, առաքինութեան և արիութեան օգնութեամբ դուք կ'հաստատէք մի այնպիսի հասարակապետութիւն՝ որ նախանձելի և ահարեր կ'լինի բոլոր Եւրոպային։ այն ժամանակ թաղաւորներ հետամուտ կ'լինին որ՝ ձեզ իւրեանց դաշնակից ունենան և աննուածելի կ'համարին իւրեանց, մինչ Նելուետիացիք նոցա պաշտպան կ'կոչվին։ այն ժամանակ՝ դուք կ'վայելէք քաջութեան և խմաստութեան փառքը, բայց այնու ամենայնիւ նախամեծար կ'համարէք ազատութեան և երջանկութեան փառքը։

Ա իլհելմը վերջացրուց իւր խօսքը և խուռն բազմութիւնը ծափահարութեամբ և աղաղակով իւր ուրախութիւնը օդի մէջ ընդարձակեց։ Խսկոյն սորանից յետ ժողովուրդը ա-

տեսակաների ընտրութիւնը կարգադրեց։ Ա, իւհեմը, Մելք-
թալը և Աներները մնալով հասարակ քաղաքացւոց կարգում,
իւրեանց վարձաարութեան համար, կազնեայ թագերով պատկ-
վեցան։ Նոքա մտան և խառնվեցան այն ժողովրդի մէջ, որ եր-
կու հարիւր տարի դիմակաց լինելով Եւստրիայի բոլոր ջանքին,
յաղթութեանց վերայ հիմնեց վերջապէս իւր ազատութիւնը։



2605

2013

